ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011

Լիահոնա

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ. ԵՎՍ ՄԵԿ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ



Աստծո զորությամբ և պարգևով, Սայմոն Դեվյու

Մորմոնի Գիրքը, որն աշխարհ է եկել Մարգարե Ջոզեֆ Սմիթի օգնությամբ, հնադարյան թիթեղների տեքստի թարգմանություն է, «գրված պատվիրանի ձևով և նաև մարգարեության ու հայտնության ոգով,– գրված և կնքված և պահ տրված Տիրոջը, որպեսզի չոչնչացվի,– ի հայտ պիտի գա Աստծո զորությամբ ու պարգևով թարգմանվելով. . .

. . . Որը պետք է ցույց տա Իսրայելի տան մնացորդին, թե ինչպիսի մեծ բաներ է Տերն արել նրանց հայրերի համար. և որպեսզի նրանք կարողանան իմանալ Տիրոջ ուխտերը, որ նրանք փոարված չեն հավիտյան,– և նաև, որպեսզի համոզի հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է» (Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ):

Լիահոնա, Հոկտեմբեր 2011

4

46

ՈՒՂԵՐՁՆԵՐ

4 **Առաջին Նախագահության Ուղերձ: Մորմոնի Գրքի թանկագին խոստումները**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

46 **ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁ: Եթե մենք չկասկածենք**

ՇԱՊԿԻ ՎՐԱ
Առջևում. Լուսանկարը Ջոն Լյուքի կողմից; *Որ դուք իմանաք*, Գարի Քափ, տրամադրել են Պարոն և Տիկին Դեյվիդ Լարսեն-ները, չբազմացնել: Ետևում *Քրիստոսի պատկերը*, Հենրիխ Հոֆման, տրամադրել է C. Harrison Conroy Co.

Բարի գալուստ այս հատուկ համար

Քիչ թեմաներ կան, որոնց կարելի է նվիրել ամբողջ համարը, և Մորմոնի Գիրքը այդ թեմաներից մեկն է: Այս համարում անցյալի և ներկայի մարգարեները, ինչպես նաև ամբողջ աշխարհում անդամները, վկայում են սուրբ գրվածքների այս առանձնահատուկ գրքի մասին: Դրա ծագումը հրաշալի է: Դա Վերականգնման շոշափելի ապացույց է: Դա մեր կրոնի պորտաքարն է: Եվ այն գրվել է մեր օրերի համար, ուսուցանելով Քրիստոսի վարդապետությունը պարզ և հասարակ ձևով, և այպիսով կառուցելով մեր հավատքը և ամրացնելով մեր ընտանիքներին:

Թեև դուք չեք գտնի շատ բաժիններ, որոնք սովոր եք տեսնելու *Լիահոնայում*, Առաջին Նախագահության Ուղերձը (էջ 4) և Այցելող Ուսուցիչների Ուղերձը (էջ 46) այստեղ են: Այս ուղերձները և մնացած բոլոր հոդվածները Մորմոնի Գրքի մասին վկայություն են տալիս և ուսուցանում այդ գրքի ուսմունքներից:

Մենք ձեզ հրավիրում ենք աղոթքով ուսումնասիրել այս համարը, սրտում խորհել ուղերձների մասին և կիսվել դրանցով և Մորմոնի Գրքով մյուսների հետ:

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

6 Մարգարե Ջոզեֆ Սմիթ՝ Մորմոնի Գրքի թարգմանիչ
Չկրթված երիտասարդը Աստծո զորությամբ դարձավ «երկրի վրա … առավել ճիշտ գրքի» ոգեշնչված թարգմանիչը:

10 Ինչ է ուսուցանում Մորմոնի Գիրքը Աստծո սիրո մասին
Երեց Ռասսել Մ. Նելսոն
Դուք ցանկանո՞ւմ եք հոգեպես վերածնվել և ստանալ սիրելու այնպիսի զորություն, ինչպես Աստված է սիրում: Մորմոնի Գիրքը բացատրում է, թե ինչպես կարող եք դա անել:

16 Մորմոնի Գրքի պատմությունը
Այս հոդվածը կարող է օգնել ձեզ ուսուցանել ձեր երեխաներին այս սուրբ գրքից կարևոր պատմություններ:

20 Մորմոնի Գրքի ժամանակագիծը
Կարևոր մարդկանց տեսողական ակնարկ՝ սկսած հարեղացիներից՝ Ք.ծ.ա. 2200 թ. մինչև Նեփիացիների քաղաքակրթությունը՝ .Ք.ծ.հ. 420թ.:

22 Ո՞վ է գրել Մորմոնի Գիրքը
Հին ժամանակների մարգարեների աշխատանքը ոգեշնչված կազմողի և վերջին օրերի թարգմանչի միջոցով դարձավ Մորմոնի Գիրքը:

24 Մորմոնի Գիրք՝ վկայություն Աստվածաշնչի հետ մեկտեղ
Սիա 14 հիմնարար վարդապետություններ, որոնք ուսուցանվում են Աստվածաշնչում, որոնց համար Մորմոնի Գիրքը լրացուցիչ վկայություն է տալիս:

28 Ինչպես ուսումնասիրել Մորմոնի Գիրքը
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Երեք պատճառ և երեք եղանակ սուրբ գրությունների այս յուրահատուկ գիրքն ուսումնասիրելու համար:

32 Լեքիի երազը՝ ամուր բռնվել ձողից
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Լեքիի երազը մեզ ուսուցանում է, թե ինչպես պետք է ամուր կառչել Աստծո խոսքից:

38 Մորմոնի Գիրք՝ ամրացնել մեր հավատքը առ Հիսուս Քրիստոս
Երեց Նիլ Լ. Անդերսեն
Մորմոնի Գիրքը հրավիրում է մեզ և մեր ընտանիքներին շրջապատել մեզ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով, որը կօգնի մեր ընտանիքներին հաջողակ լինել:

47 Երգ: Երկու հազար քաջ մարտիկ
Բոննի Հարթ Մյուրեյ
և Ջենիս Քափ Փերի

48 Մեր օրերի ուսմունքները
Ապրող մարգարեները և առաքյալները կիսվում են ճշմարտություններով Մորմոնի Գրքից, որոնք կարող են առաջնորդել մեզ այսօր:

52 Մորմոնի Գիրք՝ մեր կրոնի պորտաքար
Նախագահ Էզրա Թավթ Բենսոն
Այս դասական ելույթը, որը հրվել է 25 տարի առաջ, պարունակում է հավերժական վկայություն և խորհուրդ՝ Մորմոնի Գրքի վերաբերյալ:

59 Սուրբ աշխատանք
Դեյվիդ Ա. Ֆեյց
Մի հասարակ արարք ինձ սովորեցրեց Մորմոնի Գրքի սրբության հանդեպ հարգանք տածելու մասին:

60 Եթե դուք իսկապես ուզում եք իմանալ, դուք կիմանաք
Երեց Վոլթեր Ֆ. Գոնզալես
Չորս եղանակ՝ իմանալու համար, որ Մորմոնի Գիրքը ոգեշնչված է Աստծո կողմից:

65 Պաստառ: Ձայն փոշու միջից

66 Իմ մեջ այրվող կրակը
Մայքլ Ռ. Մորիս
Այն օրը, երբ Էդուարդո Կոնտրերասը սովորեց կարդալ, նաև այն օրը դարձավ, երբ Էդուարդոն վկայություն ստացավ Մորմոնի Գրքի և դրա զորության մասին:

68 Ինչպես Մորմոնի Գիրքը փոխեց իմ կյանքը
Անդամները վկայում են այն մասին, թե ինչպես է Մորմոնի Գիրքը օգնել իրենց գտնել պատասխաններ, մխիթարություն և դարձի գալ:

72 Ամեն լեզվի և ժողովրդի
Լիա Մակքլանահան
Ողջ աշխարհում Վերջին Օրերի Սրբերի համար ոչինչ չի կարող համեմատվել Մորմոնի Գիրքն իրենց մայրենի լեզվով ունենալու հետ:

76 Մորմոնի Գրքի մասին հաճախ տրվող հարցեր
Պարզ պատասխաններ հարցերին, որոնք մարդիկ տալիս են Մորմոնի Գրքի մասին:

80 Վկայություն, ուխտ և վկա
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Ես վկայում եմ այս գրքի մասին այնպիսի վստահությամբ, կարծես, Երեք Վկաների հետ միասին տեսել եմ Մորմոնի հրեշտակին, կամ՝ Ոգի Վկաների հետ իմ ձեռքում բռնել եմ ոսկե թիթեղները:

Այս համարում շատ նկարների վրա պատկերված է Լիահոնան, որը ստացավ Լեքին: Լիահոնաները թաքնված չեն և կարող են տարբերվել վերը պատկերվածից, սակայն ձեր և ձեր ընտանիքի համար կարող է հետաքրքիր լինել հաշվել այն բոլոր Լիահոնաների թիվը, որոնք կարող եք գտնել այս համարում:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՀԱՏ. 12 Հ. 3
ԼԻԱՀՈՆԱ 09690 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիրթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Փոլ Բ. Փիփեր
Խորհրդատուներ. Քեյթ Ռ. Էդվարդս, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Փեր Գ. Մալմ

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխթ
Խմբագրական տնօրեն. Վինսենթ Ա. Վոն
Գրաֆիկայի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնականներ. Ջենիֆեր Լ. Գրինվուդ, Ադամ Ս. Օլսոն
Համախմբագրեր. Սյուզան Բարթեթ, Ռայան Քար
Խմբագրական կազմ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լառեն Պորտեր Գանտ, Լարի Հիլեր, Քերի Կաստեն, Ջենիֆեր Մեդի, Լիա Մակքանահան, Մելիսա Մերիլ, Մայքլ Ռ. Մորիս, Սալի Ջ. Օդեկիրկ, Ջոշուա Ջ. Թերկի, Հադ Ե. Փարես, Յան Փինբորոու, Ջանեթ Թոմաս, Փոլ Վանդենբերգ, Մարիսա Ա. Վիդիսոն, Մելիսսա Զենտենո

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի գծով տնօրեն. Սքոթ Վան Քեմփեն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Գլխավոր դիզայներներ. Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Ս. Հայլդ, Քուին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սքոթ Մ. Մույ
Հրատարակչության կազմ. Քուլեթ Նեբեկեր Օն, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Ռեջինալդ Ջ. Քրիսչեսեն, Կիմ Ֆենսթերմեյքեր, Քեթլին Հովարդ, Դենիս Քըրբի, Ջինի Ջ. Նիլսոն, Թայ Փիլչեր
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերն ու հարցերն ուղարկեք հետևյալ հասցեով. *Liahona*, Room 2420, 50 East North Temple Street, Salt Lake City, UT 84150-0024, USA; կամ էլ-փոստով. liahona@ldschurch.org.

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: October 2011 Vol. 12 No. 3. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ թանկագին խոստումները

Շատ տարիներ առաջ ես կանգնած էի մահվան և կյանքի միջև գտնվող մի երիտասարդ հոր անկողնու կողքին: Նրա վշտահար կինը և նրանց երկու երեխաները կանգնած էին կողքին: Նա վերցրեց իմ ձեռքն իր ձեռքի մեջ և աղաչանքով ասաց. «Եպիսկոպոս, ես գիտեմ, որ մահանում եմ: Ասա ինձ, ինչ կպատահի իմ հոգու հետ, երբ մահանամ»:

Ես լուռ աղոթեցի երկնային առաջնորդության համար և նկատեցի նրա մահճակալի սեղանիկին եռահատորի մի օրինակ: Ձեռքս մեկնեցի գրքին և թերթեցի էջերը: Հանկարծակի, առանց որևէ ջանքի իմ կողմից, կանգ առա Մորմոնի Գրքի Ալմայի գլուխ 40-ի վրա: Ես կարդացի նրան այդ խոսքերը.

«Ահա, ինձ համար հայտնի դարձվեց հրեշտակի կողմից, որ բոլոր մարդկանց հոգիները, հենց որ նրանք հեռանում են այս մահկանացու մարմնից, . . . տարվում են տուն՝ այն Աստծո մոտ, որը նրանց կյանք էր տվել:

Եվ . . . նրանց հոգիները, ովքեր արդար են, ընդունվում են երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ՝ հանգստության մի վիճակ, խաղաղության մի վիճակ, որտեղ նրանք պիտի հանգստանան բոլոր իրենց տագնապներից և բոլոր մտահոգություններից, և վշտից» (Ալմա 40.11–12):

Երբ ես կարդում էի Հարության մասին, երիտասարդ տղամարդու դեմքին փայլ հայտնվեց և ժպիտը զարդարեց նրա շուրթերը: Ավարտելով իմ այցը, ես հրաժեշտ տվեցի նրա հրաշալի ընտանիքին:

Նրա կնոջը և երեխաներին ես հանդիպեցի թաղմանը: Ես մտածեցի այն երեկոյի մասին, երբ երիտասարդը աղերսեց ճշմարտությունն իմանալու համար, և, թե ինչպես Մորմոնի Գրքից լսեց իր հարցի պատասխանը:

Մորմոնի Գրքում տրվում են այլ թանկագին խոստումներ ևս, ներառյալ՝ խաղաղության, ազատության և օրհնությունների խոստումները, եթե մենք միայն «ծառայենք երկրի Աստծուն, որը Հիսուս Քրիստոսն է» (Եթեր 2.12):

Այդ գրքի էջերից է գալիս «երբեք չվերջացող երջանկության» խոստումը նրանց, «ովքեր պահում են Աստծո պատվիրանները: Քանզի, ահա, նրանք օրհնված են բոլոր բաներում՝ և աշխարհիկ, և հոգևոր» (Մոսիա 2.41):

Դրա էջերից է գալիս «անըմռնելի ուրախության» խոստումը նրանց, ովքեր դառնում են «Աստծո ձեռքում գործիք»՝ Նրա թանկագին որդիներին և դուստրերին փրկելու համար (Ալմա 28.8; 29.9):

Դրա էջերից է գալիս խոստումը, որ Իսրայելը կհավաքվի. այդ աշխատանքի մեջ ենք մենք ընդգրկված համաշխարհային մեր միսիոներական ջանքերի շնորհիվ (տես 3 Նեփի 16; 21–22):

Դրա էջերից է գալիս խոստումը, որ, եթե մենք աղոթենք Հորը Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, մեր ընտանիքները կօրհնվեն (տես 3 Նեփի 18.21):

Դրա էջերի ուսումնասիրությունից է գալիս մարգարեական խոստման իրականացումը, որ «ձեր կյանքերն ու ձեր տները կմտնի Տիրոջ Հոգու ավելի մեծ բաժին, աննկուն վճռականություն՝ քայլելու Նրա պատվիրաններին հնազանդ և ավելի զորեղ վկայություն՝ Աստծո կենդանի Որդու իրականության մասին»:[1]

Եվ Մորմոնի գրքի էջերից է գալիս Մորոնիի խոստումը, որ աղոթքի միջոցով, անկեղծ ցանկությամբ և Քրիստոսի հանդեպ հավատքով մենք կարող ենք իմանալ այդ խոստումների ճշմարտությունը՝ «Սուրբ Հոգու զորությամբ» (տես Մորոնի 10.4–5):

Վերջին օրերի մյուս մարգարեների հետ միասին,

ես վկայում եմ երկրի երեսին այս առավել ճիշտ գրքի՝[2] Մորմոնի Գրքի, Հիսուս Քրիստոսի մասին ևս մի վկայության ճշմարտացիության մասին: Այդ ուղերձը հասնում է երկրի բոլոր ծայրերին և իր ընթերցողներին պարգևում ճշմարտության մասին գիտելիք: Իմ վկայությունն է, որ Մորմոնի Գիրքը փոխում է կյանքեր: Թող մեզանից յուրաքանչյուրը կրկին ու կրկին կարդա այն: Եվ թող մենք ուրախությամբ կիսվենք դրա թանկագին խոստումների մասին մեր վկայություններով՝ Աստծո բոլոր զավակների հետ: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Gordon B. Hinckley, “A Testimony Vibrant and True,” *Liahona,* Aug. 2005, 6.
2. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 64:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Սուրբ գրություններում «մենք գտնում ենք ճշմարտության սկզբունքները, որոնք կարող են վերացնել ցանկացած շփոթություն, ցանկացած դժվարություն և ցանկացած խնդիր, որի առջև կանգնում է մարդու ընտանիքը» (*Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* [1999], 51): Ձեր ընտանիքի հետ կիսվելով Նախագահ Մոնսոնի ուղերձով, հրավիրեք նրանց լսել այն «թանկագին խոստումների» մասին, որոնք նա առանձնացնում է Մորմոնի Գրքում: Դուք կարող եք կիսվել Մորմոնի Գրքից ձեզ համար մեծ նշանակություն ունեցող խոստումով:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՍՄԻԹԻ ԿՐՈՒՄԻՑ

Մարգարե Ջոզեֆ Սմիթ՝

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Մորմոնի Գիրքը սուրբ գրվածքների առանձնահատուկ գիրք է: Թեև այն գրել են հին ժամանակների մարգարեները, այն չտրվեց մեզ, ինչպես Աստվածաշունչը: Աստվածաշունչը հիմնականում գրվել է Հին Աշխարհում մագաղաթների գալարների վրա՝ որպես առանձին գրքեր, և դարերի ընթացքում արտագրվել է դպիրների կողմից: Հիսուս Քրիստոսից հետո միայն չորրորդ դարում այդ առանձին գրքերը միացվեցին և դարձան մեկ հատոր, որը մենք կոչում ենք Սուրբ Աստվածաշունչ:

Ի տարբերություն դրան, Մորմոնի Գիրքը գրվել է Նոր Աշխարհում հին մարգարեների կողմից՝ մետաղե թիթեղների վրա, Ք.հ. հինգերորդ դարում կրճատվել է հիմնականում մեկ մարգարե՝ Մորմոնի կողմից (այստեղից է ծագում գրքի վերնագիրը), դառնալով մեկ գրառում՝ ոսկե թիթեղների վրա: Նրա որդի Մորոնին հետագայում թաղեց թիթեղները, և միայն 1827թ. Մորոնին՝ որպես հարություն առած էակ, տվեց դրանք Ջոզեֆ Սմիթ անունով մի պատանու:

Ստորև տրվում է պատմությունն այն մասին, ինչպես Ջոզեֆը ստացավ, թարգմանեց և տպագրեց գրառումները, որոնք այժմ վերնագրված են որպես Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին: Փրկիչն Ինքն է վկայել, որ գիրքը ճշմարիտ է (տես ՎևՈւ 17.6):

1. 1820թ. Ջոզեֆ Սմիթ անունով 14-ամյա մի տղա էր ապրում Պալմիրայի շրջակայքում, Նյու Յորք: Թեև երիտասարդ էր, նա մտահոգված էր, թե ով էր նա Աստծո առաջ, և շփոթված՝ քրիստոնեական տարբեր կրոնների հայտարարություններով, որոնք նորադարձներ էին որոնում, հերքելով միմյանց հայտարարությունները: Խրախուսվելով Աստվածաշնչի իր ուսումնասիրությամբ, Ջոզեֆը որոշեց իմաստություն փնտրել, հարցնելով Աստծուն, որ «ամենին տալիս է առատությամբ և չէ նախատում» (Հակոբոս Ա.5): Նա գնաց իր տան մոտ գտնվող պուրակը՝ աղոթելու:

2. Երբ Ջոզեֆը ծնկի իջավ և աղոթեց, լույսի մի պայծառ սյուն իջավ նրա վրա: Սյունի մեջ նա տեսավ երկու էակների: Երկնային Հայրը խոսեց և ասաց. «Սա է Իմ Սիրելի Որդին: Լսիր Նրան» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17): Տերը Ջոզեֆին ասաց չմիանալ եկեղեցիներից որևէ մեկին, որովհետև դրանցից ոչ մեկը ճշմարիտ չէր, սակայն նրան խոստացվեց, որ ավետարանի լրիվությունը ապագայում հայտնի կդարձվի իրեն:[1]

3. Անցավ երեք տարի, որոնց ընթացքում Ջոզեֆ Սմիթը կիսվեց իր փորձառությամբ ուրիշների հետ և հալածվեց դրա համար: Նա գրեց. «Չնայած ինձ ատում և հալածում էին այն բանի համար, որ ասում էի, թե տեսիլք եմ տեսել, այնուամենայնիվ, դա ճշմարիտ էր. և . . . ես դրդվում էի ասելու իմ սրտում. Ինչո՞ւ եք ինձ հալածում ճշմարտությունն ասելու համար: Ես իսկապես տեսիլք եմ տեսել. և ո՞վ եմ ես, որ դեմ կանգնեմ Աստծուն, կամ ինչո՞ւ է աշխարհը մտադրված՝ ստիպելու ինձ ուրանալ այն, ինչ իրականում տեսել եմ: Քանզի, ես տեսել էի տեսիլք. ես գիտեի դա և գիտեի, որ Աստված գիտի դա, և չէի կարող ուրանալ» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.25):

ՀՈԿԵԻ. ԵՐԳԻՑՎՈՂ ՋՈԶԵՖ, ԸՆԴԱՐՁԱԿ ԱՐԻՆ ԻՆՉՈՒ © 1998; ՋՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ © 1975 IRI;
ՋՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՍՈՒՆԿԻՆ ՀԵՏԻՆԵՐԸ, ՋՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԵԼ ՕՈՒՆԸ, ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆԸ, ՋՈԶԵՖ ՍՄԻԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՀԱՅՏ ԼՈՒՍԱՆԿԱՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ © IRI

1830 թվից ի վեր միլիոնավոր մարդիկ կարդացել են Մորմոնի Գիրքը և միացել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն, քանի որ Մորմոնի Գիրքը վկայում է Փրկչի մասին: Գիրքը նաև ապացույց է, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարե էր և որ Փրկիչը ղեկավարում է Իր Եկեղեցին այսօր: Միլիոնավոր մարդիկ փորձել են և գտել Մորոնիի ճշմարիտ խոստումը

4. 1823թ. սեպտեմբերի 21-ին Ջոզեֆն աղոթում էր, երբ լույսը պատեց նրա վերնահարկի ննջասենյակը և հայտնվեց Մորոնի անունով հրեշտակը: Մորոնին Ջոզեֆին պատմեց հին մարգարեների գրվածքների մասին: Գրվածքները, որոնք փորագրված էին ոսկե թիթեղների վրա, թաղված էին մոտակա բլրում: Ջոզեֆին ասվեց, որ նա պետք է թարգմաներ գրվածքները:

5. Վերջապես, 1827թ. սեպտեմբերի 22-ին, Ջոզեֆին վստահվեցին թիթեղները, որոնք նա հանեց քարե արկղի միջից, որը թաղված էր մի մեծ քարի տակ մի բլրում՝ Պալմիրայի մոտերքում, Նյու Յորք:

6. Ինչպես այդ ժամանակներին տարածված էր գյուղական շրջաններում, Ջոզեֆ Սմիթը ամենևին կրթված չէր: Թարգմանության հարցում նրան օգնելու համար Աստված տվեց նրան թարգմանչական հնադարյան գործիք, որը կոչվում էր Ուրիմ և Թումիմ: Նա նաև օրհնված էր, ունենալով դպիրներ, որոնք գրում էին այն, ինչ նա թելադրում էր թարգմանելիս: Այդ դպիրներից էին՝ նրա կին Էմման, հարուստ ագարակատեր Մարտին Հարրիսը, և դպրոցի ուսուցիչ Օլիվեր Քաուդերին: Թարգմանության մեծ մասը ավարտվեց երեք ամիսների ընթացքում, նրանից հետո, երբ Օլիվերը սկսեց ծառայել որպես դպիր:

Էմման նկարագրում էր, թե ինչ էր նշանակում լինել Ջոզեֆի դպիրը. «Ոչ մի մարդ չէր կարող թելադրել ձեռագրերի գրվածքները, եթե ոգեշնչված չլիներ,

ճշմարտության բոլոր անկեղծ փնտրողներին. «Ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ» (Մորոնի 10.4):

քանզի, երբ ես ծառայում էի որպես նրա դպիր, Ջոզեֆը թելադրում էր ինձ ժամը ժամի ետևից, և ճաշելուց կամ ընդմիջումներից հետո նա անմիջապես սկսում էր այն տեղից, որտեղ կանգ էր առել, անգամ առանց տեսնելու ձեռագիրը կամ լսելու որևէ մեկին այն կարդալիս»:[2]

Ջոզեֆը բացատրեց Մորմոնի Գրքի աշխարհ գալու նշանակությունը. «Աստծո զորությամբ ես թարգմանեցի Մորմոնի Գիրքը հիերոգլիֆներից, որոնց մասին գիտելիքը կորցված էր աշխարհում, և այդ հրաշալի գործում ես՝ չկրթված մի պատանի, նոր հայտնությամբ միայնակ դեմ առ դեմ կանգնեցի աշխարհի իմաստությանը և տասնութ դարերի բազմապատիկ արհամարանքին»:[3]

7. 18 ամիսների ընթացքում, երբ թիթեղները նրա մոտ էին, Ջոզեֆը միակը չէր, ով տեսել կամ ձեռքում պահել էր դրանք: Երեք տղամարդ՝ Օլիվեր Քաուդերին, Դեյվիդ Ուիթմերը և Մարտին Հարրիսը պաշտոնապես վկայեցին, որ Մորոնի հրեշտակը ցույց է տվել իրենց ոսկե թիթեղները, և որ իրենք գիտեին, որ թիթեղները «թարգմանվել են Աստծո զորությամբ ու պարգևով, քանի որ նրա ձայնը հայտնեց մեզ դա»: Ութ այլ տղամարդ նույնպես վկայեցին, որ տեսել և իրենց ձեռքում պահել են ոսկե թիթեղները:[4]

8. 1829թ. օգոստոսին, Ջոզեֆը պայմանագիր կապեց հրատակիչ Էգբերտ Բ. Գրենդինի հետ՝ Պալմիրայից, Նյու Յորք, հատորը տպագրելու համար: Մարտին Հարրիսը գրավ դրեց իր ագարակը՝ գրքի տպագրության ծախսերը հոգալու համար, և 1830թ. մարտի 26-ին Մորմոնի Գիրքը հանվեց վաճառքի:

9. 1830թ. ապրիլի 6-ին, թվով մոտ 60 հոգի հավաքվեցին փայտե տնակում՝ Ֆայեթում, Նյու Յորք: Այնտեղ, Տեր Հիսուս Քրիստոսի ղեկավարությամբ, Ջոզեֆ Սմիթը պաշտոնապես կազմավորեց Փրկչի Եկեղեցին, որը վերականգնվեց իր սկզբնական կառուցվածքով, ղեկավարվելով մարգարեների և առաքյալների կողմից, լիազորված լինելով խոսել Աստծո կողմից: Ջոզեֆ Սմիթին ավելի ուշ տրված հայտնության մեջ Եկեղեցին ստացավ իր անվանումը՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի (տես ՎևՈւ 115.4):

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Joseph Smith, in *History of the Church,* 4:536:
2. Interview with Emma Smith by Joseph Smith III, Feb. 1879, in *Saints' Herald,* Oct. 1, 1879, 290.
3. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 60:
4. Տես «Երեք վկաների վկայությունը» և «Ութ վկաների վկայությունը» Մորմոնի Գրքի նախաբանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՈՐՄՈՆ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ է ՕՐԵՏՏԱ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ. © 2003 IRI; ՕՐԵՏՏԱ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ, ՍԵՌՅԻՆ ՊԵՏԵՐ © IRI; ՕՐԵՏՏԱ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ, ՍԵՌՅԻՆ ՊԵՏԵՐ © IRI; ՕՐԵՏՏԱ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ, ՍԵՌՅԻՆ ՊԵՏԵՐ © IRI; ՕՐԵՏՏԱ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ, ՍԵՌՅԻՆ ՊԵՏԵՐ © IRI; ՕՐԵՏՏԱ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ © IRI;
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ. © 1986; ԼՈՒՍԱՆԿԱՐ ԳՐՈՒՄՆԵՐ © IRI; ՕՐԵՏՏԱ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ © IRI

Երեց
Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների
Քվորումից

ԻՆՉ Է ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ

ԱՍՏՈ

ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Տիրոջ սիրո առավել ոգեշնչող օրինակներից մի քանիսը գտնվում են Մորմոնի Գրքում:

Քրիստոնյաների մեծ մասը ծանոթ են Հիսուս Քրիստոսի հատկանիշներին, որոնք գրի են առված Աստվածաշնչում: Նրանք հիանում են այն սիրով, որը Նա ցուցաբերում է աղքատների, հիվանդների և ճնշվածների հանդեպ: Նրանք, ովքեր իրենց համարում են Իր աշակերտները, նույնպես աշխատում են հետևել Նրա օրինակին և Նրա սիրելի Առաքյալի կոչին. «Իրար սիրենք, որ սերն Աստուածանից է. և ամեն ով որ սիրում է Աստուծանից է ծնուած, և ճանաչում է Աստծուն, . . . որովհետև Աստուած սեր է» (Ա Հովհաննես Դ.7–8):

Այս գաղափարը պարզաբանվում է Մորմոնի Գրքում: Այն նկարագրում է, թե *ինչպես* է մարդը ծնվում Աստծուց և *ինչպես* է ստանում սիրո զորությունը, որը Նա ունի: Այն առանձնացնում է երեք հիմնական սկզբունք, որոնք Աստծո սիրո զորությունը բերում են մեր կյանք:

Առաջինը, Մորմոնի Գիրքը ուսուցանում է, որ Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելը և Նրա հետ՝ Նրա պատվիրանները պահելու *ուխտի* մեջ մտնելը՝ հոգևոր վերածննդի հիմնական պայմանն է: Այդպիսի ուխտի մեջ մտած մարդկանց՝ Մորմոնի Գրքից, Բենիամին Թագավորն ասել է. «Եվ այժմ, ուխտի շնորհիվ, որ դուք արել եք, դուք կկոչվեք Քրիստոսի զավակներ՝ նրա որդիներն ու նրա դուստրերը, քանզի ահա, այս օրը նա հոգով ծնեց ձեզ. քանզի դուք ասում եք, որ ձեր սրտերը փոխվել են նրա անվան հանդեպ հավատքի միջոցով. հետևաբար, դուք ծնվել եք նրանից և դարձել եք նրա որդիներն ու նրա դուստրերը» (Մոսիա 5.7):

Երկրորդ, Փրկիչն Ինքն է ուսուցանում, որ Իր նման դառնալու զորությունը գալիս է ավետարանի *ծեսերը* ստանալու միջոցով. «Արդ այս է պատվիրանը. Ապաշխարեք, դուք, աշխարհի բոլոր ծայրեր, և եկեք ինձ մոտ ու մկրտվեք իմ անունով, որպեսզի դուք կարողանաք սրբագործվել՝ ընդունելով Սուրբ Հոգին, որպեսզի դուք

ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՅՏՆՎՈՒՄ Է ԱՐԵՎՍՏՅԱՆ ԿԻՍԱԳԻՏՈՒՄ, ՍՈՒՆՈՒՆ ՖՈՒՅԳԵԲԵՐԳ © 1995 IRI

կարողանաք կանգնել անբիծ իմ առջև վերջին օրը» (3 Նեփի 27.20):

Երրորդ, Նա մեզ հորդորում է *հետևել Իր օրինակին*. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել»: Նա պատասխան չպահանջող հարց է տալիս: Ապա պատասխանում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27): Իսկապես, Նա ցանկանում է, որ մենք դառնանք Իր նման:

Նրա սիրո առավել ոգեշնչող օրինակներից մի քանիսը գտնվում են Մորմոնի Գրքում: Այդ օրինակները կարող ենք կիրառել մեր կյանքում, ձգտելով ավելի նմանվել Տիրոջը:

Դա Լեքիի և նրա ընտանիքի հանդեպ սերն էր, ինչպես նաև նրանց սերը Նրա հանդեպ, որ օգնեց նրանց գալ Ամերիկաներ՝ իրենց խոստացված երկիրը, որտեղ նրանք բարգավաճեցին:[1]

Դա մեր հանդեպ Աստծո սերն էր, որ դարեր առաջ հուշեց Իրեն պատվիրել Նեփիացի մարգարեներին վարել իրենց ժողովրդի սուրբ գրառումները: Այդ գրառումների դասերը վերաբերում են մեր փրկությանը և վեհացմանը: Այդ ուսմունքները այսօր մատչելի են Մորմոնի Գրքում: Այդ սուրբ տեքստը հանդիսանում է ամբողջ աշխարհում Իր բոլոր զավակների հանդեպ Նրա սիրո շոշափելի վկայություն:[2]

Դա Քրիստոսի սերն էր Իր «մյուս ոչխարների» հանդեպ, որ բերեց Նրան Նոր Աշխարհ:[3] Մորմոնի Գրքից մենք սովորում ենք, որ բնական մեծագույն աղետները և երեք օրվա խավարը տեղի ունեցան Նոր Աշխարհում՝ Հին Աշխարհում Տիրոջ մահից հետո: Այնուհետև փառավորված և հարություն առած Տերը իջավ երկնքից և ծառայեց Նոր Աշխարհի մարդկանց:

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Մորմոնի Գիրքն առաջ է եկել Աստծո պարգևով և զորությամբ: Ինչպես ձայնը փոշու միջից, այն վկայում է Աստծո Որդու մասին: Այն պատմում է Նրա Ծննդի, Նրա Ծառայության, Նրա Խաչման և Հարության և արդարներին Նրա այցի մասին ամերիկյան մայր ցամաք՝ Բաունթիֆուլ երկիր:

Այն կարելի է շոշափել,բռնել, կարդալ, փորձարկել: Իր էջերում այն կրում է իր աստվածային ծագման վերաբերյալ խոստում: Միլիոնավոր մարդիկ մինչ այժմ փորձարկել են այն և հայտնաբերել, որ այն ճշմարիտ և սուրբ հիշատակարան է»:

President Gordon B. Hinckley (1910–2008), "The Great Things Which God Has Revealed," *Liahona,* May 2005, 81–82.

ԻՄԱՆԱԼԸ՝ ՍԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՆ Է

Ես նոր անդամ եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, և ինձ համար Մորմոնի Գիրքը պարզապես գիրք չէ: Այն ամուր ապացույցն է նրա, որ Երկնային Հայրը սիրում է մեզ: Այն ապացույց է նրա, որ վաղ ժամանակների սրբերը սիրում էին մեզ և ցանկանում, որ մենք գայինք տուն: Այն ապացույց է, որ Աստծո երջանկության ծրագիրը գոյություն ունի և կատարյալ է:

Իմանալը, որ այս գիրքը ճշմարիտ է, նշանակում է իմանալ, որ Երկնային Հայրը և Նրա Որդին ապրում են: Դա նշանակում է իմանալ, որ կյանքը սքանչելի է և հավերժական: Դա նշանակում է իմանալ, որ մինչ դուք շարունակում եք լինել, որքան հնարավոր է, լավը, և ապաշխարում եք, երբ սխալվում եք, դուք միշտ ներում կստանաք: Դա ընտանիքի իրական նշանակությունը իմանալն է: Դա իմանալն է, որ դուք երբեք չեք կորցնի ձեր սիրելի մարդուն, քանզի նա սպասում է ձեզ: Դա Երկնային Հոր օրհնությունները ճանաչելն է: Դա իմանալն է, որ ինչպիսի փոթորիկներ էլ մոլեգնեն ձեր ճանապարհին, դուք կարող եք դիմակայել դրանց, քանզի դրանք ձեր իսկ օգտի համար են: Դա իմանալն է, որ Սուրբ Հոգին ձեր մշտական ուղեկիցն է: Ըստ էության, դա սերը՝ իր բոլոր արտահայտումներով ճանաչելն է:

Էմմա Ադեսանյա, Իռլանդիա

«Ես եմ լույսն ու կյանքն աշխարհի, - ասաց Նա նրանց, - և ես խմեցի այն դառը բաժակից, որը Հայրը տվեց ինձ, և փառավորեցի Հորը՝ վերցնելով ինձ վրա աշխարհի մեղքերը» (3 Նեփի 11.11):

Ապա Նա պարգևեց առավել մտերմիկ փորձառությունը, և ցանկացած մարդ կարող էր ունենալ այդ փորձառությունը: Նա հրավիրեց նրանց զգալ Իր կողերի վերքը, Իր ձեռքերի և ոտքերի մեխերի տեղերը, որպեսզի նրանք հավաստիանային, որ Նա էր «Իսրայելի Աստվածը, և ամբողջ երկրագնդի Աստվածը, և սպանվել եմ աշխարհի մեղքերի համար» (3 Նեփի 11.14):

Այնուհետև Հիսուսը Իր աշակերտներին իշխանություն տվեց՝ մկրտելու, շնորհելու Սուրբ Հոգու պարգևը և սպասավորելու հաղորդությունը: Նա նրանց զորություն տվեց՝ հիմնելու Իր Եկեղեցին, որը պետք է ղեկավարվեր տասներկու աշակերտների կողմից:

Նա նրանց մատուցեց մի քանի հիմնարար ուսմունքներ, որոնք տվել էր Հին Աշխարհում Իր աշակերտներին: Նա բուժեց նրանց հիվանդներին: Նա ծնկի իջավ և աղոթեց Հորը այնպիսի զորեղ և սուրբ խոսքերով, որ դրանք չէին կարող գրի առնվել: Այնքան զորեղ էր Նրա աղոթքը, որ նրանք, ովքեր լսեցին Նրան, լցվեցին ուրախությամբ: Հիսուսը, լցվելով նրանց հանդեպ Իր սիրով և Իր հանդեպ նրանց հավատքով, լաց եղավ: Նա մարգարեացավ Աստծո աշխատանքի մասին դարեր հետո, որը պետք է տաներ դեպի Իր խոստացված Երկրորդ Գալուստը:[4]

Ապա Նա խնդրեց նրանց մոտ բերել իրենց երեխաներին:

«Եվ նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը:

Եվ երբ նա արեց այս, նա կրկին արտասվեց.

Փրկիչն Ինքն է ուսուցանում այն մասին, որ Իրեն նմանվելու զորությունը գալիս է ավետարանի ծեսերը ստանալու միջոցով:

Այնուհետև Նա խնդրեց նրանց Իր մոտ բերել իրենց երեխաներին: «Եվ նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, մեկ առ մեկ, և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը»:

Եվ նա խոսեց բազմության հետ, և ասաց նրանց. Նայեք ձեր փոքրիկներին:

«Եվ երբ նրանք նայեցին՝ տեսնելու համար, նրանք զցեցին իրենց աչքերը դեպի երկինք, և նրանք տեսան երկինքները բաց, և նրանք տեսան հրեշտակներ՝ իջնելիս երկնքից, կարծես թե կրակի մեջ էին. և նրանք իջան վար և օղակեցին այն փոքրիկների շուրջը, և նրանք, շուրջանակի, օղակված էին կրակով, և հրեշտակները սպասավորում էին նրանց (3 Նեփի 17.21–24):

Այսպիսին է Աստծո սիրո մաքրությունը և զորությունը, ինչպես հայտնված է Մորմոնի Գրքում:

Այս վերջին օրերում, մենք՝ ովքեր արտոնված ենք ունենալու Մորմոնի Գիրքը, լինելու Տիրոջ Եկեղեցու անդամները, ունենալու Նրա ավետարանը և պահելու Նրա պատվիրանները, գիտենք որոշ չափով Աստծո անսահման սիրո մասին: Մենք գիտենք, թե ինչպես Նրա սերը մերը դարձնենք: Դառնալով Նրա ճշմարիտ աշակերտները, մենք զորություն ենք ստանում սիրելու այնպես, ինչպես Նա է սիրում: Պահելով Նրա պատվիրանները, մենք նմանվում ենք Նրան: Մենք լայնացնում ենք սիրո մեր անձնական շրջանակը, օգնության հասնելով բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների ժողովուրդներին:

Նրա օրինակելի կյանքի համար խորին երախտագիտությամբ, մենք կարող ենք սուրբգրքյան այս հատվածը չափանիշ դարձնել մեզ համար. «Աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման. քանզի մենք պիտի տեսնենք նրան» (Մորոնի 7.48):[5] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 1 Նեփի 17.35–44; Մոսիա 7.20; Ալմա 9.9–11; 3 Նեփի 5.20–22:
2. Տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը; 1 Նեփի 13.35–41; 2 Նեփի 33.4; Մոսիա 1.2–7; Մորմոն 8.13–41:
3. Տես Հովհաննես Ժ.16; 3 Նեփի 15.11–24:
4. Տես 3 Նեփի 11–14; 18–20:
5. Համեմատեք Ա Հովհաննես Գ.1–3:

ՃԱՆԱՉԵԼ ՆՐԱ ՍԻՐՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ քոլեջի առաջին տարիներին ես միացա Եկեղեցուն, լավ զգացի այն փոփոխությունների համար, որ կատարում էի իմ ապրելաձևի մեջ, և տեսա, թե որքան ավետարանը դեպի լավը փոխեց իմ կյանքը: Ինչևէ, շուտով ես զգացի, որ իմ անցյալը թույլ չէր տալիս, որ ես առաջ գնայի: Ինչպե՞ս կարող էր Երկնային Հայրը թույլ տալ, որ ես օգնեի կառուցել Նրա արքայությունը, երբ ես նման վատ ընտրություններ էի կատարել:

Եվ ես մի օր բացեցի իմ Մորմոնի Գրքի ամենավերջին էջը: Ես կարդացի Մորոնիի վերջին խոսքերը. «Այո, եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում, . . . և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում. և եթե Աստծո շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում, դուք ոչ մի կերպ չեք կարող ուրանալ Աստծո զորությունը» (Մորոնի 10.32): Ես աչքերս հառել էի այդ խոսքերին: Ես զգացի, որ Հոգին ասաց ինձ, որ դրանք ճշմարիտ էին: Ես հասկացա, որ սահմանափակում էի Աստծո զորությունը, ենթադրելով, որ Նա չէր կարող օգտագործել ինձ այն բոլոր եղանակներով, որոնք ճիշտ էր համարում:

Ես որոշեցի այդ պահից ի վեր չմերժել Աստծո զորությունը, ընդունել իմ անցյալը և նայել դեպի ապագան: Որքան շատ էի ես կենտրոնանում իմ ապագայի վրա՝ անցյալին վերադառնալու փոխարեն, և որքան շատ էի վստահում Հիսուս Քրիստոսի սրբագործող շնորհին, այնքան ուժեղ էի զգում Փրկչի սերն իմ հանդեպ և այնքան երջանիկ էի ինձ զգում:

Քրիսթի Փիթի, Վաշինգտոն, ԱՄՆ

ՀԻՄՈՆ ՔՐԻՍՏՈՍԸ ԱՅՑԵԼՈՎ Է ԱՄԵՐԻԿԱՆԵՐԻ ՋՐՈՆ ԱՔՈՒՄ

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ պատմությունը

Ի՞նչ է տեղի ունենում Մորմոնի Գրքում: Օգտագործեք այս նկարները՝ այս հրաշալի սուրբ գրքի մարգարեների մասին սովորելու և դրա պատմություններին ծանոթանալու համար:



Մորմոնի Գիրքը սկսվում է Լեքի անունով մարգարեի մասին պատմությամբ: Նա զգուշացնում էր Երուսաղեմի ամբարիշտ մարդկանց, որ ապաշխարեն, սակայն մարդիկ չէին լսում: Տերը Լեքիին պատվիրեց՝ վերցնել իր ընտանիքը, ներառյալ՝ իր կնոջը՝ Սարիային, և իրենց որդիներին՝ Լամանին, Լեմուելին, Սամին և Նեփիին, և տանել նրանց անապատ (տես 1 Նեփի 1–2):



Լեքին իր որդիներին հետ ուղարկեց՝ բերելու արույրե թիթեղների վրա գրված սուրբ գրությունները: Այդ թիթեղները պարունակում էին իրենց նախնիների պատմությունը և այն, ինչ Տերը պատվիրել էր նրանց գրի առնել: Լեքին և Նեփին լավ էին խնամում այդ թիթեղները: Նրանք նույնպես գրեցին մետաղե թիթեղների վրա այն, ինչ պատահեց իրենց ընտանիքի հետ (տես 1 Նեփի 3–5):

Տերը Լեքիին մի ուղեցույց տվեց, որը կոչվում էր Լիահոնա. այն պետք է առաջնորդեր նրա ընտանիքին՝ անապատի միջով դեպի խոստացված երկիր (տես 1 Նեփի 16):

Տերը Նեփիին պատվիրեց մի նավ կառուցել՝ Լեքիի ընտանիքը խոստացված երկիր տանելու համար: Նեփին հնազանդվեց իր հորը և Տիրոջը, սակայն Լամանն ու Լեմուելը՝ ոչ (տես 1 Նեփի 17):

ՀԱԿՈՆՈՒ. ԼՈՒՍԱՎԱՌ ՕՐԵՐԸ ՏԵՍՆԻՐ ԿՈՐՍԻՆ 8; ՀԱՏՎԱԾ՝ ԼԵՔԻ, ՑԱՎՄԱՐԱՎՈՐՈՒՄ Է ԿԻՐԱՎՈՐՎԱԾ ԿՈՐՈՒՆԿ, ԳԼՈՒԽ ԱՌԻԹ; ԵՎ ՀՈՎԱՆՆԸ ՊԵՏՔ ՉԵՆ ՀԱՄԱՐՎԵԼ ՀԱՅՐԸ, ԿՈՒԼԹԸՐ ՈՒԵՅՆ.; ԼԵՔԻՆ ԵՎ ԼԻՈՒՄՈՒՆԸ, ՋՈՒՅԼՏՖ ԲՐԻՍԻՆ, ՆԵՐՔՈՒ ՆԱԽԱՏՈՍՈՎ Է ԻՐԵՆՑ ԿԱՌՈՒՑԱԾ ՆԱՎՈՎ ՆԱՎԱՐԿԵՑԻՆ ԴԵԱՅԻ ԽՈՍՏԱՑՎԱԾ ԵՐԿԻՐ (ՏԵՍ 1 ՆԵՓԻ 18); ԱՄԱՆԸ ԵՎ ԼԵՄՈՒԵԼԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԷԻՆ ՀԻՆԱԶԱՆԴՎԵԼ ԻՐԵՆՑ ՀՈՐՈՒ ԵՎ ՏԻՐՈՋԸ; ՆՐԱՆՑ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ ՈՐՊԵՍ ԼԱՄԱՆԱՑԻՆԵՐ; ՆԵՓԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԷՐ ՀԻՆԱԶԱՆԴՎԵԼ ԻՐ ՀՈՐՈՒ ԵՎ ՏԻՐՈՋԸ; ՆՐԱ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ԿՈՉՎԵՑԻՆ ՆԵՓԻՀԱՑԻՆԵՐ (ՏԵՍ 2 ՆԵՓԻ 4–5); ԼԵՔԻԻ ԵՎ ՆԵՓԻԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ, ԱՅԼ ՄԱՐԴԻԿ, ՕՐԻՆԱԿ՝ ՆԵՓԻԻ ԵՂԲԱՅՐ ՀԱԿՈԲԸ, ԹԻԹԵՂՆԵՐԻ ՎՐԱ ԳՐՈՒՄ ԷԻՆ ԿԱՐԵՎՈՐ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՏԵՍ ՀԱԿՈԲ 1); ԵՆՈՎՍԸ ԱՂՈԹԵՑ ԻՐ ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԵՎ ՆԵՐՎԵՑ (ՏԵՍ ԵՆՈՎՍ 1); ԲԵՆԻԱՄԻՆ ԹԱԳԱՎՈՐԸ ԱՇՏԱՐԱԿ ԿԱՌՈՒՑԵՑ՝ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՏԵՍ ՄՈՍԻԱ 2–6); ՆՈՅ ԱՆՈՒՆՈՎ ԱՄԲԱՐԻՇՏ ՄԻ ԹԱԳԱՎՈՐ ԻՐԱՄԱՅԵՑ ՍԱՊԱՆԵԼ ԱԲԻՆԱԴԻ ՄԱՐԳԱՐԵՆԻՆ: ՍԱԿԱՅՆ ԱԲԻՆԱԴԻԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԴԱՐԱՓԻ ԲԵՐԵՑԻՆ ԱԼՄԱ ԱՆՈՒՆՈՎ ՆՈՅԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ (ՏԵՍ ՄՈՍԻԱ 11–17); ԱԼՄԱՆ ՓԱԽՈՒՑԵՑ ՆՈՅ ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱԼԱՏԻՑ, ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ՈՒՍՈՒՑԱՆԵՑ ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՄԿՐՈՏԵՑ ՆՐԱՆՑ (ՏԵՍ ՄՈՍԻԱ 18); ԱԼՄԱՅԻ ՈՐԴԻՆ՝ ԱԼՄԱ ԿՐՈՏԵՐԸ, ՀԻԱԶԱՆԴ ՉԷՐ: ՆԱ ԵՎ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԸ՝ ՄՈՍԻԱՅԻ ՈՐԴԻՆԵՐԸ, ԱՄԲԱՐԻՇՏ ԷԻՆ: ՀՐԵՇՏԱԿԸ ՆՐԱՆՑ ԱՍԱՑ, ՈՐ ԱՊԱՇԽԱՐԵՑԻՆ: ԱԼՄԱՆ ԵՎ ՄՈՍԻԱՅԻ ՈՐԴԻՆԵՐԸ ԱՊԱՇԽԱՐԵՑԻՆ ԵՎ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԻ ՄՆԱՑԱԾ ՏԱՐԻՆԵՐԸ ՆՎԻՐԵՑԻՆ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈԶԻՆ (ՏԵՍ ՄՈՍԻԱ 27–28): ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՄԱՍ Է ԵՎ ԱՅՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՄԻ ՄԱՍ Է ԿԱԶՄՎԱԾ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՄԻ ՄԱՍ Է ԿԱԶՄՎԱԾ ԵՎ ԱՅՆ

Մոսիայի որդի Ամմոնը դարձի բերեց շատ Լամանացիների՝ նրանից հետո, երբ Ամմոնը պաշտպանեց Լամոնի թագավորի հոտերը և ձեռք բերեց նրա վստահությունը (տես Ալմա 17–19):



Մորոնի հրամանատարը գրեց ազատության կոչը և պայքարեց իր ժողովրդի ազատության համար (տես Ալմա 46, 48):

Հելամանը առաջնորդեց 2000 արդար երիտասարդների բանակը (տես Ալմա 53, 56–58):



Սամուել անունով Լամանացի մարգարեն մարգարեացավ այն մասին, որ շուտով պետք է ծնվեր Հիսուս Քրիստոսը (տես Հելաման 13–16):



Մորմոն անունով 10 տարեկան մի տղա ընտրվեց, որպեսզի ավելի մեծ տարիքում գրեր թիթեղների վրա: 24 տարեկանում նա սկսեց հավաքել բոլոր գրառումներից առավել կարևոր պատմությունները և կազմեց մետաղե թիթեղների մեկ հավաքածու (տես Մորմոն 1):



Մահից առաջ Մորմոնը թիթեղները տվեց իր որդի Մորոնիին: Մորոնին բանակի զորավարն էր: Նա վերջին ողջ մնացած Նեփիացին էր Լամանացիների և Նեփիացիների միջև պատերազմից հետո (տես Մորմոն 6, 8):



Մահից առաջ Մորոնին թաղեց թիթեղները Կումորա անուն կրող վայրում: Մոտ 1400 տարի անց, Ջոզեֆ Սմիթ անունով 14-ամյա մի տղա աղոթեց, որպեսզի իմանար, թե որ եկեղեցին էր ճշմարիտ (տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.5–16):



Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը այցելեցին Ջոզեֆ Սմիթին և ասացին նրան, որ ոչ մի եկեղեցի ճշմարիտ և ամբողջական չէր: Ջոզեֆ Սմիթը պետք է օգներ վերականգնել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին (տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.17–20):

Հիսուս Քրիստոսը ծնվեց հեռավոր Բեթլեհեմում: Նա ուսուցանեց Իր ավետարանը, բուժեց և օրհնեց մարդկանց և հիմնեց Իր Եկեղեցին: Այնուհետև, Նա խաչվեց և հարություն առավ (տես 3 Նեփի 1, 8–10):



Իր Հարությունից հետո, Նա այցելեց արդար Նեփիացիներին և Լամանացիներին: Նա նրանց ուսուցանեց Իր ավետարանը, բժշկեց և օրհնեց նրանց, ճիշտ ինչպես արել էր Երուսաղեմի շրջակայքում (տես 3 Նեփի 11–28):



Մորոնին այցելեց Ջոզեֆ Սմիթին և պատմեց նրան թաղված թիթեղների մասին: Երբ Ջոզեֆ Սմիթը մեծանար, նա պետք է հաներ թիթեղները և թարգմաներ դրանք (տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.27–54):



Երբ Ջոզեֆ Սմիթը դարձավ 21 տարեկան, նա գնաց Կումորա Բլուր և գտավ թիթեղները այն վայրում, որտեղ Մորոնին թաղել էր դրանք (տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.59):



Աստծո զորությամբ Ջոզեֆ Սմիթը թարգմանեց թիթեղների գրվածքները: Նա հրատարակեց այդ թարգմանությունը: Այն կոչվեց Մորմոնի Գիրք (տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը և նախաբանը:) ■

ՁԱԽՈՒՍ. ԱՄՄՈՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ԱԱՄՈՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՈՍԵՐԸ, ՍՐՈՒՆ ՖԻԼՄԵՐԻ © 1951 IRI; ՍՈՒԳԱ ԵՎԵՔ, ԿՈՒԼԵՐ ՈՒԵՅ, ՏՈՒՍՍՈՒՆԻԼԵ Է ԵՎԵՐԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԹԱՍԳԱՐՈՒՄԸ; ԵՐԿՈՒ ՀԱՋԱՐ ՊԱՏՍՏԱԿՆԵՐՈՂ ԳՈՐԾ Ե ԿՐԵԼԻՆ, ՍՐՈՒՆՈՒ ՖԻԼՄԵՐԻ, ՏՐՍՍՈՒՆԻԼԵ Է ԵՎԵՐԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԹԱՍԳԱՐՈՒՄԸ; ԱՄՄՈՆԸ ՍՄՊԳՐԵԼՈՒՄ Է, ՍՐՈՒՆ ՖԻԼՄԵՐԻ © 1951 IRI; ՄՈՐՄՈՆԸ ԿԳԱՅՏՈՒՄ Է ԹԻԹԵՂՆԵՐԸ, ԹՈՒ ԼՈՒԵԼ © IRI; ԵՍ ՄՈՐՄՈՆ ԵՄ ՍԵՆԻԿ, ԿՈՒԼԵՐ ՈՒԵՅՆ, ՏՐՍՍՈՒՆԻԼԵ Է ԵՎԵՐԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԹԱՍԳԱՐՈՒՄԸ; ՄՈՐՈՆԻ ԷԹԵՐՆԵՐԸ, ԹՈՒ ԼՈՒԵԼ © IRI; ԻՄ ՄԻՏԻ ՋԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2, ԿՈՒԼԵՐ ՈՒԵՅՆ; ԱՅՈՒՆ. ՆԱՅԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԵՐԵՎԱՆԵՐԸ, ԴԵԼ ԹԱՐՍՈՆ © 1996; ՄՈՐՈՆԻ ՀՐՇԵՏԱԿԸ ՀԱՅՏՆԱԳՈՒՄ Է ՋՈԶԵՖ ՍՄԻԹԻ, ԹՈՒ ԼՈՒԵԼ © 2003 IRI; ԿՈՒՄՈՐԱ ԲԼՈՒՐ, ՋՈՍ ՍԱԿՈՒՆՈՒ; ՋՈԶԵՖ ՍՄԻԹԸ ԹԱՐԳՄԱՆՈՒՄ Է ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԳԻՐՔԸ, ԴԵԼ ԹԱՐՍՈՆ © 1996 IRI

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԺԱՄԱՆԱ



1 ՀԱՐԵԴԱՑԻՆԵՐ
Այս խումբը հեռացավ Բաբելոնի Աշտարակից և եկավ Ամերիկա Ք. ծ. ա. մոտավորապես 2200 թվին: Նրանք բարգավաճում էին մինչև Ք. ծ. ա. 600 թիվը, երբ պատերազմից հետո ողջ մնաց միայն Կորիանթումը (տես Եթեր 1–15):

2 ՆԵՓԻԱՑԻՆԵՐ
Լեքիի խումբը հեռացավ Երուսաղեմից Ք. ծ. ա. մոտ 600 թվին և եկավ Ամերիկա: Աստիճանաբար, նրա սերունդը բաժանվեց խմբերի: Լեքիի մահից հետո արդարները հետևեցին նրա որդի Նեփիին և գնացին դեպի հյուսիս: Նրանք հայտնի դարձան որպես Նեփիացիներ (տես 1 Նեփի 1–22; 2 Նեփի 1–5):

3 ԼԱՄԱՆԱՑԻՆԵՐ
Լեքիի մահից հետո ամբարիշտները մնացին նրա որդի Լամանի հետ և կոչվեցին Լամանացիներ (տես 2 Նեփի 5):

4 ՄՈՒՂԵԿԱՑԻՆԵՐ
Մուղեկը՝ Զեդեկիա թագավորի որդին, մի խումբ Երուսաղեմից տարավ Ամերիկա Ք. ծ. ա. մոտ 587 թվին: Նրանք գտան Կորիանթումին (տես Օմնի 1.14–21):

5 ՄՈՍԻԱ$_1$
Ք. ծ. ա. մոտ 225-ին Նեփիացիները դարձան ամբարիշտ, և Մոսիան$_1$ մի խումբ արդար Նեփիացիների տարավ Զարահեմլա, որտեղ նրանք միաձուլվեցին Մուղեկացիների հետ: Նրանք իրենց սկսեցին անվանել Նեփիացիներ: Մոսիան$_1$ դարձավ նրանց արդար թագավորը: Բենիամին թագավորը նրա որդին էր (տես Օմնի 1.12–23):

6 ՋԵՆԻՖ
Ք. ծ. ա. մոտ 200-ին Նեփիացի Ջենիֆը մի խումբ տարավ դեպի հարավ՝ Նեփիացիների հողերը ետ գրավելու նպատակով: Երբ Ջենիֆը և նրա խումբը տեղ հասան, Լամանացիները նրանց գերի վերցրեցին: Ավելի ուշ, Մոսիա թագավորը$_2$ ուղարկեց Ամմոնին այդ խումբը գտնելու, և Ամմոնը դարձի բերեց Լիմքի թագավորին (տես Մոսիա 7; 9–22):

ԿԱԳԻՃԸ



7 ԱԼՄԱ$_1$
Զենիֆի ժողովրդի մեջ ծնված լինելով, Ալման$_1$ դարձավ Նոյ թագավորի ամբարիշտ քահանաներից մեկը: Աբինադի մարգարեն սպանվեց նրանից հետո, երբ Նոյ թագավորին ապաշխարության կոչ արեց: Սակայն Ալման$_1$ հավատաց Աբինադիի ուսմունքներին և մի խումբ հավատացյալների հետ փախչեց, ի վերջո միանալով Նեփիացիներին (տես Մոսիա 11; 17–18; 23–24):

8 ԱԼՄԱ$_2$ ԵՎ ՄՈՍԻԱՅԻ ՈՐԴԻՆԵՐ$_2$
Երիտասարդ տարիքում Ալմա$_2$ Կրտսերը և Մոսիա թագավորի որդիները$_2$ աշխատում էին կործանել Եկեղեցին: Հրեշտակը նախատեց նրանց, և նրանք ապաշխարեցին: Ալմա$_2$ Կրտսերը դարձավ արդար ղեկավար (տես Մոսիա 27–29): Մոսիայի$_2$ որդիները դարձան միսիոներներ Լամանացիների մեջ: Մեծ հաջողություններ ունենալով, նրանք և Ալման$_2$ վերամիավորվեցին և ուրախացան (տես Ալմա 17–26):

9 ԳԱԴԻԱՆԹՈՆԻ ԱՎԱԶԱԿՆԵՐ
Այս մարդասպան գաղտնի ավազակախմբի ազդեցությունը ամենաուժեղն էր այն ժամանակ, երբ հասարակությունը ամբարիշտ էր, և ամենաթույլն էր՝ երբ հասարակությունը արդարակյաց էր: Ք.ծ.հ. մինչև 350 թիվը նրանք սպառնում էին բոլոր մարդկանց անվտանգությանը (տես Հելաման 2; 6; 4 Նեփի 1.42–46):

10 ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ
Երուսաղեմում Իր Հարությունից հետո, Փրկիչը հայտնվեց Ամերիկաներում, ծառայեց մարդկանց, ուսուցանեց Իր ավետարանը և կազմակերպեց Իր Եկեղեցին: Նրա այցից հետո 200 տարիների ընթացքում մարդիկ ապրում էին խաղաղության մեջ (տես 3 Նեփի 11–28):

11 ՆԵՓԻԱՑԻՆԵՐԸ ԿՈՐԾԱՆՎՈՒՄ ԵՆ
Աստիճանաբար ամբարշտությունը վերադարձավ, պատերազմներ մոլեգնեցին և Նեփիացիները կործանվեցին: Միակ ողջ մնացած Մորոնին վարեց Նեփիացիների մասին գրառումները և թաղեց դրանք իր մահից առաջ (տես 4 Նեփի 1.24–28; Մորմոն 8.1–8; Մորոնի 10):

ՆԱՄՐԵՐԸ՝ ԹԱՁԱՅՄՈՐԻՆԻ ԿՐՈՆԻՑ

Ո՞Վ Է ԳՐԵԼ

Հնադարյան մարգարեները, պատմաբանները և ղեկավարները փորագրել են իրենց վկայությունները և պատմությունը ոսկե թիթեղների վրա: Ավելի ուշ, Մարգարե Ջոզեֆ Սմիթը՝ Աստծո պարգևով և զորությամբ, թարգմանեց այդ սկզբնական թիթեղների կրճատված գրառումները:

Հնադարյան սկզբնական գրառումների հեղինակները կամ աղբյուրները	Թիթեղները կազմող գրառումները
Նեփի$_1$, Հակոբ, Ենովս, Հարոմ, Օմնի և մյուսները	Նեփիի փոքր թիթեղներ (հոգևոր գրառումներ; Ք.ծ.ա. մոտ 600-ից մինչև Ք.ծ.ա. 130թթ.)
Մորմոն	Մորմոնի Խոսքեր (միացնում է փոքր թիթեղները և Նեփիի մեծ թիթեղների կրճատումների հետ; տես հատվածներ 1-18)
Լաբանի արույրե թիթեղները (տես 1 Նեփի 5.10–14)	
Զենիֆ	
Լեքի (տես 2 Նեփի 1.1–4, 11; ՎևՈւ 3, բաժնի նախաբան); Բենիամին (տես Օմնի 1.12–23; Մորմոնի Խոսքերը 1.16–18; Մոսիա 1–6); Մոսիա$_2$ (տես Օմնի 1.23–25; Մոսիա 6.3); Ալմա Կրտսեր, Մոսիայի որդիներ, Հելաման$_2$, Պահորան, Մորոնի Զորապետ, Նեփի$_3$, Նեփի$_4$	Նեփիի մեծ թիթեղներ (ֆիզիկական գրառումներ և կրոնական պատմություն; Ք.ծ.ա. 130-ից մինչև Ք.ծ.հ. 321 թթ.)
Մորմոն	Մորմոնի գրառումներ (Ք.ծ.հ. մոտ 345-ից մինչև Ք.ծ.հ. 385թթ.)
Հարեդացիների գրառումները 24 թիթեղների վրա, նեռայալ Եթերի գրվածքները (տես Եթեր 1.1–5)	Եթերի Գիրք, Հարեդացիների խմբագրված գրառումներ (Ք.ծ.ա. 2400-ից մինչև Ք.ծ.հ. 600թթ.)
Մորոնի	Մորոնիի գրառումները (տես Մորմոն 9.30–37; Ք.ծ.հ. 385-ից մինչև Ք.ծ.հ. 421թթ.)

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

1823թ. սեպտեմբերի 21-ի երեկոյան, Մորոնի հրեշտակը հայտնվեց երիտասարդ Ջոզեֆ Սմիթին և պատմեց նրան ոսկե թիթեղների մասին, որոնք պետք է թարգմանվեին որպես Մորմոնի Գիրք: Չորս տարի անց Ջոզեֆը կարողացավ վերցնել թիթեղները և թարգմանել դրանք (տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.27–54):

Ոսկե թիթեղները, որ տրվեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին Մորոնի Հրեշտակի կողմից 1827թ. սեպտեմբերի 22-ին

Մորմոնի թիթեղներ
(Մորմոնի և Մորոնիի կողմից կազմած և կրճատված գրառումներ)

Կնքված մաս
(չի թարգմանվել)

Ձեռագիր բնօրինակ թարգմանությունն ավարտվեց 1829թ., ձեռագիր տեքստը տպագրվեց՝ 1829–30թթ., և Մորմոնի Գրքի առաջին 5000 օրինակները տպագրվեցին 1830թ.:

Այս տեղեկությունը կազմվել է Մորմոնի Գրքի նախաբանի և տեքստի օգնությամբ:

Մորմոնի Գիրք

Տիտղոսաթերթ*
1 Նեփի
2 Նեփի
Հակոբ
Ենովս
Հարոմ
Օմնի
Մորմոնի Խոսքերը
Մոսիա
Ալմա
Հելաման
3 Նեփի
4 Նեփի
Մորմոն
Եթեր
Մորոնի

*Ջոզեֆ Սմիթը բացատրել է. «Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը բառացի թարգմանություն է, որը վերցվել է հավաքածուի կամ թիթեղների գրքի ձախ կողմի ամենավերջին թերթից» (*History of the Church*, 1:71):

ՀԱՅՏԱԳՈՐԾ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ ԹԻԹԵՂՆԵՐԸ, ԹՈՒՆ ԼՈՒՅԵԼ: ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻՑ; ՄՈՐՄՈՆԻ ԽՈՍՔԵՐԸ ՀԱՅՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ ՁԻՆԸ ՍՄԻԹԻ, ԹՈՒՆ ԼՈՒՅԵԼ: ԼՈՒՍԱՆԱԿԱՐԸ ՔԻԵՑԳ ԴԱՅՄՈՆԻԿ ԿՈՐՈՒՄԻՑ; ՄՈՐՈՆԻԽԸ ՀԱՍԿԱՆՈՒՄ Է ՈՍԿԵ ԹԻԹԵՂՆԵՐԸ, ԳԱՐԻ ՔԱՓ, ՕԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆԵԼ: ԼՈՒՍԱՆԱԿԱՐԸ ԷՐԻԼԻ ԼԻՀՈՍԱԿԱՆԻՑ; ԼՈՒՍԱՆԱԿԱՐԸ ՋՈՆ ԼԵՅՈՔԻ ԿՈՐՈՒՄԻՑ



ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔ՝

վկայություն Աստվածաշնչի հետ մեկտեղ

Ներդաշնակ լինելով աստվածաշնչյան այն օրենքին, որ «երկու և երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի» (Բ Կորնթացիս ԺԳ.1), և Մորմոնի Գիրքը, և Աստվածաշունչը վկայում են Հիսուս Քրիստոսի մասին և ուսուցանում են Նրա ավետարանի սկզբունքները: Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է, որ «սուրբգրքյան վկայությունները հաստատում են միմյանց: Այս գաղափարը բացատրվել է դեռ շատ վաղուց, երբ մարգարեն գրեց, որ Մորմոնի Գիրքը գրվել է «այն նպատակով, որ դուք հավատաք դրան [Աստվածաշնչին]. և եթե դուք հավատաք դրան [Աստվածաշնչին], դուք կհավատաք նաև սրան [Մորմոնի Գրքին]» [Մորմոն 7.9]: Յուրաքանչյուր գիրք հղում է կատարում մյուսին: Յուրաքանչյուր գիրք վկայություն է հանդիսանում նրա, որ Աստված ապրում է և խոսում է Իր զավակների հետ՝ Իր մարգարեներին տված հայտնության միջոցով»:[1]

Ստորև տրվում է Աստվածաշնչում ուսուցանվող հիմնարար վարդապետությունների ցանկը, որոնց մասին Մորմոնի Գիրքը լրացուցիչ վկայություն է տրամադրում:

Մեզ համար Աստծո ծրագիրը

Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը ուսուցանում են, որ Աստված մեր Երկնային Հայրն է: Լինելով մեր Հայրը՝ Նա պատրաստել է «փրկության ծրագիր» (Ալմա 24.14), որով մենք կարող ենք փրկվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Սիրող Երկնային Հայրը	
Աստվածաշունչ. «Որովհետև մենք նորանով ենք ապրում և շարժվում և կանք. ինչպես ձեր բանաստեղծներից ոմանք էլ ասեցին, թե Նորա ազգիցն էլ ենք» (Գործք ԺԷ.28; տես նաև Սաղմոս ՁԲ.6; Եբրայեցիս ԺԲ.9):	Մորմոնի Գիրք. «Ես գիտեմ, որ [Աստված] սիրում է իր զավակներին» (1 Նեփի 11.17; տես նաև 1 Նեփի 17.36):
Մահը և հոգևոր աշխարհը	
Աստվածաշունչ. «Հողը ետ է դառնում երկրին, ինչպես որ էր, և հոգին ետ է դառնում Աստծո մոտ, որ տվել էր» (Ժողովող ԺԲ.7; տես նաև 1 Պետրոս 3.19–20; 4.6):	Մորմոնի Գիրք. «Բոլոր մարդկանց հոգիները՝ լինեն նրանք բարի, թե չար, տարվում են տուն՝ այն Աստծո մոտ, որը նրանց կյանք էր տվել» (Ալմա 40.11; տես նաև հատվածներ 12–14):
Հարություն	
Աստվածաշունչ. «Եվ իմ մորթը այսպես թափվելուց հետո, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստուծուն» (Հոբ ԺԹ.26; տես նաև Եզեկիել ԼԷ.12; Ա Կորնթացիս Զ.14; ԺԵ.54):	Մորմոնի Գիրք. «Ես գիտեմ, որ դուք իմանում եք, որ մեր մարմինը պետք է հալումաշ լինի ու մեռնի. այնուամենայնիվ, մեր մարմիններում մենք կտեսնենք Աստծուն» (2 Նեփի 9.4; տես նաև 2 Նեփի 9.12; Ալմա 11.43–45; 40.23):

Պատվիրանները ուղեցույց են հանդիսանում

Աստվածաշունչն ուսուցանում է, որ Աստված պատվիրաններ է տվել և կօրհնի մեզ, եթե մենք հետևենք դրանց: Մորմոնի Գրքի մարգարեները նույնպես գրի են առել պատվիրաններ և հետևել դրանց:

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Մի ապավինեք ինքներդ ձեզ, այլ ուսումնասիրեք լավագույն գրքերը՝ Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը, և ստացեք ողջ տեղեկությունը, որ կարող եք քաղել, ապա կառչեք Աստծուց և զերծ մնացեք ամեն տեսակի կեղծիքից և կեղտից, և Բարձրյալի օրհնությունները կլինեն ձեզ հետ»:

President John Taylor (1808–87), *Teachings of Presidents of the Church: John Taylor* (2001), 148.

Հնազանդության օրհնությունները	
Աստվածաշունչ. «Եվ Եհովան մեզ պատվիրեց, որ այս բոլոր կանոնները կատարենք, և մեր Եհովա Աստուածանից վախենանք, որ մեզ համար բարի լինի ամեն ժամանակ, որ մեզ ողջ պահե . . . Եվ մեզ համար արդարություն լինի, եթե այս բոլոր պատվիրանքները կատարելու զգուշանանք» (Երկրորդ Օրինաց Զ.24–25; տես նաև Առակաց Դ.4; Հովհաննես ԺԴ.21):	Մորմոնի Գիրք. «Նա խոստացել է ձեզ, որ եթե դուք պահեք նրա պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում. և նա երբեք չի շեղվում նրանից, ինչ նա ասել է. հետևաբար, եթե դուք պահում եք նրա պատվիրանները, նա, իրոք, օրհնում և բարգավաճեցնում է ձեզ» (Մոսիա 2.22; տես նաև 2 Նեփի 1.20):
Տաս պատվիրանները	
Աստվածաշունչ. Տերը Մովսեսին տալիս է Տասը Պատվիրանները (տես Ելից Ի.1–17):	Մորմոնի Գիրք. Աբինադին ուսուցանում է Տասը Պատվիրանները Նոյ Թագավորի քահանաներին (տես Մոսիա 12.33–36; 13.12–24):
Տասանորդ	
Աստվածաշունչ. «Բոլոր տասանորդը տարեք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի» (Մաղաքիա 3.10; տես նաև Ղևտացիս 27.30):	Մորմոնի Գիրք. «Եվ դա այն նույն Մելքիսեդեկն էր, որին Աբրահամը տասանորդ վճարեց. այո, նույնիսկ մեր հայր Աբրահամը վճարեց տասնորդ՝ մեկ տասներորդ մասն իր ողջ ունեցածի» (Ալմա 13.15; տես նաև 3 Նեփի 24.8–10):
Մկրտություն և Սուրբ Հոգի	
Աստվածաշունչ. «Եթե մեկը ջրից և հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայությունը մտնել» (Հովհաննես 3.5; տես նաև Մարկոս 16.16; Գործք 2.36–38):	Մորմոնի Գիրք. «Ապաշխարեք, դուք, աշխարհի բոլոր ծայրեր, և եկեք ինձ մոտ ու մկրտվեք իմ անունով, որպեսզի դուք կարողանաք սրբագործվել՝ ընդունելով Սուրբ Հոգին, որպեսզի դուք կարողանաք կանգնել անբիծ իմ առջև վերջին օրը» (3 Նեփի 27.20; տես նաև 2 Նեփի 9.23; 31.5–9):

Հիսուս Քրիստոսի առաքելությունը

Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը վկայում են Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու և Նրա Քավության մասին: Նրանք ուսուցանում են, որ Փրկիչը Իր վրա է վերցրել մեր մեղքերը և հաղթել է մահը:

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Մորմոնի Գիրքը . . . հայտարարում է, որ Աստվածաշունչը ճշմարիտ է, և այն ապացուցում է դա, իսկ երկուսը հաստատում են միմյանց ճշմարտությունը»:

President Brigham Young (1801–77), *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 121.

Աստծո Միածին Որդին

Աստվածաշունչ. «Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհքը, որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես Գ.16; տես նաև Մատթեոս ԺԶ.16; Հովհաննես Զ.69):

Մորմոնի Գիրք. «Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսը պիտի գա, այո, Որդին՝ Հոր Միածինը, լի շնորհով, և ողորմությամբ, և ճշմարտությամբ» (Ալմա 5.48; տես նաև 1 Նեփի 11.16–21; Մոսիա 3.5–8):

Քավեց մեր մեղքերը

Աստվածաշունչ. «Որովհետև այդ է իմ արյունը նոր ուխտի, որ թափվում է շատերի համար՝ ի թողություն մեղաց (Մատթեոս ԻԶ.28; տես նաև Եբրայեցիս Թ.28; Ա Պետրոս Գ.18):

Մորմոնի Գիրք. «Ահա, նա իրեն զոհ է մատուցում մեղքի համար՝ բավարարելու օրենքի պահանջները, բոլոր նրանց համար, ովքեր ունեն կոտրված սիրտ ու փշրված հոգի» (2 Նեփի 2.7; տես նաև 1 Նեփի 11.33; Ալմա 34.8–10; 3 Նեփի 11.14):

Կրեց մեր վշտերը

Աստվածաշունչ. «Հիրավի նա մեր ցավերը վեր առավ և մեր վիշտերը բեռնեց իր վրա» (Եսայիա ԾԳ.4; տես նաև Եբրայեցիս Բ.18):

Մորմոնի Գիրք. «Եվ նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի, . . . որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների» (Ալմա 7.11–12; տես նաև Մոսիա 14.3–5):

Հաղթեց մահը

Աստվածաշունչ. «Բայց հիմա Քրիստոսը հարություն է առել մեռելներից, ինքը ննջածների առաջնեկ եղավ» (Ա Կորնթացիս ԺԵ.20; տես նաև Հովհաննես ԺԴ.19; Գործք ԻԶ.23):

Մորմոնի Գիրք. «Դուք պետք է հավատաք Հիսուս Քրիստոսին, որ նա Աստծո Որդին է, և որ նա սպանվել է հրեաների կողմից, և Հոր զորությամբ նա կրկին հարություն է առել, որով նա հաղթանակ է ձեռք բերել գերեզմանի վրա» (Մորմոն 7.5; տես նաև Մոսիա 16.7–8; Հելաման 14.17):

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին հին ժամանակներում

Տերը հիմնել է Իր Եկեղեցին Երուսաղեմում և Ամերիկաներում: Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը վկայում են այն մասին, որ Նա կազմակերպում և ղեկավարում է Իր ժողովրդին մարգարեների և առաքյալների միջոցով:

Մարգարեներ	
Աստվածաշունչ. «Որովհետև Տեր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթե չհայտնե իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարեներին» (Ամովս 3.7; տես նաև ԵրեմիաՍ.7; 7.25):	Մորմոնի Գիրք. «Սուրբ Հոգու միջոցով են բոլոր բաները հայտնի դարձվում մարգարեներին» (1 Նեփի 22.2; տես նաև Հակոբ 4.4–6):
Տասներկուսը	
Աստվածաշունչ. «Նա կանչեց իր աշակերտները, և ընտրեց նորանցից տասներկուսին, որոնց առաքյալ էլ անվանեց» (Ղուկաս 6.13; տես նաև Եփեսացիս 2.19–20; 4.11–14):	Մորմոնի Գիրք. «Երանելի եք դուք, եթե ուշք դարձնեք այս տասներկուսի խոսքերին, որոնց ես ընտրել եմ ձեր միջից՝ ծառայելու ձեզ» (3 Նեփի 12.1; տես նաև 1 Նեփի 11.29):
Քահանայության Իշխանություն	
Աստվածաշունչ. «Ոչ թե դուք ինձ ընտրեցիք. այլ ես ընտրեցի ձեզ, և ձեզ դրի, որ դուք գնաք և պտուղ բերեք. և ձեր պտուղը մնա» (Հովհաննես 15.16; տես նաև Մատթեոս 16.19; Ղուկաս 9.1–2; Եբրայեցիս 5.4):	Մորմոնի Գիրք. «[Ալման] քահանաներ ու երեցներ կարգեց, ձեռնադրելով ըստ Աստծո կարգի, որ նախագահեն և հսկեն եկեղեցու վրա» (Ալմա 6.1; տես նաև 2 Նեփի 6.2; Մորոնի 3):

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Այս օրերին, երբ շատերը նվազեցնում են Աստվածաշնչի դերը, խառնելով աշխարհի փիլիսոփայությունները Աստվածաշնչի սուրբ խոսքի հետ և, այդպիսով, չեզոքացնելով դրա իրական իմաստը, մեծ հաջողություն է, որ մեր հավերժական Երկնային Հայրը, որը մշտապես մտահոգված է Իր զավակների հոգևոր բարօրությամբ, տվել է մեզ սուրբ գրությունների երկրորդ գիրքը՝ Մորմոնի Գիրքը, ի պաշտպանություն Աստվածաշնչի ճշմարտությունների, որոնք գրվել և խոսվել են մարգարեների կողմից՝ Տիրոջ ղեկավարությամբ: . . .

. . . Այս երկրորդ վկայության շնորհիվ մենք կարող ենք ավելի վստահ իմանալ հին մարգարեների, և, իրոք, Վարդապետի և Նրա աշակերտների ուսմունքների իմաստը, երբ նրանք ապրել և ուսուցանել են մարդկանց մեջ: Սա պետք է ոգեշնչի բոլոր նրանց, ովքեր ճշմարտության անկեղծ որոնողներ են, միացնել այս սուրբ գրքերը և ուսումնասիրել դրանք որպես մեկ գիրք, հասկանալով, ինչպես մենք, դրանց իրական կապը»:

President Harold B. Lee (1899–1973), *Ye Are the Light of the World* (1974), 89, 91.

Լրացուցիչ ուսումնասիրություն

Այս սխեման ամբողջական ցանկը չի ներառում: Ձեր անձնական կամ ընտանեկան ուսումնասիրության ընթացքում դուք կարող եք հղումներ ավելացնել այս սխեմային և ավելի շատ սկզբունքներ գտնել, որոնք ուսուցանվում են Մորմոնի Գրքում և Աստվածաշնչում, օգտվելով Թեմատիկ Ուղեցույցից կամ Սուրբ գրությունների ուղեցույցից և առցանց ուսումնասիրության գործիքներից scriptures.lds.org կայքում: ■

ՀՂՈՒՄ

1. Russell M. Nelson, “Scriptural Witnesses,” *Liahona,* Nov. 2007, 43.

ՀԱՐՈՂ Բ. ԼԻՒ ԴԻՍՄՍԱԿԱՐԸ՝ ՆՈՅԵՆՇՈՑԻ ԿՈՂՄԻՑ, ՏՊԱՍՄՈՒՐԵԼ ԵՆ ԿԵՐԵՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱԳՐՈՒՆԸ

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ինչպես ուսումնասիրել Մորմոնի Գիրքը

Քսանհինգ տարի առաջ Նախագահ Էզրա Թավթ Բենսոնը (1899–1994) պարզաբանեց «երեք մեծ պատճառները, թե ինչու Վերջին Օրերի Սրբերը պետք է ուսումնասիրեն Մորմոնի Գիրքը ողջ կյանքի ընթացքում»:[1] Այդ պատճառներն են.

- Առաջինը, Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է՝ Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության, մեր վարդապետության և մեր անձնական վկայության պորտաքարը:
- Երկրորդ, Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար:
- Երրորդ, Մորմոնի Գիրքն օգնում է մեզ մոտենալ Աստծուն:

Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու այս պատճառները նաև ճանապարհ են տալիս այս առանձնահատուկ սուրբ գրությունները ուսումնասիրելու համար:

Մեր կրոնի պորտաքարը

Քանի որ Մորմոնի Գիրքը Քրիստոսի և Նրա ավետարանի լրիվության մասին մեր վկայության պորտաքարն է, կարևոր է, որ ուսումնասիրության ընթացքում մենք հատուկ ուշադրություն դարձնենք Փրկչի մասին գրքում պարունակվող բազմաթիվ ուսմունքներին և վկայություններին: Որոշ մարդիկ անում են սա, ձեռք բերելով Մորմոնի Գրքի նոր և ոչ թանկարժեք օրինակ և նշելով բոլոր այն տողերը, որոնք վերաբերում են Փրկչին, Նրա ծառայությանը և առաքելությանը, կամ ուսուցանում են այդ մասին: Դա օգնում է ավելի խորը վկայություն ունենալ Հիսուսի մասին որպես Աստծո Որդի, և ավելի լավ գնահատել այն, ինչ Նա արել է և շարունակում է անել մեզ համար:

Գրված մեր օրերի համար

Մորմոնի Գրքի հեղինակները գրել են, հաշվի առնելով ապագա սերունդներին, հատկապես վերջին օրերը: Նեփիացիների գրառումները կրճատելիս, Մորմոնը ասաց, որ չի կարողացել ընդգրկել անգամ «հարյուրերորդ մասը» (տես 3 Նեփի 5.8; տես նաև Մորմոնի Խոսքերը 1.5): Մորոնին մեկնաբանում է. «Ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք, և սակայն դուք ներկա չեք: Բայց ահա, Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ, և ես գիտեմ ձեր արարքները» (Մորմոն 8.35): Այս երկու հեղինակները և մյուսները, ոգեշնչման ներքո, գրել են, թե ինչն է առավել օգտակար մեզ համար այս վերջին օրերում:

Այսպիսով, մենք պետք է ուսումնասիրենք, մտքում ունենալով այս հարցերը. «Ինչո՞ւ է սա ներառված: Ինչպե՞ս է սա կիրառվում այսօր և ինչ նշանակություն ունի ինձ համար»: Նախագահ Բենսոնը, օրինակ, նկատել է, որ Մորմոնի Գրքում մենք գտնում ենք Փրկչի Երկրորդ Գալստին պատրաստվելու օրինաչափություն: Մենք սովորում ենք, թե ինչպես էին Քրիստոսի աշակերտները ապրում պատերազմի ժամանակ, ինչպես էին դիմակայում հալածանքին և ուրացությանը, կատարում միսիոներական աշխատանք և արձագանքում մատերիալիզմի վտանգներին:[2] Ինչպես Նեփին, երբ ուսումնասիրում ենք, մենք պետք է «նմանեցնենք» սուրբ գրությունները մեզ, այսինքն՝ աշխատենք հասկանալ, թե ինչպես կիրառենք այն, ինչ գտնում ենք Մորմոնի Գրքում (տես 1 Նեփի 19.23):

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՎԵՐԳԱՐԱ ՌԱՄԻՌԵԶԻ

ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ, ՈՐՊԵՍԶԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ՍՈՎՈՐԵԼ

Առաջին անգամ, երբ ես կարդացի Մորմոնի Գիրքը, ես անդամ չէի: Ես 16 տարեկան էի և կարդացի այն մեկ շաբաթում: Հասնելով ավարտին, ես կարդացի մի հատված, որը հաստատում էր, որ եթե եկեղեցին Քրիստոսինն է, ապա այն պետք է կրի Նրա անունը (տես 3 Նեփի 27.8): Այդ պահին արցունքները հոսեցին իմ այտերով: Ես գիտեի, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, և որոշեցի մկրտվել:

Մկրտվելուց հետո, ես կրկին կարդացի գիրքը, բայց այս անգամ գնեցի նշող մատիտ և նշեցի այն հատվածները, որոնք ներշնչում էին ինձ: Հետագայում ես այդպես էի անում, նշված հատվածների համար էջաեզրերին ավելացնելով գրառումներ: Հաջորդ անգամ ես հղումներ ավելացրեցի համապատասխան հատվածներին՝ ինչպես Մորմոնի Գրքից, այնպես էլ՝ այլ սուրբ գրություններից:

Այնուհետև, մի անգամ՝ տարվա սկզբին ես գնեցի սուրբ գրությունների նոր օրինակներ, քանի որ իմ ունեցածները նշումներով պատված էին, հատկապես միսիայի ընթացքում օգտագործելուց և դասեր պատրաստելուց հետո: Այս անգամ իմ ուսումնասիրությունը և նշումները հիմնված էին թեմաների վրա: Ես տարբեր գույներ էի օգտագործում տարբեր թեմաների համար, օրինակ՝ նարնջագույնը՝ հավատքի, կանաչը՝ ապաշխարության, և այլն:

Այս բազմազան եղանակներով Մորմոնի Գիրքը շարունակաբար ուսումնասիրելու արդյունքում, ես սովորեցի, որ Մորմոնի Գրքի միայն մեկ ընթերցանությունը բավական չէ: Անընդհատ ուսումնասիրելով, մենք սովորում ենք տող առ տող: Ես նաև սովորեցի, որ կարևոր չէ, թե քանի անգամ ենք մենք կարդացել, միշտ ստիպված ենք լինում ասել. «Ինչո՞ւ ես սա նախկինում չեմ տեսել: Չէ՞ որ դա այստեղ էր»:

Սուրբ գրությունները, հատկապես՝ Մորմոնի Գիրքը, ուսուցանում են մեզ Հիսուս Քրիստոսի և մեր Երկնային Հոր մասին: Սուրբ գրությունների ուսումնասիրությունը ինձ մոտեցրեց Նրանց:

Քրիստինա Վերգարա Ռամիռեզ, Չիլի

Ավելի մոտենալ Աստծուն

Կրկին մեջբերում Նախագահ Բենսոնից. «Մորմոնի Գիրքը մեզ միայն ճշմարտություն չի ուսուցանում, թեև այն իսկապես ուսուցանում է դա: Մորմոնի Գիրքը միայն վկայություն չի բերում Քրիստոսի մասին, թեև իսկապես բերում է: Կա ավելին: Գրքի մեջ մի զորություն կա, որը սկսում է թափանցել ձեր կյանք այն պահից, երբ դուք սկսում եք այդ գրքի լուրջ ուսումնասիրությունը»:[3]

Իսկապես, Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը հրավիրում է Հոգին, իսկ Հոգին հայտնության միջնորդ է: Սա նշանակում է, որ մենք պետք է ուսումնասիրենք՝ մտածելով, խորհելով, աղոթելով և, մի գուցե, կարդալիս գրառումներ անելով: Սա պայմաններ է ստեղծում, որպեսզի մենք ստանանք ավելի մեծ լույս և հասկացողություն՝ այն մասին, ինչ ուսումնասիրում ենք, և բոլոր այլ հարցերի մասին: Երբեմն օգտակար է կարդալ ամբողջ Մորմոնի Գիրքը համեմատաբար կարճ ժամանակում, որպեսզի ըմբռնենք դրա պատմությունը և ուղերձը: Սակայն, սովորաբար, լավագույն ձևն է՝ օրական որոշակի քանակով հատվածներ կամ էջեր կարդալու փոխարեն, ամեն օր պատշաճ ժամանակ հատկացնել և կենտրոնացված ուսումնասիրել գիրքը:

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Ես սկսել եմ կարդալ Մորմոնի Գիրքը այն տարիքում, երբ դեռ չէի կարող սարկավագ դառնալ, և այդ ժամանակից ի վեր շարունակում եմ կարդալ այն, և գիտեմ, որ այն ճշմարիտ է: . . .

Ինձ թվում է, որ այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամ երբեք չի բավարարվի, եթե ժամանակ առ ժամանակ կրկին չկարդա Մորմոնի Գիրքը և խորապես չխորհի դրա մասին, որպեսզի կարողանա վկայել, որ այն իսկապես գրված է Ամենազորի ներշնչմամբ, և որ դրա պամությունը ճշմարիտ է»:

President Joseph Fielding Smith (1876–1972), in Conference Report, Oct. 1961, 18.

Ուսումնական օժանդակ նյութեր

Այսօր մենք, բարեբախտաբար, ունենք տարբեր գործիքներ, որոնք օգնում են մեզ ուսումնասիրել Մորմոնի Գիրքը: Որոշ գործիքներ կապված են մեր սուրբ գրությունների հետ՝ Թեմաների Ցուցիչը, Աստվածաշնչի Բառարանը, անգլերենում՝ սուրբ գրությունների ցուցիչը, և այլ լեզուներով՝ սուրբ գրությունների ուղեցույցը: Բացի դա՝ սուրբ գրությունների Վերջին Օրերի Սրբերի հրատարակությունների ամեն էջում մենք ունենք էջի տողատակի բազմաթիվ ծանուցումներ և խաչաձև հղումներ:

Ուսումնական տպագրված այլ նյութերի շարքում են՝ Կիրակնօրյա դպրոցի դասարանի անդամի ուսումնասիրության ուղեցույցը, Սեմինարիայի ուսանողի ուսումնասիրության ուղեցույցը և Ինստիտուտի ուսանողի ձեռնարկը: Մեր ժամանակի և դարաշրջանի համար նորություններ են ծավալով աճող էլեկտրոնային գործիքները, էջ 31:

Դարձի գալու գործիք

Մորմոնի Գիրքը դարձի գալու անգնահատելի գանձ է և գործիք, որը Տերը ստեղծել և տվել է մեր տնտեսության համար: Ես համարում են այն Հիսուս Քրիստոսի մասին իմ անձնական վկայության, Ջոզեֆ Սմիթի մարգարեական կոչման և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու՝ որպես երկրի վրա կրկին անգամ հիմնված Տիրոջ արքայության հիմքը:[4] Ես ուրախ եմ, որ կարող եմ ավելացնել իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի վկայությանը՝ «ինչպես կենդանի է ձեր Տերն ու ձեր Աստվածը, այն ճշմարիտ է» (ՎևՈւ 17.6): Թող որ Մորմոնի Գրքի ձեր կյանքի տևողություն ունեցող ուսումնասիրությունը խորացնի ձեր դարձի ընթացքը և տանի ձեզ ուղիղ ճանապարհով՝ դեպի հավերժական կյանք: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ezra Taft Benson, “The Book of Mormon—Keystone of Our Religion,” *Ensign,* Nov. 1986, 5–7. This classic talk is reprinted in this issue on pages 52–58.
2. Տես Ezra Taft Benson, *Ensign,* Nov. 1986, 6–7.
3. Ezra Taft Benson, *Ensign,* Nov. 1986, 7.
4. Մորմոնի Գրքի նախաբան:

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ ԵՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՊԻ ՍԱՐՔԵՐՈՒՄ

Ի լրումն, հիմնաբառով արագ որոնման և խաչաձև հղումների ֆունկցիաների, առցանց (scriptures.lds.org) և շարժական կապի սարքերում (mobile.lds.org) սուրբ գրությունները մի քանի նոր ֆունկցիաներ են ապահովում, որոնք կարող են օգնել ձեր անհատական ուսումնասիրության ընթացքում.

Իմ ուսումնական նոթատետրը (notebook.lds.org)

Առցանց այս նոթատետրը առաջարկում է այն գործիքներից շատերը, որոնք դուք, հավանաբար, օգտագործում եք սովորական ուսումնասիրության ընթացքում, օրինակ՝ նշումներ կատարելը, գրառումներ կատարելը, խաչաձև հղումներ կատարելը, սակայն դուք կարող եք օգտագործել դրանք և պահպանել ձեր աշխատանքը էլեկտրոնային տարբերակով: Բացի դա, դուք կարող եք «պիտակավորել» կամ խմբավորել ձեր գրառումները և այլ նյութերը, երբ դրանք մատչելի դառնան: Քանի որ դուք մուտք եք գործում Իմ ուսումնական նոթատետր ձեր ՎՕՍ հաշվով, նոթատետրի ձեր փոփոխությունները թարմ են մնում, անկախ նրանից, թե քանի տարբեր սարք եք դուք օգտագործում մուտք գործելու համար: Այս գործիքները թույլ են տալիս ավետարանի ուսումնասիրության և ուսուցանման համար ստեղծել ձեր ուրույն թեմատիկ արխիվը:

Սուրբ գրությունների ձևաչափեր և լեզուներ (scriptures.lds.org)

Սուրբ գրությունների էլեկտրոնային տեքստը և աուդիո- ձայնագրությունները այժմ մատչելի են շատ լեզուներով LDS.org կայքում և շարժական սարքերում և պատրաստվում են շատ այլ լեզուներով:

Բացի առցանց ընթերցելուց և ունկնդրելուց, դուք կարող եք նաև ներբեռնել և օգտագործել աուդիո, ePub և PDF ֆայլերը անցանց: Առցանց սուրբ գրությունների Եկեղեցու կայքը՝ վերջին տարբերակով, թույլ է տալիս նաև հեշտությամբ փոխանակել հատվածներ և անձնական գրառումներ մյուսների հետ՝ է-փոստի և հասարակական մեդիա գործիքների միջոցով:

LDS.org-ում սուրբ գրությունները ներկայումս առկա են 21 լեզուներով: Շարժական կապի սարքերի կիրառումները մատչելի են մոտ 10 լեզուներով, կախված հիմքից:

LDS Scripture Citation Index (scriptures.byu.edu)

Այս գործիքը, որը անգլերեն լեզվով ստեղծել են Բրիգամ Յանգ Համալսարանի երկու ուսուցիչներ, կապում է սուրբ գրությունների հատվածները ժամանակակից մարգարեների և առաքյալների խոսքերի հետ: Օրինակ, եթե դուք ցանկանում եք իմանալ, թե ով է մեջբերել 1 Նեփի 3.7 գերագույն համաժողովում, ապա կարող եք էկրանի ձախ կողմում սեղմել Մորմոնի Գրքի կապուղու վրա, իջնել ներքև, գտնելով 1 Նեփի 3, և տեսնել պատասխանը:

General Conference Topics Index (conference.lds.org)

Մեկ այլ գործիք, որն օգնում է ձեզ կապել միմյանց սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը, conference.lds.org-է, որը տալիս է թեմատիկ ցանկը գերագույն բոլոր համաժողովների համար: Օրինակ, եթե դուք ուսումնասիրում եք սուրբ գրություններից Քավություն թեման, ապա կարող եք գտնել այդ թեմայով հինգ ելույթ 2011թ. ապրիլի համաժողովից:

Լեքիի երազը՝

ԱՄՈՒՐ ԲՌՆՎԵԼ ՀՈՂԻՑ

Մորմոնի Գրքի կարևորագույն թեման՝ բոլորին հրավիրել գալ դեպի Քրիստոսը, լավագույնս դրսևորվում է Լեքիի տեսիլքում:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ես սիրում եմ Մորմոնի Գիրքը: Ավետարանի մասին իմ վաղ հիշողությունները կապված են Էմմա Մար Փեթերսենի՝ *Մորմոնի Գրքի պատմությունները երիտասարդ Վերջին Օրերի Սրբերի համար* գրքից մորս ընթերցանությունների հետ: Մանկական այդ փորձառությունների և կյանքի ընթացքում անձնական ուսումնասիրության և աղոթքի հետևանքով, Սուրբ Հոգին շարունակ վկայություն է տվել ինձ այն մասին, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է:

Ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը ևս մի վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Ես գիտեմ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Մորմոնի Գիրքը Աստծո զորությամբ: Եվ ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը «ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների»:[1]

Լեքիի երազի հիմնական խորհրդանիշերը

Սուրբ գրությունները ընդհանրապես, և Մորմոնի Գիրքը մասնավորապես, կարդալու, ուսումնասիրելու, քննելու և դրանց շուրջ խորհելու կարևորությունը շեշտվում է կյանքի ծառի Լեքիի տեսիլքի մի քանի բաղադրիչներում (տես 1 Նեփի 8):

Լեքիի երազի կենտրոնական երևույթը կյանքի ծառն է, որը ներկայացնում է «Աստծո սերը» (տես 1 Նեփի 11.21–22): «Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհքը, որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես Գ.16): Այսպիսով, Տեր Հիսուս Քրիստոսի ծնունդը, կյանքը և քավող զոհաբերությունը՝ Իր զավակների հանդեպ Աստծո սիրո մեծագույն դրսևորումն է: Ինչպես Նեփին է վկայել, այդ սերը «ամենաբաղձալին է բոլոր բաներից ավելի», և ինչպես նրա տեսիլքում հրեշտակն

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը իսկապես Աստծո Խոսքն է, որ երկրի և երկնքի միջև հաղորդակցումը կրկին բաց է և որ Տիրոջ ճշմարիտ ուղին հայտնվել է մարդկանց երկրի վրա, ցույց տալով, թե ինչպես կարող է Քրիստոսի ճշմարիտ հավատացյալը ստանալ անհրաժեշտ ողջ գիտելիքը և օրհնությունները»:

President David O. McKay (1873–1970), "Marks Pointing to Authenticity of Book of Mormon," *Instructor,* Oct. 1952, 318.

է հայտարարել՝ «հոգու համար ամենաբերկրալին» (1 Նեփի 11.22–23; տես նաև 1 Նեփի 8.12, 15): 1Նեփիի 11-րդ գլուխը ներկայացնում է կյանքի ծառի մանրամասն նկարագրությունը՝ որպես Փրկչի կյանքի, ծառայության և զոհաբերության խորհրդանիշ՝ «Աստծո բարեհաճության մասին» (1 Նեփի 11.16):

Ծառի պտուղը Քավության օրհնությունների խորհրդանիշն է: Ծառի պտղից ճաշակելը ներկայացնում է ծեսերը և ուխտերը ստանալը, որոնցով Քավությունը կարող է լիարժեք գործել մեր կյանքում: Պտուղը նկարագրվում է որպես «բաղձալի մարդուն երջանիկ դարձնելու համար» (1 Նեփի 8.10) և պարգևում է մեծ ուրախություն և մյուսների հետ այդ ուրախությամբ կիսվելու ցանկություն:

Նշանակալից է, որ Մորմոնի Գրքի կարևորագույն թեման՝ բոլորին հրավիրել գալ դեպի Քրիստոսը, լավագույնս դրսևորվում է Լեքիի տեսիլքում: Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում երկաթե ձողը, որը տանում է դեպի ծառը (տես 1 Նեփի 8.19): Երկաթե ձողը Աստծո խոսքն է:

Կառչելը՝ ի հակադրություն մշտապես ձողից ամուր բռնվելուն

Լեքիի հայրը տեսավ իր տեսիլքում մարդկանց չորս խմբեր: Երեք խմբերը առաջ էին գնում նեղ ու անձուկ արահետով, ձգտելով հասնել ծառին և դրա պտղին: Չորրորդ խումբը չէր ձգտում դեպի ծառը, փոխարենը՝ ցանկանալով հասնել մեծ և ընթարձակ շենքին՝ որպես վերջնական նպատակակետի (տես 1 Նեփի 8.31–33):

1 Նեփի 8.21–23-ում մենք սովորում ենք մարդկանց առաջին խմբի մասին, ովքեր առաջ էին շարժվում և գտնվում էին դեպի կյանքի ծառը տանող ճանապարհի սկզբին: Ինչևէ, երբ խավարի մեգը պատում է մարդկանց, որը ներկայացնում է «դևի գայթակղությունները» (1 Նեփի 12.17), նրանք կորցնում են իրենց ճանապարհը, մոլորվում և կորում են:

Նկատեք, որ այս տողերում ոչինչ չի ասվում երկաթե ձողի մասին: Նրանք, ովքեր անտեսում և անլուրջ են վերաբերվում Աստծո խոսքին, չեն կարող օգտվել աստվածային ուղեցույցից, որը ցույց է տալիս ճանապարհը դեպի Փրկիչը: Համարեք, որ

ԼՈՒՍԱՆԱՎԱՐԸ ԴԵՑԳՈՐԾ ՍԹՈՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉԴԱՐՁՐԵՑԻՆՔ

Իմ կյանքի ընթացքում ես հոգևոր ուժ եմ քաղել «մենք ուշադրություն չդարձրեցինք նրանց վրա» արտահայտությունից (1 Նեփի 8.33): 1 Նեփիում դեպի կյանքի ծառը գնացողներից ոմանք չեն լսում ծաղրող ձայները: Ծաղրող մատները ուղղված էին նրանց կողմ, սակայն նրանք չթուլացան: Նրանք չլսեցին: Նմանապես, մենք այսօր լսում ենք գայթակղիչ բազմաթիվ բարձր ձայներ: Երբեմն իրական պայքար է պահանջվում՝ այդ ձայները չլսելու համար, սակայն Լեքին ապացուցում է, որ դա հնարավոր է:

Ես պարզել եմ, որ տաճար հաճախելով, իմ սուրբ գրությունները կարդալով, եկեղեցի գնալով և մարգարեին հետևելով, ես կարողանում են լռեցնել աշխարհիկ ձայները: Այս հասարակ բաները անելով, ես կարողանում եմ լսել Սուրբ Հոգու ձայնը: Դա այն ձայնն է, որն արժե լսել: Եվ երբ հետևում եմ Հոգու ձայնին, ես ավելի մեծ ուժ եմ ստանում՝ գայթակղությանը դիմակայելու համար:

Երբ մենք հետևում ենք Լեքիի օրինակին և ուշադրություն չենք դարձնում նրանց վրա, ապա կարող ենք մնալ նեղ ու անձուկ ճանապարհին և շարունակ ճաշակել Աստծո սերը:

Մելիսսա Հիթն, Յուտա, ԱՄՆ

այս խումբը գտել է ճանապարհը և առաջ շարժվել, դրսևորելով բավական հավատք առ Քրիստոս և հոգևոր համոզմունք, սակայն այդ մարդիկ տրվեցին դևի գայթակղություններին և մոլորվեցին:

1 Նեփի 8.24–28-ում մենք կարդում ենք մարդկանց երկրորդ խմբի մասին, որոնք գտան ուղիղ և նեղ արահետը, որը տանում է դեպի կյանքի ծառը: Այս խմբի մարդիկ «առաջ մղվեցին խավարի մեգի միջով՝ կառչելով երկաթյա ձողից, այնքան, մինչև որ առաջ եկան և ճաշակեցին ծառի պտղից» (հատված 24): Սակայն, երբ մեծ և ընդարձակ շենքի նրբագեղ հագնված բնակիչները ծաղրեցին երկրորդ խմբի մարդկանց, «նրանք ամաչեցին» և «հեռացան դեպի արգելված ուղիներ և կորան» (հատված 28): Նկատեք, որ այս խումբը նկարագրվում է որպես *«կառչող* երկաթյա ձողից» (1 Նեփի 8.24; շեշտադրումն ավելացված է):

Նշանակալից է, որ երկրորդ խումբը առաջ մղվեց հավատքով և վճռականությամբ: Նրանք նաև կրում էին երկաթե ձողի լրացուցիչ օրհնությունը և կառչում էին դրանից: Սակայն, երբ նրանք հաղթեցին հալածանքին և դժվարություններին, ընկան արգելված ուղու վրա և կորան: Անգամ հավատքով, վճռականությամբ և Աստծո խոսքով, այս խումբը ի վերջո կորավ, մի գուցե, այն պատճառով, որ միայն *պարբերաբար էր* կարդում *կամ* ուսումնասիրում *կամ* քննում սուրբ գրությունները: Երկաթե ձողից կառչելը ինձ համար նշանակում է միայն ժամանակ առ ժամանակ ուսումնասիրության *«պոռթկումներ»* կամ անկանոն խորացված ուսումնասիրություն, ոչ թե՝ Աստծո խոսքի շարունակ և հետևողական խոր ուսումնասիրություն:

30-րդ հատվածում մենք կարդում ենք մարդկանց երրորդ խմբի մասին, որոնք առաջ մղվեցին՝ «անընդհատ ամուր բռնած երկաթյա ձողից, մինչև առաջ եկան ու երեսնիվայր ընկան և ճաշակեցին ծառի պտղից»: Այս հատվածի հիմնական արտահայտությունը երկաթե ձողից *շարունակ ամուր բռնվելն է*:

Երրորդ խումբը նույնպես առաջ մղվեց հավատքով և համոզմունքով, սակայն, ոչինչ չի ասվում այն մասին, որ նրանք շեղվեցին, ընկան արգելված ուղու վրա և կորան: Հավանաբար, այս երրորդ խումբը *շարունակ* կարդում *և* ուսումնասիրում *և* քննում էր սուրբ գրությունները:

Անգամ հավատքով, վճռականությամբ և Աստծո խոսքով, նեղ ու անձուկ ճանապարհով առաջ մղվող, երկաթե ձողից կառչող երկրորդ խումբը, ի վերջո, կորավ, մի գուցե, այն պատճառով, որ միայն պարբերաբար էր կարդում կամ ուսումնասիրում կամ քննում սուրբ գրությունները:

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՄԵԹՅՈՒ ՈՒԵՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Երկաթե ձողից ամուր բռնելը, լայն իմաստով, նշանակում է սուրբ գրությունների հետևողական, ջանասիրաբար և աղոթքով կիրառում՝ որպես հայտնված ճշմարտության աղբյուր և վստահելի ուղեցույց նեղ ու անձուկ արահետով շարժվելու համար՝ դեպի կյանքի ծառը, այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոսը:

Հավանաբար, ջանասիրությունը թվացող «փոքր և հասարակ» բաներում և նվիրվածությունը դրանց (Ալմա 37.6) օգնեցին երրորդ խմբին փրկվել կործանումից: Մի գուցե, սուրբ գրությունները հավատքով ուսումնասիրելու արդյունքում ձեռք բերած «Տիրոջ մասին գիտելիքը» և «ճշմարտության գիտելիքը» (Ալմա 23.5, 6) տվեցին խոնարհության այն հոգևոր պարգևը, որն օգնեց մարդկանց այս խմբին *«երեսնի-վայր ընկնել* և ճաշակել ծառի պտղից» (1 Նեփի 8.30; շեշտադրումն ավելացված է): Մի գուցե, հոգևոր սնուցումն ու ամրությունն էր, որը ձեռք է բերվում, երբ շարունակ «սնվում են Քրիստոսի խոսքով» (2 Նեփի 31.20), որ թույլ տվեց այս խմբին չթաքնվել մեծ և ընդարձակ շենքի մարդկանց ծաղրուծանակից (տես 1 Նեփի 8.33): Սա այն խումբն է, որին դուք և ես պետք է ձգտենք միանալ:

Նեփիի եղբայրները հարցրեցին. «Ի՞նչ է նշանակում երկաթյա ձողը, որը տեսել էր մեր հայրը, որը տանում էր դեպի ծառը»:

«Եվ [Նեփին] ասաց նրանց, որ դա Աստծո խոսքն է, և նրանք, ովքեր ականջ կդնեն Աստծո խոսքին և *ամուր կբռնեն դրանից*, երբեք չեն կորչի. ոչ էլ գայթակղությունները և հակառակորդի կրակոտ նետերը կարող են հաղթել նրանց՝ կուրացնելով, տանելով նրանց դեպի կործանում» (1 Նեփի 15.23–24; շեշտադրումն ավելացված է):

Այսպիսով, ո՞րն է տարբերությունը երկաթե ձողից կառչելու և ամուր բռնվելու միջև: Թույլ տվեք առաջարկել, որ երկաթե ձողից ամուր բռնելը, լայն իմաստով, նշանակում է սուրբ գրությունների հետևողական, ջանասիրաբար և աղոթքով կիրառում՝ որպես հայտնված ճշմարտության աղբյուր և վստահելի ուղեցույց նեղ ու անձուկ արահետով շարժվելու համար՝ դեպի կյանքի ծառը, այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոսը:

«Եվ եղավ այնպես, որ ես հասկացա, որ երկաթյա ձողը, որը տեսել էր հայրս, Աստծո խոսքն էր, որը տանում էր դեպի կենաց ջրերի ակունքը կամ դեպի կենաց ծառը» (1 Նեփի 11.25):

Մորմոնի Գիրքը այսօր մեզ համար է

Մորմոնի Գիրքը առաջարկում է ճշմարտություններ, որոնք կիրառելի և կարևոր են մեր օրերում մեր պայմանների համար: Մորմոնի Գրքի հոգևոր և գործնական կիրառումը մեր կյանքում շեշտված է

Մորոնիի կողմից. «Ահա, ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք, և սակայն դուք ներկա չեք: Բայց ահա, Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ, և ես գիտեմ ձեր արարքները» (Մորմոն 8.35): Դիտարկելով մեր օրերը և պայմանները Աստծո կանխատեսված գիտելիքի միջոցով, Մորմոնի Գրքի հիմնական հեղինակները ներառել են այնպիսի թեմաներ և օրինակներ, որոնք մեծագույն կարևորություն ունեն վերջին օրերին երկրի բնակիչների համար:

Ես ձեզ հրավիրում եմ խորությամբ և աղոթքով մտածել հետևյալ հարցի շուրջ. **Ի՞նչ դասեր ես կարող եմ և պետք է քաղեմ կյանքի ծառի մասին Լեքիի տեսիլքից և *շարունակ* երկաթե ձողից *ամուր բռնվելու* սկզբունքից, որպեսզի կարողանամ հոգեպես ամուր կանգնել այն աշխարհում, որտեղ այսօր ապրում եմ:**

Եթե դուք ջանասիրաբար աշխատեք և ոգեշնչում փնտրեք՝ այս կարևոր հարցին պատասխանելու համար, դուք՝ Սուրբ Հոգու զորությամբ, ձեր սրտում և ձեր մտքում, ավելի լիարժեք կհասկանաք երկաթե ձողից *շարունակ ամուր բռնվելու* կարևորությունը: Եվ դուք կօրհնվեք, որպեսզի կիրառեք այդ դասերը հավատքով և ջանասիրությամբ ձեր անձնական կյանքում և ձեր տներում:

Թող որ մենք աչքեր ունենանք՝ տեսնելու, և ականջներ՝ լսելու Լեքիի տեսիլքի լրացուցիչ դասերը, որոնք կօգնեն մեզ «առաջ մղվել Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20): ■

ՀՂՈՒՄ

1. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 64:

ՄԻ ՀԵՌԱՑԻՐ ԱՅՍ ՈՒՂՈՒՑ

Իմ քույրը ծանոթացրեց ինձ Եկեղեցու հետ, և ես այն այնքան շատ սիրեցի, որ շուտով մկրտվեցի:

Թեև ես չէի կարող կարդալ, ես բացում էի Մորմոնի Գիրքը և թերթում էջերը: Ես մեծ ցանկություն ունեի կարդալու դրա էջերում գրված խոսքերը: Ամուսինս, որը միայն վերջերս է մկրտվել, զարմանքով տեսնելով ինձ նստած՝ գրքին նայելիս, ասում էր, որ ես վատնում եմ իմ ժամանակը:

Մեծ դժվարությամբ և Սփոփող Միության իմ քույրերի և իմ երեխաների օգնությամբ, ես սկսեցի կարդալ: Իմ նպատակը միշտ եղել է՝ կարդալ Մորմոնի Գիրքը:

Մի հատկապես դժվար պահի, երբ ես բացասական զգացումներ ունեի, ես հստակ լսեցի այս խոսքերը. «Մի հեռացիր ուղուց»: Ես նայեցի շուրջս, սակայն ոչ ոքի չտեսա:

Մի օր ես ասացի դստերս, որ կարողացել եմ սկսել ինքնուրույն կարդալ: Նա չհավատաց և խնդրեց ցույց տալ: Երբ ես կարդացի, նա չափազանց երջանիկ էր:

Իմ նպատակն է՝ կարդալ Մորմոնի Գիրքը սկզբից մինչև վերջ: Ես դանդաղ եմ կարդում, բայց կարողանում եմ հասկանալ, և, ինչն ավելի կարևոր է, զգալ Հոգին այս զարմանալի գրքի մեջ:

Եդիտ Ֆելիչիանո դե Պաուլա, Սան Պաուլո, Բրազիլիա



Երեց
Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների
Քվորումից

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔ՝

ամրացնել մեր հավատքը առ Հիսուս Քրիստոս

Մորմոնի Գիրքը հրավիրում է մեզ և մեր ընտանիքներին ըմբռնել առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքը, և տալիս է այն սկզբունքները, որոնք կօգնեն մեր ընտանիքներին հաջողության հասնել:

Մի քանի դարերի մարգարեների ուսմունքներից կազմված՝ Մորմոնի Գիրքը գրվել է ապագայի համար, երբ քահանայության բանալիների վերականգնումը՝ Իսրայելի տան մեծ հավաքման հետ մեկտեղ, պետք է պատրաստեր աշխարհը՝ Փրկչի երկիր վերադարձին (տես 2 Նեփի 25; 27; 3 Նեփի 21): Նեփիին նկարագրում է սուրբ տեքստը որպես «ձայնը մեկի, որն աղաղակում է փոշու միջից» (2 Նեփի 33.13): Մորոնին հայտարարում է. «Ահա, ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք, և սակայն դուք ներկա չեք: Բայց ահա, Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ» (Մորմոն 8.35):

Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի և ապագա օրերի համար: Մորմոնի Գրքի մոտ մեկ միլիոն օրինակ տպվել է Վերականգնումից հետո առաջին 100 տարիների ընթացքում: Այն տպվել է 15 լեզուներով, ինչը նշանակալից նախաձեռնություն էր: Հաջորդ 50 տարիների ընթացքում (1930–80), ավելի քան 25 միլիոն օրինակ է տպվել 41 լեզուներով: Այդ ժամանակից ի վեր՝ 30 տարի առաջ, Մորմոնի Գրքի ավելի քան 125 միլիոն օրինակ է տպվել 107 լեզուներով, ներառյալ՝ Մորմոնի Գրքի Ընտրանին: Մորմոնի Գրքի ազդեցությունը և ներգործությունը կշարունակի աճել, քանի դեռ Աստծո արքայությունը տարվում է ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի:

Տիտղոսաթերթը, որը, հավանաբար, գրվել է Մորմոնի կողմից, պարզաբանում է գրքի հիմնական նպատակները: Առաջին նպատակը մասնավորապես վերաբերում է Լեքիի զավակների սերունդներին: Վերջնական նպատակն է՝ համոզել բոլոր մարդկանց, «որ Հիսուսը Քրիստոսն է՝ Հավերժական Աստվածը» (Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ):

Կարևոր մեր օրերի համար

Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի մասին ևս մեկ վկայությունը այդքան կարևոր մեր օրերի համար: Ինչո՞ւ Տերը մեկ այլ վկայություն տվեց՝ Աստվածաշնչի զորեղ հայտարարությունները ամրացնելու համար:

Մենք ապրում ենք մի ժամանակ, որը տարբեր է մյուսներից: Գիտական նվաճումները բժշկությունը, տրանսպորտը,

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐԸ, ԼԵՅՆՈՐԻՆ ՀՈՒՆՅԱՆ, ՏՐՍՄԱՆՈՎԵԼ Է C. HARRISON CONROY CO.

Այսօրվա աշխարհում Կորիհորի՝ հակա-Քրիստոսի, մեծամիտ փաստարկները զտնում են իր ունկնդիրներին: Բայց երբ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը ամուր խարսխվում է մեր հոգիներում, այն իրական դարձ է բերում:

հարմարավետությունը և հարմարությունները հասցրել են այնպիսի մակարդակի, որի մասին մեր նախորդ սերունդները պատկերացում անգամ չէին կարող ունենալ: Երկրագունդը հեղեղված է տեղեկությամբ և տեխնոլոգիաներով, որոնք օգնում են լայնացնել ընտանեկան պատմության աշխատանքը և ավետարանի տարածումը, սակայն դրանք նաև տարածում են պոռնոգրաֆիան, վիրտուալ բռնությունը և այլ «չարիքներ ու դավադրություններ, որոնք կան դավադիր մարդկանց սրտերում» (ՎևՈւ 89.4): Աշխարհի մեծ մասը ապրում է նյութական ունեցվածքի հանդեպ ամուր կապերի առկայության պայմաններում:

Եթե մենք ուշադիր չլինենք, այս պայմանները կարող են շեղել կամ հրապուրել մեզ, հեռացնելով այն սկզբունքներից, որոնք հավերժական են և ճշմարիտ յուրաքանչյուր սերնդի համար:

Երբ 1970-ականների սկզբին ես երիտասարդ միսիոներ էի Եվրոպայում, մենք մեր ուսուցանումը հիմնականում սկսում էինք Ուրացության բացատրությունից,

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Ողջ իմաստությունը, որ ունեն բոլոր մարդիկ երկնքի տակ, չի կարող կազմել և ներկայացնել աշխարհին Մորմոնի Գրքի նման մի գիրք: Դրա սկզբունքները աստվածային են, դրանք Աստծուց են: Դրանք երբեք չէին կարող դուրս գալ հորինողի կամ վեպ գրողի ուղեղից: Ինչո՞ւ: Որովհետև խոստումները և մարգարեությունները, որոնք այն պարունակում է, իրականանում են ողջ երկրագնդի աչքի առաջ»:

President Wilford Woodruff (1807–98), *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* (2004), 119.

որովհետև Հիսուս Քրիստոսի աստվածային էությունը լայնորեն ընդունված էր: Երբ ես 20 տարի անց վերադարձա որպես միսիայի նախագահ, մենք մեր զրույցները սկսում էինք այլ կերպ, քանի որ հավատքն առ այն, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, որը տվել է Իր կյանքը մեր մեղքերի համար և հարություն առել երրորդ օրը, մեծապես թուլացել էր:

Այսօրվա աշխարհում Կորիհորի՝ հակա-Քրիստոսի, մեծամիտ փաստարկները գտնում են իր ունկնդիրներին.

«Ինչո՞ւ եք դուք սպասում մի Քրիստոսի: Քանզի ոչ մի մարդ չի կարող իմանալ որևէ բանի վերաբերյալ, որը պետք է գա:

Ահա, այս բաները, որ դուք կոչում եք մարգարեություններ, . . . ձեր հայրերի հիմար ավանդություններն են:

. . . Դուք չեք կարող իմանալ բաների մասին, որոնք դուք չեք տեսնում: . . .

. . . Ամեն մարդ առաջադիմել է՝ համաձայն իր հանճարի, և . . . ամեն մարդ հաղթել է՝ համաձայն իր ուժի» (Ալմա 30.13–15, 17):

Մեզ պետք է մեր սեփական ապահով և հիմնավոր հավատքը առ Տեր Հիսուս Քրիստոսը, և մենք օգնության կարիք ունենք՝ ամրացնելու համար մեր ընտանիքները, որպեսզի այս հավատքը թափանցի մեր զավակների և թոռների սրտերը: Երբ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը ամուր խարսխվում է մեր հոգիներում, այն իրական դարձ է բերում և արթնացնում ապաշխարությունը, ազնիվ աշակերտությունը, հրաշքները, հոգևոր պարգևները և հարատև արդարակեցությունը: Սա Մորմոնի Գրքի աստվածային առաքելության կարևոր մասն է:

Որպես երիտասարդ միսիոներ ես առավել հետաքրքիր զրույց եմ ունեցել մի քահանայի հետ: Նա մեզ ասաց, որ չի կարող ընդունել Մորմոնի Գիրքը, որովհետև այն բացեիբաց խոսում է Հիսուս Քրիստոսի մասին, օգտագործելով Նրա անունը և Նրա կյանքի իրադարձությունները՝ Նրա ծննդից հարյուրավոր տարիներ առաջ: Այս թափանցիկությունը նա համարում էր ոչ բնորոշ Հին Կտակարանի օրինաչափությանը, որն ավելի նրբանկատորեն է ակնարկում Փրկչին:

Ինձ համար Հիսուս Քրիստոսի մասին համարձակ հայտարարությունը հանդիսանում է Մորմոնի Գրքի հիմնական զորությունը: Անշուշտ, մենք պետք է ստանանք հոգևոր վկայություն այն մասին, որ գիրքն Աստծուց է: Սակայն, երբ այն ձեռք ենք բերում, Քրիստոսի նպատակները, Նրա կյանքի և Հարության իրականությունը և այն ամենի պարզությունը, ինչ մենք պետք է անենք՝ Նրան հետևելու և Նրա հետ

ԱՅԴ ԱՄԵՆԸ՝ ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԻՎ

Վեց ամիս էր անցել, ինչ ես մկրտվել էի, իսկ ես դեռ չունեի կայուն վկայություն Մորմոնի Գրքի մասին: Մի օր, երբ ես ցանկություն չունեի կարդալու սուրբ գրությունները, հիշեցի Ավետարանի Սկզբունքների իմ ուսուցչի խոսքերը. «Եթե դու չունես կարդալու ցանկություն, ուրեմն՝ Սատանան չի ուզում, որ դու կարդաս սուրբ գրությունները: Այդ զգուշացման շնորհիվ, ես բացեցի Մորմոնի Գիրքը: Ես կարդացի. «Ալմա 26.17: Այս խոսքերը լցրեցին հոգիս ուրախությամբ, որովհետև ես հիշեցի իմ վիճակը Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու անդամ դառնալուց առաջ: Տիրոջ Հոգին վկայեց իմ սրտին Մորմոնի Գրքի ճշմարտության մասին:

Ես չէի ուզում դառնալ լիաժամկետ միսիոներ, սակայն այդ օրվանից ամեն-ինչ փոխվեց: Ես ուժեղ զգացում ունեցա, որ աշխարհը պետք է իմանա ճշմարտությունը, և սկսեցի պատրաստել ինձ: Ես գնացի իմ ղեկավարների մոտ և ասացի նրանց Ծառայելու իմ ցանկության մասին: Ես բացատրեցի դա իմ Ծնողներին, ովքեր ապրում էին այլ քաղաքում և Եկեղեցու անդամներ չէին: Ապա ես վաճառեցի ամեն-ինչ և հագուստ գնեցի իմ միսիայի համար: Ի վերջո, ես Ծառայեցի միսիայում 2003-ից մինչև 2005թ.:

Այսօր, իմ ընտանիքը, ներառյալ՝ կինս և դուստրս, հավերժ կնքվել է: Այս օրհնության համար ես պարտական եմ Մորմոնի Գրքի իմ վկայությանը: Ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, քանզի այն վկայություն է տալիս Տեր Հիսուս Քրիստոսի մասին, և ես մոտենում եմ Աստծուն, երբ կարդում եմ այս սուրբ հիշատակարանը:

Էդիլսոն Լյուսերո դոս Սանտոս,
Պարանա, Բրազիլիա

Նեփիի տեսիլքը

Լեքիի վկայությունը

Բենիամին թագավորի քարոզը

Աբինադիի վկայությունը

Մորմոնի Գրքում Հիսուս Քրիստոսի մեծ քարոզները կարդալը և դրանց շուրջ խորհելը համոզիչ վկայություն է տալիս դրանց ճշմարտացիության մասին:

հավերժական կյանքով ապրելու համար, ցնցող և շոշափելի իրականություն է դառնում մեզ համար:

Վկայություն Հիսուս Քրիստոսի մասին

Սուրբ Հոգու զորությամբ՝ Մորմոնի Գրքում Հիսուս Քրիստոսի մեծ քարոզները կարդալը և դրանց շուրջ խորհելը համոզիչ վկայություն է տալիս դրանց ճշմարտացիության մասին: Ես սիրում եմ սավառնել Մորմոնի Գրքով, ճաշակելով Քրիստոսի հզոր վարդապետությունները՝ Նեփիի տեսիլքը կյանքի ծառի մասին, որտեղ հրեշտակը հարցնում է. «Գիտե՞ս դու Աստծո բարեհաճության մասին» (1 Նեփի 11.16); Լեքիի վկայությունն այն մասին, որ «փրկագնումը Սուրբ Մեսիայի մեջ է և նրա միջոցով. քանզի նա լի է շնորհով և ճշմարտությամբ» (2 Նեփի 2.6); Հակոբի լրացումն այն մասին, որ Նա է «դռան պահապանը . . . այնտեղ նա չի պահում ոչ մի ծառա» (2 Նեփի 9.41):

Այնուհետև Բենիամին Թագավորը մեզ ուսուցանում է աշակերտի հատկանիշները, իր անսասան հայտարարությամբ, որ «տրված չի լինի ոչ ուրիշ անուն, ոչ ուրիշ ճանապարհ, ոչ էլ միջոց, որի շնորհիվ կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին. միայն Քրիստոսի՝ Ամենակարող Տիրոջ անունով և միջոցով» (Մոսիա 3.17):

Շուտով, մենք Աբինադիի հետ ենք, որը պատրաստվում է տալ իր կյանքը իր համոզմունքների համար.

«Բայց կա հարություն, հետևաբար գերեզմանը հաղթանակ չունի, և մահվան խայթը կուլ է գնացել Քրիստոսին:

Նա է լույսն ու կյանքն աշխարհի. այո, լույս, որն անվերջ է, որը երբեք չի կարող խավարեցվել» (Մոսիա 16.8–9):

Ալման կյանքի է կոչում Քավության, արդարադատության և ողորմածության սքանչելի վարդապետությունները. «Ողորմության ծրագիրը չէր կարող իրականացվել, մինչև մի քավություն չարվեր. հետևաբար, Աստված ինքն է քավում աշխարհի մեղքերը՝ իրականացնելով ողորմության ծրագիրը, բավարարելով արդարադատության պահանջները, որպեսզի Աստված լինի կատարյալ, արդար Աստված և նաև ողորմած Աստված» (Ալմա 42.15):

Ապա մենք հասնում ենք Փրկչի հրաշալի այցին Լեքիի զավակներին: Մենք նույնպես զգում ենք Նրա սերը, Նրա կարեկցանքը, Նրա ուսմունքները, Նրա վկայությունը.

«Այս է ավետարանը, որ ես տվել եմ ձեզ, որ ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը: . . .

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ, որպեսզի ինչպես ես բարձրացվեցի մարդկանց կողմից, ճիշտ նույնպես մարդիկ բարձրացվեն Հոր կողմից՝ կանգնելու իմ առջև, դատվելու ըստ իրենց գործերի՝ լինեն դրանք բարի, թե լինեն դրանք չար» (3 Նեփի 27.13–14):

Վերջապես, Մորմոնի և Մորոնիի վերջին հորդորները. «Իմացեք, որ դուք պետք է . . . ապաշխարեք ձեր բոլոր մեղքերից ու անօրինություններից, և հավատաք Հիսուս Քրիստոսին, որ նա Աստծո Որդին է» (Մորմոն 7.5): «Այո, եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում, և հրաժարվեք ամեն անաստվածությունից. և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ, մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որպեսզի նրա շնորհով դուք կատարյալ լինեք Քրիստոսում» (Մորոնի 10.32):

Հիսուս Քրիստոսի հայտնությունը

Մորմոնի և Մորոնիի վերջին խոսքերը

Ընտանիքների շրջանակներում

Հոգեպես զորեղ, համոզիչ վկայությունն այն մասին, որ Հիսուս Քրիստոսը իսկապես խոստացված Մեսիան է՝ Աստծո օծյալ Որդին, որը ուղարկվեց երկիր, որպեսզի հարություն պարգևեր բոլոր մարդկանց և հոգևոր մաքրագործում նրանց, ովքեր կապաշխարեն և կհետևեն Նրան, դրսևորվում է ընտանիքների պատմության մեջ:

Մորմոնի Գիրքը սկսվում է մի ընտանիքի պատմությամբ՝ հոր և մոր, որդիների և դուստրերի մասին, որոնք հնազանդվում են իրենց մարգարե հոր հայտնությանը և թողնում են իրենց աշխարհիկ ունեցվածքը և հետևում Տիրոջ խորհրդին: Գիրքը լի է պատմություններով ծնողների մասին, որոնք ձգտում են իրենց երեխաների մեջ սերմանել Հիսուս Քրիստոսի մասին խոստումը և Նրա համար հույսը: Մի առիթով ես դրա էջերից հատուկ մի խորհուրդ քաղեցի հայրերից որդիներին՝ 52 տպագրական էջ: Մորմոնի Գրքում մենք տեսնում ենք, ինչպես են ծնողները ուսուցանում հավատք Քրիստոսի հանդեպ և հնազանդություն Աստծո պատվիրաններին՝ ինչպես երեխաներին, որոնք մանկուց հնազանդ են եղել, այնպես էլ՝ երեխաներին, որոնք դեռ պետք է գտնեին իրենց ուղին, երբեմն, միևնույն ընտանիքում: Դա դաս է մեր օրերի, մեր երեխաների, մեր ընտանիքների համար:

Կանանց և դուստրերի հատուկ դերը, որոշ չափով, չի նշվում, ինչպեսև ընդունված է հին գրառումներ կատարելիս: Սակայն ակնհայտից այն կողմ նայելիս, մենք տեսնում ենք նրանց հավերժական ազդեցությունը: Մենք արժեքավորում ենք թանկագին հատվածները, որոնք պատմում են կանանց և մայրերի մասին, օրինակ՝ երբ նկարագրվում են նրանց զգացմունքները որպես «քնքուշ և մաքրաբարո և նուրբ Աստծո առջև» (Հակոբ 2.7), կամ երբ Հելամանը նկարագրում է իր երիտասարդ մարտիկների բարձր հատկանիշները, որոնց վրա ազդել էին իրենց արդարակյաց մայրերը.

«Այո, և նրանք հնազանդվում և ձգտում էին ճշգրիտ կատարել հրամանի ամեն մի բառը. այո, և ճիշտ

ՆԵՓԻԻ ՏԵՍԻԼՔԸ, ՔԱՐԿ ՔԵՆԼԻ ՊՐԱՅԻ; ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՍՈՆՈՒՆ ՖՐԱՅԵԲԵՐԳ © 1951 IRI; ԸՆԴԻՄՈՒՄ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՐԸ, ՋԵՌՆԵՄԻՇՎՈՒՄ, ՀԱՆԳՈՒՅՑ ՏԱԼԻՍ; ՀԱՏԿԱՑՈՒՄ ԱՐԻՍՄԱՆԻ ՀԱՅԱՏՈՒՄԵՑՈՒՄԸ ՄՈՌ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ, ՍՈՆՈՒՆ ՖՐԱՅԵԲԵՐԳ © 1951; ՈՐ ՍԻՐԵՑ ԼԻՆԵՔ ԻՍԱ, ԳԼՈՒՆ ՔԱՓ © 1998, ՇԵՆԳԱՍԱՅՆԵԼ ՄՈՐՄՈՆԸ ԼՐՈՒԺԵՑՏԷ ՏԱԼԻՍ ՍՈՒՆԱԿԱ ՄԵԾ ԱՁԳԻՆ, ՍՈՆՈՒՆ ՖՐԱՅԵԲԵՐԳ © 1951 IRI

ԵՐԿՈՒ ԳԻՐՔ, ՄԵԿ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Ամուսինս, տուն վերադառնալիս, մի պայուսակ գտավ փողոցում: Ի զարմանս իրեն, ներսում նա գտավ Մորմոնի Գրքի մի օրինակ: Նա բերեց այն տուն և ցույց տվեց ինձ: Նա մի փոքր կարդաց դրանից, հետաքրքրվեց, սակայն հետո մի կողմ դրեց:

Կարճ ժամանակ անց նա մահացավ: Ես գնում էի մի եկեղեցուց մյուսը, փնտրելով սփոփանք, և ցանկանալով իմանալ, թե արդյոք կյանքը շարունակվում է մահից հետո: Ես լի էի կասկածներով և անպատասխան հարցերով:

Այնուհետև, աշխատանքի ճանապարհին, ես տեսա մի գիրք, որը ճանաչեցի՝ դա Մորմոնի Գիրքն էր: Ես վերցրեցի, քանի որ այն արթնացնում էր սիրելի ամուսնուս մասին հիշողությունները: Ես ինչ-որ մեկին ակնարկեցի այդ մասին, և նա առաջարկեց ինձ կարդալ այն:

Օրերը անցնում էին, և մի գիշեր ես այցելեցի քրոջս, որը Վերջին Օրերի Սուրբ էր: Լիաժամկետ միսիոներները այնտեղ էին և նրանք երգում էին «Ջավակն եմ Աստծո» երգը: Ես այդ պահին հասկացա, որ միսիոներները կարող էին պատասխանել իմ հարցերին:

Ջրույցներն անցնելուց և վկայություն ստանալուց հետո, ես մկրտվեցի: Այսօր ես կարող եմ վստահությամբ վկայել, որ Ջոզեֆ Սմիթը տեսել է Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Ես համոզված եմ, որ պատահական չէր, որ և ես, և ամուսինս գտանք Մորմոնի Գիրքը: Թեև ամուսինս չկարողացավ մկրտվել իր կյանքի ընթացքում, ես ուրախ եմ, որ տաճարի ծեսերի շնորհիվ, նա և ես և մեր երկու թանկարժեք երեխաները կարող ենք միասին լինել՝ որպես ընտանիք ողջ հավերժության մեջ: Մորմոնի Գիրքը մեզ միացրեց և խաղաղություն պարգևեց մեր հոգիներին:

Մարիա Մաշ, Գվատեմալա

Մորմոնի Գիրքը լի է պատմություններով ծնողների մասին, որոնք ձգտում են իրենց երեխաների մեջ սերմանել Հիսուս Քրիստոսի մասին խոստումը և Նրա համար հույսը:

իրենց հավատքի համաձայն կատարվեց նրանց համար. և ես հիշեցի խոսքերը, որ նրանք ասացին ինձ, որ իրենց մայրերը սովորեցրել էին իրենց։ . . .

Արդ, այս էր հավատքը նրանց, որոնց մասին ես խոսեցի. նրանք երիտասարդ են, և նրանց միտքն անսասան է, և նրանք շարունակ դնում են իրենց վստահությունը Աստծո վրա։ . . .

. . . Նրանք սովորեցվել էին իրենց մայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց։

Եվ նրանք կրկնեցին ինձ իրենց մայրերի խոսքերն՝ ասելով. Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա» (Ալմա 57.21, 27; 56.47–48)։

Ես հրավիրում եմ ձեզ խորհել այս հարցերի շուրջ, որոնք կօգնեն ձեզ վերագրել Մորմոնի Գրքի ուսմունքները ձեր ընտանիքին.

- Մորմոնի Գրքի ո՞ր հատվածներն են ուսուցանում մեզ այն մասին, որ երեխաները պետք է տեսնեն իրենց ծնողների հավատքի ամբողջականությունը և արդարակեցությունը։
- Ի՞նչ խորհուրդ են տվել Մորմոնի Գրքի հայրերը իրենց որդիներին, որով մենք կցանկանայինք կիսվել մեր երեխաների հետ։
- Ի՞նչ ենք մենք սովորում մեր ջանքերի մասին անհնազանդ երեխաների հետ կապված։
- Ինչպե՞ս են Մորմոնի Գրքի ծնողները իրենց խորին համոզմունքներով կիսվում իրենց երեխաների հետ։
- Ի՞նչ ենք մենք սովորում հավատքի մասին, որը փոխանցվում է սերնդից սերունդ։

Չկա ավելի կարևոր բան, քան մեկ ուրիշի հետ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով կիսվելը։ Այն պարգևում է հասկացողություն այս կյանքի մարտահրավերների մասին, երջանկություն՝ դժվարությունների ժամանակ և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում։

Կան աշխարհիկ բազմաթիվ ազդեցություններ, որոնք շեղում են մեզ և մեր ընտանիքներին այս առավել կենսական հավատքից։ Մորմոնի Գիրքը հրավիրում է մեզ և մեր ընտանիքներին շրջապատել մեզ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով, որը կօգնի մեր ընտանիքներին հաջողակ լինել։

Ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, և որ այն իսկապես տրվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին Մորոնի հրեշտակի կողմից՝ Տեր Հիսուս Քրիստոսի ղեկավարությամբ։ Այն մեր օրերի համար է, մեր երեխաների և թոռների համար։ Եթե մենք ամեն օր բացենք այն հավատքով, ես խոստանում եմ, որ Տիրոջ Հոգին մեզ հետ կլինի և մեր ընտանիքները հավերժ կօրհնվեն։ ■

ՀԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐԴԻ ԿԻՐԱՌՈՒՄՆԵՐ

Ես միշտ կարող եմ պատասխաններ գտնել Մորմոնի Գրքում։ Ես շատ բաներ եմ սովորում այն ուսումնասիրելուց, և զգում եմ, որ փոխվում եմ դեպի լավը։

Վերջերս ես մտածում էի, թե ինչ պետք է անեմ այժմ, երբ իմ վեց երեխաներն արդեն մեծացել են։ Ես մտածում էի, թե ինչ կցանկանար Երկնային Հայրը, որ ես անեի։

Սուրբ գրությունների իմ կանոնավոր ուսումնասիրության ժամանակ Մորմոնի Գրքում ես հանդիպեցի պատերազմների մասին պատմություններից մեկին։ Ես ցնցված էի այլ բաներից բացի, ընտանիքները պաշտպանելու Մորոնիի կոչով (տես Ալմա 46.12)։ Նեփիացիները վճռել էին պաշտպանել իրենց ընտանիքները։ Կարդալով այդ պատմությունը, ես որոշեցի՝ անկախ ամեն-ինչից, ունենալ ընտանիքի համար պայքարելու այդ նպատակը իմ կյանքում։ Դա անձնական մեղմ փորձառություն էր։

Ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար։ Ես երախտապարտ եմ, որ կարող եմ դիմել այս գրքին կյանքում ուղղություն ստանալու համար, այն, իսկապես, երկաթե ձող է (տես 1 Նեփի 8)։

Յուն Ջունգ, Կորեա

ԼԵՔԻՆ ԵՎ ՆՐԱ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԺԱՄԱՆԱԿՈՎ ԵՆ ԽՈՍՏԱՑԱԾ ԵՐԿԻՐ, ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եթե մենք չկասկածենք

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք օրինակելի երիտասարդ տղամարդկանց մասին, ովքեր չափազանց քաջ էին, համարձակ և ուժեղ: «Այո, նրանք ճշմարտության և լրջամտության տղաներ էին, քանզի նրանց սովորեցրել էին պահել Աստծո պատվիրանները և քայլել ուղիղ՝ նրա առաջ» (Ալմա 53.21): Այս հավատարիմ երիտասարդ տղամարդիկ հարգանքի տուրք մատուցեցին իրենց մայրերին, որոնք նրանց օրինակներն ու ուսուցիչներն էին:

Հելամանի մարտիկների մայրերը ապրում էին մի ժամանակ, որը նման չէր մեր ժամանակներին: Նրանց պայմանները դժվար և վտանգավոր էին, երիտասարդները կանչվել էին պաշտպանելու իրենց ֆիզիկական և հոգևոր ազատությունը: Այսօր, մենք ապրում ենք աշխարհում, որտեղ «մեր պատերազմը արյունի և մարմնի հետ չէ, այլ իշխանությունների և պետությունների հետ, այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ որ երկնավորների մեջ են» (Եփեսացիս Զ.12):

Դժվար ժամանակները պահանջում են ամուր ծնողներ և օրինակներ, ովքեր կուսուցանեն ճշմարտությունը, որը գիտեին Հելամանի մարտիկները. «Եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց» (Ալմա 56.47): Այսօր այդ ճշմարտությունը ուսուցանելը և դրա օրինակը ծառայելը քաջություն է պահանջում: Ինչևէ, մենք չպետք է վախենանք: Եթե մենք իմանանք, թե ովքեր ենք, ով է Աստված, և որ մենք ուխտեր ենք կապել Նրա հետ, մենք՝ այդ մարտիկների մայրերի նման, բարի ազդեցություն կգործենք:

Ամենայն հավանականությամբ, Հելամանի 2060 մարտիկներից յուրաքանչյուրը կրում էր իր մոր ազդեցությունը: Արդարակյաց այլ տղամարդկանց և կանանց հետ միասին, այս մայրերը՝ միավորվելով իրենց հավատքով ր օրինակով, ուսուցանել են ուխտերի զորությունը: Այդ օրերի երիտասարդները հասկացել են պատերազմի մեջ չընդգրկվելու իրենց ծնողների կապած ուխտը: Եվ անգամ երբ թվում էր, թե անհնար է, Երկնային Հայրը ճանապարհ էր բացում այդ ծնողների համար՝ պահելու համար իրենց ուխտերը և պահպանելու իրենց ազատությունը (տես Ալմա 56.5–9): Նմանապես, մենք պետք է պատվենք մեր ուխտերը, որպեսզի մեր սեփական և մեր ծխերի, ճյուղերի, համայնքների երեխաները և երիտասարդները հասկանան ուխտերը պահելու կարևորությունը:

Ի՞նչ կարող եմ ես անել

1. Ինչպե՞ս ես կարող եմ օգնել իմ քույրերին գտնել իրենց զորությունը և օգտագործել այն՝ աճող սերնդի վրա ազդեցություն գործելու համար:

2. Ի՞նչ ոգեշնչում ես կարող եմ գտնել Մորմոնի Գրքում՝ այսօր ինձ հանդիպող խնդիրներին լուծումներ տալու համար:

Եթե մենք հարգենք մեր ուխտերը, Երկնային Հայրը կարող է ճանապարհ պատրաստել մեզ համար: Մենք պետք է ճշգրտորեն ապրենք ըստ մեր ուխտերի: Մենք կարող ենք, օրինակ, ճշգրիտ լինել աղոթելու, սուրբ գրությունները ուսումնասիրելու, գործող տաճարային երաշխավորագիր կրելու, համեստ հագնվելու, Կիրակին պատվելու մեջ: Եթե մենք այդպես անենք, մեր երեխաները կիմանան և կկարողանան ասել. «Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա» (Ալմա 56.48):

Վերջին Օրերի սուրբ կանայք, ովքեր հասկանում են, որ իրենց ուժը գալիս է Տիրոջ Քավությունից, չեն հանձնվում դժվար և հուսահատ պահերին: Որպես ուխտեր պահողներ, մենք ձգտում ենք կատարելապես մեծացնել, սնուցել և պաշտպանել երեխաներին և երիտասարդներին, որպեսզի մի օր կարողանանք ասել այս աճող սերնդի մասին. «Ես երբեք չէի տեսել այդպիսի մեծ արիություն, ոչ, ոչ էլ բոլոր Նեփիացիների մեջ» (Ալմա 56.45): ■

Ջուլի Բ. Բեք, Սփոփող Միության գերագույն նախագահ

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

Սուրբ գրություններից

Ալմա 53; 56–58

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՈՐԵՐՏ ՔԵՅՍԻԻ

ԵՐԿՈՒ ՀԱՋԱՐ ՔԱՋ ՄԱՐՏԻԿ

Խոսք՝ Բոնմի Հարթ Մյուրեյ
Երաժշտություն՝ Ջենիս Քափ Փերի

Համարձակ ♩ = 96–100

1. Եր - կու հա - զար քաջ մար - տիկ՝ հը - զոր ու պա - տա - նի, Երբ
2. Եղ - բայր - նե - րին ի - րենց մայ - րերն էին ու - սու - ցա - նել՝ Աստ -
3. Քաջ եղ - բայր-ներն Հե - լա - մա - նի հրա - մա - նով միա - սին, Հա -
4. Եր - կու հա - զար մար - տիկ՝ հա - նուն ի - րենց նպա-տա - կի, Աստ -

կրռ - վե - լու կանչ - վե - ցին, ա - հա այս - պես ա - սա - ցին. Աստ -
ծուն միշտ վրս - տա - հել, զոր - ծով, մրտ - քով շի - տակ լի - նել: Այդ
վատ - քով լի, ան - վախ, հա - մար - ձակ ոտ - քի կանգ - նե - ցին: Ար -
ծո ու - ժով կրռ - վե - ցին, մեկ հո - գի իսկ չը - կորց - րին: Հա -

ված մեզ հետ է, լը - սում ենք Նը - րա հրա - մա - նին: Կյան -
ժա - մա - նակ Աստ - ված կը - լի - ներ ի - րենց կող - քին, Եվ
յուն չէ - ին տեն - չում, այլ՝ ա - զա - տու - թյուն ան - գին: Կրռ -
վատ - քի մեջ ուժն ի - րենց ա - վե - լի զո - րաց - րին: Վիթ -

քը պատ - ռաստ զո - հե - լու՝ ան - վախ ա - ռաջ մրդ - վե - ցին:
մայ - րե - րին լը - սե - ցին՝ Տի - րո - ջը վրս - տա - հե - ցին:
վե - ցին հա - նուն կյան - քի, Աստ - ծո և ըն - տա - նի - քի:
խա - րի էին, ա - յո, քան - զի Տերն էր նը - րանց կող - քին:

©2009՝ Բոնմի Հարթ Մյուրեյ և Ջենիս Քափ Փերի: Բոլոր իրավունքները վերապահված են:
Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով
եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:
Այս ծանուցումը պետք է ներառվի յուրաքանչյուր օրինակի մեջ:

Ալմա 53, 56-57

Մեր օրերի ուսմունքները

Տերը մտածում է մեր մասին

«Ես հիշում եմ Տիրոջ խոսքերը Մորմոնի Գրքի Եթերի գրքից: Տերն ասել է. «Դուք չեք կարող անցնել այս մեծ ջրանդունդը, եթե ես չնախապատրաստեմ ձեզ ծովի ալիքների դեմ, և քամիների, որոնք առաջ գնացած կլինեն, և ջրհեղեղների, որոնք պիտի գան» [Եթեր 2.25]: Իմ եղբայրներ և քույրեր, Նա պատրաստել է մեզ: Եթե մենք ուշք դարձնենք Նրա խոսքերին և ապրենք պատվիրաններով, մենք հաջողությամբ դուրս կգանք թույլատրելիության և ամբարշտության այս ժամանակից՝ մի ժամանակից, որը կարելի է համեմատել ալիքների, քամիների և ջրհեղեղների հետ, որոնք կարող են ոչնչացնել մեզ: Նա միշտ մտածում է մեր մասին: Նա սիրում է մեզ և կօրհնի մեզ, եթե մենք անենք այն, ինչը ճիշտ է»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Փակման ելույթ», *Լիահոնա,* Նոյ. 2009, 109:

Հիսուսը Քրիստոսն է

«Մորմոնի Գիրքը մեր ունեցած առավել հզոր գրավոր վկայությունն է, որ Հիսուսը Քրիստոսն է: Ըստ Նեփիի խոսքերի, ո՞րն է Սուրբ Հոգին ստանալու հիմքը: Հավատքն առ Տեր՝ Հիսուս Քրիստոս: Արդյո՞ք Մորմոնի Գիրքը այժմ կարդալը ապահովում է Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով հետագայում: Դուք դրա վրա չեք դնի ձեր հույսը, եթե ուշադրությամբ կարդաք Նեփիի գրվածքները: Նա ասել է, որ սա «է պարգևը . . . բոլոր նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են նրան»: Ջանասիրաբար անշուշտ նշանակում է կանոնավոր կերպով: Եվ դա անշուշտ նշանակում է խորհել և աղոթել: Իսկ աղոթելը հիարկե ներառում է ջերմեռանդ աղոթք՝ ճշմարտությունն իմանալու համար: Դրանից պակասը դժվար թե ջանասիրություն համարվի: Եվ դրանից պակասը բավարար չի լինի ինձ և ձեր համար»:

President Henry B. Eyring, First Counselor in the First Presidency, "Going Home," in *Brigham Young University 1986–87 Devotional and Fireside Speeches* (1987), 77–78.

Ավետարանի հայտարարությունը

«Ավետարանական ուղերձի առանցքային տարրերը գտնվում են բոլոր սուրբ գրություններում, սակայն առավել հստակ դրանք տրված են Մորմոնի Գրքում և Մարգարե Ջոզեֆ Սմիթի հայտնություններում: Այստեղ Հիսուսն Ինքը պարզությամբ հռչակում է իր վարդապետությունը և Իր ավետարանը, որով Աստծո զավակները պետք է շարժվեն՝ «հավերժական կյանք ունենալու» համար (ՎևՈւ 14.7)»:

President Dieter F. Uchtdorf, Second Counselor in the First Presidency, "Have We Not Reason to Rejoice?" *Liahona,* Nov. 2007, 19.

Մենք սովորում ենք հնադարյան մարգարեներից, որ Մորմոնի Գիրքը պարունակում է շատ «պարզ ու արժեքավոր բաներ», որոնք պահվել էին մեզ մեր օրերում ուսուցանելու համար (տես 1 Նեփի 13.40; 19.3)։ Այս ճշմարտությունները պարզություն և ավելի խորը հասկացողություն են պարգևում Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվության մասին և օգնում են Մորմոնի Գրքի ուսանողներին կյանքի դժվարությունների միջով անցնել հույսով և ամրությամբ։ Հետևյալ մեջբերումներում, ժամանակակից մարգարեները և առաքյալները վկայում են այս կարևոր ուսմունքների մասին։

Փոքր երեխաների մկրտությունը

«[Որոշ մարդիկ հավատում են], որ փոքր երեխաները ի սկզբանե մեղքի մեջ են ստեղծվում և մտնում են մահկանացու կյանք բնական մեղսավոր վիճակում։ Այդ վարդապետությունը կեղծ է։

«Եթե ճշմարտությունն եմ իմացել, ձեր մեջ վիճաբանություններ են եղել՝ ձեր փոքր երեխաների մկրտության վերաբերյալ» (Մորոնի 8.5)։

Նա նրանց վիճաբանությունը կոչում է «կոպիտ սխալ» և գրում է.

Լսեք Քրիստոսի՝ ձեր Քավչի՝ ձեր Տիրոջ և ձեր Աստծո խոսքերը։ Ահա, ես եկա աշխարհ՝ ապաշխարության կանչելու ոչ թե արդարներին, այլ մեղավորներին. ողջերը բժշկի կարիք չունեն, այլ նրանք, որ հիվանդ են. ուստի, փոքր երեխաները ողջ են, քանզի նրանք ընդունակ չեն մեղք գործելու. ուստի, Ադամի անեծքը նրանցից վերցված է ինձանով, այնպես որ այն զորություն չունի նրանց վրա . . .

Եվ այս ձևով Սուրբ Հոգին հայտնեց ինձ Աստծո խոսքը. ուստի, սիրելի որդիս, ես գիտեմ, որ դա լուրջ ծաղր է Աստծո առաջ, որ դուք մկրտեք փոքր երեխաներին» (Մորոնի 8.7–9)։ . . .

Կարդացեք ամբողջ գրվածքը։ Դա ճիշտ վարդապետություն է»։

President Boyd K. Packer, President of the Quorum of the Twelve Apostles, "Little Children," *Ensign,* Nov. 1986, 17.

Մորմոնի Գրքի նախազգուշացումները

«Մորմոնի Գրքի դասերից մենք սովորում ենք պատերազմի պատճառների և հետևանքների և այն մասին, թե ինչ պայմաններում է այն արդարացված։ Այն պատմում է գաղտնի խմբակցությունների չարիքների և վտանգների մասին, որոնք ստեղծվում են մարդկանց վրա զորություն ունենալու և մարդկանցից շահ ստանալու համար։ Այն պատմում է Սատանայի իրական լինելու և նրա օգտագործած հնարքների մասին։ Այն մեզ խորհուրդ է տալիս հարստության ճիշտ օգտագործման վերաբերյալ։ Այն պատմում է մեզ ավետարանի պարզ և արժեքավոր ճշմարտությունների մասին և Հիսուս Քրիստոսի իրականության և աստվածայնության, և ողջ մարդկության համար Նրա քավող զոհաբերության մասին։ Այն տեղեկացնում է մեզ վերջին օրերին Իսրայելի տան հավաքման մասին։ Այն պատմում է մեզ միսիոներական աշխատանքի նպատակի և սկզբունքների մասին։ Այն նախազգուշացնում է մեզ հպարտության, անտարբերության, հետաձգման, կեղծ ավանդույթների վտանգների, կեղծավորության և անբարոյականության դեմ։

Այժմ մեզանից է կախված Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը, դրա սկզբունքները սովորելը և մեր կյանքում կիրառելը»։

Elder L. Tom Perry of the Quorum of the Twelve Apostles, "Blessings Resulting from Reading the Book of Mormon," *Liahona,* Nov. 2005, 8.

ԵՐԿՈՒ ԳԱՎԱՌԱՆ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՄԵԿ

Գրեթե ծնված օրվանից ես տարված էի Աստվածաշնչով, սակայն, մինչև չունեցա Մորմոնի Գրքի օրինակը, չծանոթացա ավետարանի բոլոր սկզբունքներին։ Ես բացահայտեցի, որ Հիսուս Քրիստոսի լիարժեք ավետարանը մատչելի է միայն այս երկրորդ «փայտի» մասին գիտելիքով (տես Եզեկիել 37.15–17)։ Երբ երկուսը ինձ համար միացան, նրանք կյանքը փոխող փորձառություն պարգևեցին. Խորացված հասկացողություն այն մասին, թե ով եմ ես և ինչ ներուժ ունեմ՝ դառնալու Աստծո հավերժական ընտանիքի մասը։ Այս մարգարեական միացումը՝ «որ մեկ փայտ դառնան» (հատված 17) - դարձավ հնարավոր երկու հավատարիմ միսիոներ քույրերի շնորհիվ, որոնք մտահոգ գտնվեցին և ինձ տվեցին երկրորդ փայտի օրինակը։

Նախկինում ես քայլում էի մոմի լույսով, այժմ՝ ամեն անկյուն և ճեղք լուսավորված է ավետարանի օրինությունների լրիվությամբ։ Ես զգում եմ, կարծես, կյանքի նոր գլուխ է բացվել ինձ համար։

Էյրի Սալա, Բրիտանական Կոլումբիա, Կանադա

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

Ես կարդացել եմ Մորմոնի Գիրքը իմ մկրտվելուց հետո՝ 1995թ.: Բայց միայն ամուսնությունիցս հետո, կարդալով Երուսաղեմ և Երուսաղեմից Լեքիի որդիների ճանապարհորդության մասին, ես հասկացա այդ պատմության իմաստը իմ ընտանիքի համար:

Թվում է, թե Տերը ցանկանում էր, որ Լեքին հավերժական ընտանիք ունենար: Նա սկզբում պատվիրեց Լեքիին թողնել ամեն-ինչ և փրկել իր *ներկա* ընտանիքը, տանելով նրանց խոստացված երկիր: Երբ նրանք դեռ անապատում էին, Տերը Լեքիին պատվիրեց ուղարկել իր որդիներին հետ՝ ընտանիքի *մահացած* անդամների գրառումները բերելու: Դրանից հետո, Նա ուղարկեց նրանց Իսմայելի և նրա դուստրերի ետևից: Սա պատրաստում էր նրանց իրենց

Մորմոնի Գրքի մասին վկայությունները Տասներկու Առաքյալների Քվորումի մյուս անդամների կողմից կարող եք կարդալ այս համարի 10, 28, 32, 38 և 80 էջերում:



Բոլոր բաները պիտի վերականգնվեն

«Հարության բառացի և համընդհանուր էությունը վառ նկարագրված է Մորմոնի Գրքում: Ամուղեկ մարգարեն ուսուցանել է.

Արդ, կա մահ, որը կոչվում է ժամանակավոր մահ. և Քրիստոսի մահը պիտի ասրձակի այս ժամանակավոր մահվան կապանքները, այնպես որ բոլորը պիտի բարձրացվեն այս ժամանակավոր մահից:

Ոգին ու մարմինը կրկին պիտի վերամիավորվեն՝ կատարյալ տեսքով. և վերջավորություն ու հոդ պիտի վերականգնվեն իրենց բնական կառուցվածքով, ճիշտ ինչպես մենք հիմա ենք: . . .

Արդ, այս վերականգնումը պիտի գա բոլորին, ծերին ու երիտասարդին, ճորտին ու ազատին, տղամարդուն ու կնոջը, ամբարիշտին ու արդարին. և նույնիսկ մի մազ իսկ նրանց գլխից չի կորչի. այլ ամեն ինչ պիտի վերականգնվի իր կատարյալ կառուցվածքով» (Ալմա 11.42–44):

Ալման նաև ուսուցանել է, որ հարության մեջ «բոլոր բաները պիտի վերականգնվեն իրենց ճիշտ և կատարյալ կառուցվածքով» (Ալմա 40.23): . . .

Ինչպիսի սփոփանք է իմանալը, որ բոլոր նրանք, ովքեր այս կյանքում զրկված են եղել, . . . հարություն կառնեն «կատարյալ կառուցվածքով»:

Elder Dallin H. Oaks of the Quorum of the Twelve Apostles, "Resurrection," *Liahona,* July 2000, 17.

Գաղտնի խմբակցությունների վտանգները

«Մորմոնի Գիրքը ուսուցանում է, որ հանցագործ գաղտնի խմբակցությունները լուրջ վտանգ են ներկայացնում ոչ միայն անհատների և ընտանիքների, այլ նաև ողջ քաղաքակրթությունների համար: Այսօրվա գաղտնի խմբակցություններ են՝ ավազակախմբերը, թմրանյութեր վաճառող խմբերը և կազմակերպված հանցավոր ընտանիքները: Մեր օրերի գաղտնի խմբակցությունների գործունեությունը շատ նման է Մորմոնի Գրքի ժամանակների Գադիանթոնի ավազակների գործունեությանը: . . . Նրանց նպատակներն են՝ «սպանել, թալանել, գողանալ և պոռնկություններ և ամեն ձևի ամբարշտություն անել, հակառակ իրենց երկրի օրենքների և նաև իրենց Աստծո օրենքների» [Հելաման 6.23]:

Եթե մենք զգույշ չլինենք, ապա այսօրվա գաղտնի խմբակցությունները կարող են ուժ և ազդեցություն ձեռք բերել այնպես արագ և լիարժեք, ինչպես Մորմոնի Գրքի ժամանակներում»:

Elder M. Russell Ballard of the Quorum of the Twelve Apostles, "Standing for Truth and Right," *Ensign,* Nov. 1997, 38.

ապագա ընտանիքի համար:

Մեր հավերժական ընտանիքի համար ներկայի, անցյալի և ապագայի միջև կապ ստեղծելը կարևոր պարտականություն է, որը ես պետք է փայփայեմ, ինչպես Լեքին էր փայփայում: Մի գուցե այդ փորձությունները պատրաստեցին Լեքիին կյանքի ծառի իր տեսիլքին և օգնեցին հասկանալ, որ Աստծո սերը պետք է սերմանվի հավերժական ընտանիքում:

Սալոտ Մալանի Մայվիրիվիրի, Հավայան կղզիներ, ԱՄՆ

Լուծել կյանքի խնդիրները

«Մորմոնի Գիրքը պարունակում է ուղերձներ, որոնք աստվածայնորեն էին տրվել՝ ցույց տալու համար, թե ինչպես կարելի է ուղղել կեղծ ավանդույթների ազդեցությունը և ձեռք բերել կյանքի լիությունը: Այն ուսուցանում է, թե ինչպես կարելի է լուծել այն խնդիրները և դժվարությունները, որոնց մենք հանդիպում ենք այսօր: . . . [Տերը] մեզ ուղի է տվել՝ կյանքի լուրջ սխալները ուղղելու համար, սակայն այդ ուղեցույցը արժեք չունի, եթե մնա կնքված փակ գրքում»:

Elder Richard G. Scott of the Quorum of the Twelve Apostles, "True Friends That Lift," *Ensign,* Nov. 1988, 76.

Մեր ուխտերի հիշեցումը

«Մորմոնի Գրքում մենք հիշեցվում ենք, որ մեր մկրտությունը ուխտ է՝ «կանգնելու որպես Աստծո [և Նրա արքայության] վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ» (Մոսիա 18.9; շեշտադրումն ավելացված է)»:

Elder Robert D. Hales of the Quorum of the Twelve Apostles, "The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom," *Liahona,* Jan. 2001, 7.

Հնազանդության օրհնությունները

«Մորմոնի Գրքում շատ տեղերում մարդիկ խոստում են ստանում, որ կբարգավաճեն երկրում, եթե պահեն պատվիրանները [տես 1 Նեփի 2.20; 2 Նեփի 4.4]: Այդ խոստումը հաճախ ուղեկցվում է նախազգուշացմամբ, որ եթե նրանք չպահեն Աստծո պատվիրանները, ապա կկտրվեն Նրա ներկայությունից [տես Ալմա 36.30]»: ■

Elder Quentin L. Cook of the Quorum of the Twelve Apostles, "Hope Ya Know, We Had a Hard Time," *Liahona,* Nov. 2008, 104.

ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼ ԼՈՒՅՍՈՎ

Եթերի 2-րդ գլխում մենք կարդում ենք, որ Հարեդի եղբայրն անհանգստանում էր, որ իրենց նավերում լույս չի լինի: Երբ նա այս մասին հարցրեց Տիրոջը, Տերը պատասխանեց հարցով. «Ի՞նչ կկամենաք դուք, որ ես պատրաստեմ ձեզ համար, որ դուք կարողանաք լույս ունենալ» (հատված 25):

Ես շատ եմ մտածել այն մասին, թե ինչպես Հարեդի եղբայրը պատասխանեց Տիրոջ հարցին: Նախ, նա բարձրացավ սար, որտեղ նա «ապարից հալեց տասնվեց փոքր քարեր» (Եթեր 3.1): Նա քարերը տարավ սարի գագաթ, որտեղ աղոթեց: Նա նախևառաջ խոնարհեցրեց իրեն Տիրոջ առաջ: Նա խնդրեց ողորմություն և երախտապարտություն հայտնեց Աստծո զորության համար, որով Նա կարող էր պատասխանել իր աղոթքին: Ապա նա ցույց տվեց իր հավատքն ասելով. «Մենք գիտենք, որ դու ի վիճակի ես ցույց տալ մեծ զորություն, որը փոքր է թվում մարդկանց հասկացողությանը» (Եթեր 3.5): Հարեդի եղբայրը խնդրեց Տիրոջը դիպչել քարերին, որպեսզի դրանք կարողանային լուսավորել նավակները:

Այս հատվածը փոխեց աղոթելու իմ եղանակը: Անցյալում ես հաճախ հարցնում էի. «Հայր, ի՞նչ ես ցանկանում, որ ես անեմ»: Իրականում, շատ իրավիճակներ պահանջում են, որ ես մտածեմ, վերլուծեմ իմ միջոցները, կազմեմ ծրագիր, ապա դիմեմ Հորը և հարցնեմ Նրան, թե արդյոք ծրագիրը լավն է, դրանից հետո աղոթեմ հրաշքների համար, որոնք ինքս չեմ կարող իրականացնել:

Ելենա Գոմեզ դե Սանտուրիոն, Ուռուգվայ



Նախագահ
Էզրա Թավթ Բենսոն
(1899–1994)

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔ՝ մեր կրոնի պորտաքար

Էզրա Թավթ Բենսոնը դարձավ Եկեղեցու 13-րդ Նախագահը 1985թ. նոյեմբերին: Նա հայտնի է իր հաստատուն վկայությամբ՝ Մորմոնի Գրքի զորության մասին, և սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությանը, միսիոներական աշխատանքին և ավետարանի ուսուցմանը մեծ կարևորություն տալու համար: Այս տարի լրանում է 1986թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի այս ուղերձի 25-ամյակը:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այսօր ես կցանկանայի խոսել առավել կարևոր պարգևներից մեկի մասին, որ տրվել է աշխարհին արդի ժամանակներին: Պարգևը, որի մասին ես մտածում եմ, առավել կարևոր է, քան որևէ հայտնագործություն, որ արվել է արդյունաբերական և տեխնոլոգիական հեղափոխությունների արդյունքում: Դա մի պարգև է, որը մարդկության համար ավելի մեծ արժեք ունի, քան բազմաթիվ զարմանալի առաջադիմությունները, որ տեսնում ենք ժամանակակից բժշկության մեջ: Այն մարդկության համար ավելի մեծ արժեք է ներկայացնում, քան օդային կամ տիեզերական ճանապարհորդության զարգացումները: Ես խոսում եմ Մորմոնի Գրքի պարգևի մասին, որը տրվեց մարդկությանը 156 տարի առաջ:

Այս պարգևը պատրաստվել էր Տիրոջ ձեռքով ավելի քան հազար տարիների ընթացքում, ապա թաքցվել էր Նրա կողմից, որպեսզի պահպանվեր իր մաքրությամբ մեր սերնդի համար: Երևիթե, չկա ավելի մեծ վկայություն, որը հստակեցնում է այս ժամանակակից սուրբ գրքի կարևորությունը, քան այն, ինչ Տերն Ինքն է ասել դրա մասին:

Իր բերանով Նա վկայություն է բերել, (1) որ այն ճշմարիտ է (ՎԵՈՒ 17.6), (2) որ այն պարունակում է ճշմարտությունը և Իր խոսքերը (ՎԵՈՒ 19.26), (3) որ թարգմանվել է ի վերուստ ստացած զորությամբ (ՎԵՈՒ 20.8), (4) որ պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի ամբողջությունը (ՎԵՈՒ 20.9; 42:12), (5) որ տրվել է ոգեշնչմամբ և հաստատվել է հրեշտակների ծառայությամբ (ՎԵՈՒ 20.10), (6) որ տալիս է ապացույց սուրբ գրությունների ճշմարտության մասին (ՎԵՈՒ 20.11), և (7) որ նրանք, ովքեր ընդունում են այն հավատքով, պետք է ստանան հավերժական կյանք (ՎԵՈՒ 20.14):

Մորմոնի Գրքի կարևորության երկրորդ հզոր վկայությունը նշելն է, թե երբ էր Տերը նախատեսել, որ այն երևան գար սկիզբ առնող Վերականգնման ժամանակացույցի շրջանակներում: Դրան նախորդող միակ իրադարձությունը Առաջին Տեսիլքն էր: Այդ հրաշալի հայտնության ժամանակ, Մարգարե Ջոզեֆ Սմիթը իմացավ Աստծո իրական էության մասին և որ Աստված իր համար աշխատանք ուներ: Մորմոնի Գրքի երևան գալը հաջորդ իրադարձությունն էր:

Մտածեք, թե ինչ էր դա ենթադրում: Մորմոնի Գրքի

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՌԵՅԿԻՎԻ ՍՊԹՈՆԵԼԻ ԿՈՂՄԻՑ; ԱՋՈՒՍ. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՎԵՐԵԼԵՆ Ս. ԱՍՊԵՐՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ; ՆԱԽԱԳԱՀ ԲԵՆՍՈՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԳՈՒՍՈՎ ՖՈՏՈԳՐԱՖԻԻ ԿՈՂՄԻՑ

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«[Մորմոնի Գիրքը] Աստծո խոսքն է: Այն հզոր երկրորդ վկայություն է Քրիստոսի մասին: Եվ, անշուշտ, բոլոր ճշմարիտ հավատացյալները, ովքեր սիրում են Քավչին, կողջունեն նրա աստվածայնության մասին լրացուցիչ վկայությունը:

Այս ոգեշնչող գիրքը երբեք չի փոփոխվել չլիազորված թարգմանիչների կամ կողմնակալ աստվածաբանների կողմից, այլ աշխարհ է եկել մաքուր տեսքով և անմիջապես պատմաբաններից և կրճատողներից: Փորձաշրջանում է ոչ թե գիրքը, այլ նրա ընթերցողները:

President Spencer W. Kimball (1895–1985), *The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball (1982), 133.

երևան գալը նախորդեց քահանայության վերականգնմանը: Այն հրատարակվեց Եկեղեցու կազմակերպվելուց միայն մի քանի օր առաջ: Սրբերը ստացան Մորմոնի Գիրքը մինչև այն հայտնությունները ստանալը, որոնք պարունակում էին այնպիսի մեծ վարդապետություններ, ինչպիսին են՝ փառքի երեք աստիճանները, սելեստիալ ամուսնությունը կամ մահացածների համար աշխատանքը: Այն տրվեց քահանայության քվորումների և Եկեղեցու կազմավորումից առաջ: Արդյո՞ք սա ինչ-որ բան չի ասում այն մասին, թե ինչպես է Տերը դիտում այս սուրբ աշխատանքը:

Երբ մենք հասկանում ենք, թե ինչ է Տերը զգում այս գրքի հանդեպ, զարմանալի չէ, որ Նա մեզ տալիս է լուրջ նախազգուշացումներ այն մասին, թե ինչպես մենք պետք է ընդունենք այն: Նրանից հետո, երբ Նա ասում է, որ նրանք, ովքեր ընդունում են Մորմոնի Գիրքը հավատքով, աշխատում են արդարակյաց լինել, կստանան հավերժական փառքի պսակը (տես ՎԿՈՒ 20.14), Տերը շարունակում է հետևյալ նախազգուշացմամբ.«Բայց նրանք, ովքեր կկարծրացնեն իրենց սրտերն անհավատությամբ և կմերժեն այն, այն կդառնա իրենց իսկ դատապարտությունը» (ՎԿՈՒ 20.15):

1829թ. Տերը զգուշացնում է Սրբերին, որ նրանք չպետք է կատակեն սուրբ բաների շուրջ (տես ՎԿՈՒ 6.12): Անշուշտ, Մորմոնի Գիրքը սուրբ է, բայց, միևնույն է, շատերը լուրջ չեն ընդունում այն, վերաբերվելով դրան որպես քիչ կարևորություն կրող առարկայի:

1832թ., երբ վաղ միսիոներներից մի քանիսը վերադարձան իրենց միսիայի դաշտից, Տերը նախատեց նրանց Մորմոնի Գրքին թեթևակի վերաբերվելու համար: Այդ վերաբերմունքի արդյունքում, նա ասաց, որ նրանց ուղեղները խավարել են: Այս սուրբ գրքին թեթևակի վերաբերվելը ոչ միայն լույսի կորուստ բերեց հենց իրենց կյանքում, այլ նաև պատժի տակ դրեց ամբողջ Եկեղեցին՝ Սիոնի բոլոր զավակներին: Տերն ասել է. «Եվ նրանք պետք է մնան այդ դատապարտության տակ, մինչև որ ապաշխարեն և հիշեն նոր ուխտը, այսինքն՝ Մորմոնի Գիրքը» (ՎԿՈՒ 84.54–57):

Արդյո՞ք այն փաստը, որ մենք ունենք Մորմոնի Գիրքը արդեն մեկուկես դար, ավելի քիչ արժեքավոր է այն դարձնում այսօր: Արդյո՞ք մենք հիշում ենք նոր ուխտը՝ Մորմոնի Գիրքը: Աստվածաշնչում մենք ունենք Հին և Նոր Կտակարանները: *Կտակարան* բառը անգլերենում ծագում է հուներեն բառից, որը կարող է թարգմանվել որպես *ուխտ*: Արդյո՞ք սա չէր այն, ինչ Տերը ի նկատի ուներ, երբ կոչեց Մորմոնի Գիրքը «նոր ուխտ»: Այն իսկապես մեկ այլ ուխտ կամ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Սա այն պատճառներից մեկն է, որ մենք վերջերս ավելացրեցինք «Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին» բառերը Մորմոնի Գրքի վերնագրին:

Եթե վաղ Սրբերը նախատվեցին Մորմոնի Գրքին թեթևակի վերաբերվելու համար, արդյո՞ք մենք ավելի քիչ մեղադրանքի կարժանանանք, եթե նույնկերպ վարվենք: Տերն Ինքն է վկայություն բերում այդ գրքի հավերժական կարևորության մասին: Կարո՞ղ է արդյոք մեր մի փոքր խումբ մեղադրանքի տակ դնել ողջ Եկեղեցին՝ սուրբ բաներին թեթևակի վերաբերվելու արդյունքում: Ի՞նչ մենք կասենք Դատաստանի օրը, երբ կանգնենք Նրա առաջ և արժանանանք Նրա քննող հայացքին, եթե լինենք նրանց շարքում, ովքեր մոռացել են նոր ուխտը:

Կան երեք մեծ պատճառներ, որոնցով Վերջին Օրերի Սրբերը պետք է Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը դարձնեն կյանքի աշխատանք:

Առաջինը այն է, որ Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է: Սրանք Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերն են: Նա վկայել է, որ «Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է»:[1] Պորտաքարը կամարի կենտրոնական քարն է: Այն պահում է բոլոր մյուս քարերը, և եթե հեռացվի, ապա կամարը կփլուզվի:

Կան երեք ճանապարհներ, որոնցով Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է: Այն Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է: Այն մեր վարդապետության պորտաքարն է: Այն մեր վկայության պորտաքարն է:

Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է, երբ

որ Ինքը՝ այն ամենի պորտաքարն է, ինչ մենք անում ենք: Այն վկայություն է բերում Նրա իրականության մասին՝ զորությամբ և պարզությամբ: Ի տարբերություն Աստվածաշնչին, որը սերունդներ շարունակ անցել է կրկնօրինակողների, թարգմանիչների և կեղծ կրոնականների ձեռքերով, որոնք փոփոխել են տեքստը, Մորմոնի Գիրքը մեզ տրվել է գրողից ընթերցողին՝ ոգեշնչված թարգմանության միայն մեկ քայլով: Հետևաբար, Վարդապետի մասին դրա վկայությունը մաքուր է, չխեղաթյուրված և լի զորությամբ: Սակայն այն ավելին է: Այսօր Քրիստոնյա աշխարհի մեծ մասը մերժում է Փրկչի աստվածային բնույթը: Մարդիկ կասկածի տակ են դնում Նրա հրաշալի ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառավոր Հարության իրականությունը: Մորմոնի Գիրքը՝ պարզ և անսխալ արտահայտություններով մեզ ուսուցանում է բոլոր բաների ճշմարտությունը: Այն տալիս է նաև Քավության վարդապետության առավել ամբողջական բացատրությունը: Իսկապես, այս աստվածայնորեն ոգեշնչված գիրքը պորտաքար է՝ աշխարհին Հիսուս Քրիստոսի մասին վկայություն բերելու գործում:[2]

Մորմոնի Գիրքը նաև Հարության վարդապետության պորտաքարն է: Ինչպես արդեն նշվեց, Տերն Ինքն է ասել, որ Մորմոնի Գիրքը պարունակում է «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» ՎԿՈՒ 20.9): Սա չի նշանակում, որ այն պարունակում է ամեն մի ուսմունք, ամեն մի վարդապետություն, որը երբևէ հայտնվել է: Ավելի շուտ, մենք Մորմոնի Գրքում կարող ենք գտնել այն վարդապետությունների ամբողջականությունը, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Եվ դրանք ուսուցանվում են պարզ և հասարակ ձևով, որպեսզի անգամ երեխաները կարողանան սովորել փրկության և վեհացման ուղիները: Մորմոնի Գիրքը այնքան շատ բան է առաջարկում, որ կարողանում է լայնացնել փրկության վարդապետությունների մասին մեր հասկացողությունը: Առանց դրա, այլ սուրբ գրություններում ուսուցանվածի մեծ մասը չէր լինի այդքան պարզ և արժեքավոր:

Մորմոնի Գրքում կարող ենք գտնել այն վարդապետությունների ամբողջականությունը, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Եվ դրանք ուսուցանվում են պարզ և հասարակ ձևով, որպեսզի անգամ երեխաները կարողանան սովորել փրկության և վեհացման ուղիները:

Վերջապես, Մորմոնի Գիրքը մեր վկայության պորտաքարն է: Ինչպես կամարն է փլուզվում, երբ պորտաքարը հանվում է, այնպես էլ ողջ Եկեղեցին կանգուն կմնա կամ կընկնի՝ կախված Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելուց: Եկեղեցու թշնամիները սա հստակ հասկանում են: Այդ պատճառով նրանք այդքան մեծ ջանքեր են գործադրում՝ Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելը հերքելու ուղղությամբ, քանի որ նրա հետ կարժեքազրկվի նաև Մարգարե Ջոզեֆ Սմիթը: Նմանապես, նույնը տեղի կունենա քահանայության բանալիների, հայտնության և վերականգնված Եկեղեցու հետ: Սակայն, նման ձևով, եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է և միլիոնավոր մարդիկ այսօր վկայում են, որ հոգով վկայություն ունեն, որ այն իրոք ճշմարիտ է, ապա պետք է ընդունել Վերականգնման բոլոր հայտարարությունները և դրան վերաբերող ամեն ինչ:

Այո, իմ սիրելի եղբայրներ և քույրեր, Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է՝ մեր վկայության, մեր վարդապետության և մեր Տիրոջ ու Փրկչի մասին վկայության պորտաքարը:

Երկրորդ մեծ պատճառը, թե ինչու մենք պետք է Մորմոնի Գիրքը դարձնենք մեր ուսումնասիրության առանցքը, այն է, որ դա գրվել է մեր օրերի համար: Նեփիացիները երբեք չեն ունեցել այս գիրքը, ոչ էլ՝ Լամանացիները հին ժամանակներում: Այն նախատեսված է եղել մեզ համար: Մորմոնը

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Մորմոնի Գիրքը սուրբ հիշատակարան է, և պարունակում է տեղեկություն, որը չի կարելի գտնել որևէ այլ գրքում: Տերը պատվիրել է մեզ կիսվել իր բոլոր զավակների հետ հավերժական Ավետարանի ճշմարտություններով, որոնք հայտնի են դարձվել նրանց՝ պատրաստվելու համար սելեստիալ արքայության համար: . . .

Սիրտս լցվում է ուրախությամբ, իմանալով, որ յուրաքանչյուր մարդ, ով աղոթքով կարդա [Մորմոնի Գիրքը], յուրաքանչյուր մարդ, ով ցանկանա իմանալ, թե արդյոք այն Աստծուց է, թե ոչ, խոստում ունի, ոչ թե Ջոզեֆ Սմիթի կամ որևէ այլ ապրող էակի կողմից, այլ մեր Երկնային Հոր խոստումը, որ վստահ կիմանա, որ այն Աստծուց է»:

President George Albert Smith (1870–1951), in Conference Report, Apr. 1936, 13–14, 15.

գրել է Նեփիացիների քաղաքակրթության վերջին ժամանակներում: Աստծո ներշնչման ներքո, որը տեսնում է բոլոր բաները սկզբից ի վեր, նա կրճատեց դարերի գրառումները, ընտրելով պատմություններ, քարոզներ և իրադարձություններ, որոնք առավել օգտակար են մեզ համար:

Մորմոնի Գրքի բոլոր խոշոր գրողները վկայել են, որ գրել են ապագա սերունդների համար: Նեփին ասել է. «Տեր Աստված խոստացել է ինձ, որ այս բաները, որոնք ես գրում եմ, պիտի պահվեն ու պահպանվեն, և փոխանցվեն իմ հետնորդներին, սերնդե-սերունդ» (2 Նեփի 25.21): Նրա եղբայր Հակոբը, որը հաջորդեց նրան, գրել է նմանատիպ խոսքեր. «Քանզի [Նեփին] ասաց, որ իր ժողովրդի պատմությունը պետք է փորագրվի իր մյուս թիթեղների վրա, և որ ես պետք է պահպանեի այս թիթեղները և իմ հետնորդներին փոխանցեի՞ սերնդե-սերունդ» (Հակոբ 1.3): Ենովսը և Հարոմը նույնպես նշում են, որ գրում են ոչ թե իրենց ժողովուրդների, այլ՝ ապագա սերունդների համար (տես Ենովս 1.15–16; Հարոմ 1.2):

Մորմոնն ինքն է ասել. «Այո, ես խոսում եմ ձեզ համար, դուք, Իսրայելի տան մնացորդ» (Մորմոն 7.1): Եվ Մորոնին, ոգեշնչված գրողներից վերջինը, իրականում տեսել է մեր օրը և ժամանակը: «Ահա, - ասել է նա, - Տերն ինձ ցույց է տվել մեծ և զարմանալի բաներ նրա վերաբերյալ, ինչ պետք է շուտով գա, այն օրը, երբ այս բաներն առաջ կգան ձեր մեջ:

Ահա, ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք, և սակայն դուք ներկա չեք: Բայց ահա, Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ, և ես գիտեմ ձեր արարքները» (Մորմոն 8.34–35):

Եթե նրանք տեսել են մեր օրը և ընտրել այն, ինչն առավել մեծ արժեք կունենար մեզ համար, ապա ինչպե՞ս մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը: Մենք պետք է շարունակ հարցնենք ինքներս մեզ. «Ինչո՞ւ Տերը ոգեշնչեց Մորմոնին (կամ Մորոնիին, կամ Ալմային) ընդգրկել այս կամ այն հատվածը իր գրառումների մեջ: Ի՞նչ դաս կարող եմ ես սովորել դրանից, որը կօգնի ինձ ապրել այս օրը և այս տարիքում»:

Եվ օրինակը օրինակի ետևից ցույց են տալիս, թե ինչպես այս հարցը կստանա իր պատասխանը: Օրինակ, Մորմոնի Գրքում մենք գտնում ենք Երկրորդ Գալստին պատրաստվելու ուղի: Գրքի հիմնական մասը կենտրոնանում է Ամերիկա Քրիստոսի գալուց առաջ մի քանի տասնամյակների շուրջ: Այդ ժամանակահատվածի ուշադիր ուսումնասիրությունը մեզ օգնում է հասկանալ, թե ինչու ոմանք կործանվեցին սաստիկ դատաստանների մեջ, որոնք նախորդեցին Նրա գալստյանը, և ով բերեց մյուսներին՝ տաճարի մոտ, Բաունթիֆուլ երկրում, որպեսզի նրանք կարողանային իրենց ձեռքերով շոշափել Նրա ձեռքերի և ոտքերի վերքերը:

Մորմոնի Գրքից մենք սովորում ենք, թե ինչպես էին Քրիստոսի աշակերտները ապրում պատերազմի ժամանակ: Մորմոնի Գրքում մենք տեսնում ենք գաղտնի խմբակցությունների գործած չարիքները և դրանց սարսափեցնող իրականությունը: Մորմոնի Գրքում մենք գտնում ենք դասեր՝ ուրացությանը և հալածանքին դիմակայելու համար: Մենք շատ բան ենք սովորում միսիոներական աշխատանքի մասին: Եվ առավել պարզ, քան որևէ այլ գրքում, մենք Մորմոնի Գրքում տեսնում ենք մատերիալիզմի և մեր սրտերը աշխարհի բաների վրա դնելու վտանգները: Կարո՞ղ է որևէ մեկը կասկածել, որ այս գիրքը նախատեսված է եղել մեզ համար և որ նրանում մենք կգտնենք մեծ զորություն, մեծ սփոփանք և մեծ պաշտպանություն:

Երրորդ պատճառը, թե ինչու է Մորմոնի Գիրքը այդքան մեծ արժեք ներկայացնում Վերջին Օրերի Սրբերի համար, տրված է Մարգարե Ջոզեֆ Սմիթի նույն խոսքերում, որոնք արդեն մեջբերվել են: Նա ասաց. «Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների»: Դա է գիրքն ուսումնասիրելու երրորդ պատճառը: Այն օգնում է մեզ մոտնել Աստծուն: Արդյո՞ք մեր սրտերի խորքում կա ավելի մեծ փափագ, քան ավելի մոտենալը Աստծուն, ավելի նմանվելը Նրան մեր ամենաօրյա քայլերում, զգալը Նրա ներկայությունը մեզ հետ շարունակ: Եթե այդպես է, ապա Մորմոնի Գիրքը կօգնի մեզ այդ հարցում

ավելի, քան որևէ այլ գիրք:

Մորմոնի Գիրքը մեզ միայն ճշմարտություն չի ուսուցանում, թեև այն իսկապես ուսուցանում է դա: Մորմոնի Գիրքը միայն վկայություն չի բերում Քրիստոսի մասին, թեև իսկապես բերում է: Կա ավելին: Գրքի մեջ մի զորություն կա, որը սկսում է թափանցել ձեր կյանք այն պահից, երբ դուք սկսում եք այդ գրքի լուրջ ուսումնասիրությունը: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ գայթակղությանը դիմակայելու համար: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ խաբեությունից խուսափելու համար: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ ուղիղ և նեղ արահետի վրա մնալու համար: Սուրբ գրությունները կոչվում են «կյանքի խոսքեր» (տես ՎևՈւ 84.85), և դա առավել ճշմարիտ է Մորմոնի Գրքի մասին: Երբ դուք սկսում եք քաղց և ծարավ զգալ այդ խոսքերի համար, դուք կգտնեք ավելի մեծ և առատ կյանք:

Մեր սիրելի եղբայր՝ Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին . . . վկայել է այն օրհնությունների մասին, որոնք կարող են գալ նրանց կյանք, ովքեր կկարդան և կուսումնասիրեն Մորմոնի Գիրքը: Նա ասել է.

«Ես համոզված եմ, որ, եթե մեր տներում, ծնողները թե առանձին և թե երեխաների հետ կանոնավոր և աղոթքով կարդան Մորմոնի Գիրքը, այդ մեծ գրքի հոգին կթափանցի մեր տները և բոլոր նրանց մեջ, ովքեր ապրում են այնտեղ: Պատկառանքի հոգին կմեծանա, կաճի փոխադարձ հարգանքը և միմյանց հանդեպ հոգատարությունը: Հակառակության հոգին կհեռանա: Ծնողները խորհուրդ կտան իրենց զավակներին սիրով և իմաստությամբ: Երեխաները կլինեն ավելի արձագանքող և ենթարկվող իրենց ծնողների խորհրդին: Արդարակեցությունը կմեծանա: Հավատքը, հույսը և գթությունը՝ Քրիստոսի մաքուր սերը, կլցնեն մեր տները և կյանքերը, իրենց հետ բերելով խաղաղություն, ուրախություն և երջանկություն»:[3]

Այս խոստումները՝ ավելի մեծ սերը և ներդաշնակությունը տանը, ավելի մեծ հարգանքը ծնողի և երեխայի միջև, ավելի մեծ հոգևորականությունը և արդարակեցությունը, դատարկ խոստումներ չեն, այլ հենց այն, ինչ ի նկատի ուներ Մարգարե Ջոզեֆ Սմիթը, երբ ասում էր, որ Մորմոնի Գիրքը կօգնի մեզ ավելի մոտենալ Աստծուն:

Եղբայրներ և քույրեր, ես կոչ եմ անում իմ ողջ սրտով, որ դուք ամենայն լրջությամբ ընդունեք Մորմոնի Գրքի կարևորությունը՝ ինչպես անձամբ ձեզ, այնպես էլ՝ ամբողջ Եկեղեցու համար:

Ավելի քան 10 տարի առաջ ես հետևյալ հայտարարությունն արեցի Մորմոնի Գրքի մասին.

«Արդյո՞ք հավերժական հետևանքները կախված են այս գրքի հանդեպ մեր վերաբերմունքից: Այո՝ կամ մեր օրհնությունը, կամ՝ մեր դատապարտումը:

Յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ պետք է դարձնի այս գրքի ուսումնասիրությունը կյանքի աշխատանք: Այլապես, նա իր հոգին դնում է վտանգի տակ և անտեսում այն, ինչ կարող էր իր ողջ կյանքին տալ հոգևոր և մտավոր միասնություն: Տարբերություն կա Մորմոնի Գրքի ուսումնասիրության միջոցով և երկաթե ձողից բռնվելով Քրիստոսի վեմի վրա կառուցող նորադարձի և նրա միջև, ով այդպես չի արել»:[4]

Ես վերահաստատում եմ այսօր այս խոսքերը ձեզ: Եկեք չմնանք դատապարտման տակ՝ իր անեծքներով և դատաստանով, թեթևակի վերաբերվելով այս մեծ և հրաշալի պարգևին, որը Տերը տվել է մեզ: Ընդհակառակը, եկեք ձեռք բերենք

Կարո՞ղ է որևէ մեկը կասկածել, որ այս գիրքը նախատեսված է եղել մեզ համար և որ նրանում մենք կգտնենք մեծ զորություն, մեծ սփոփանք և մեծ պաշտպանություն:

Գրքի մեջ մի զորություն կա, որը սկսում է թափանցել ձեր կյանք այն պահից, երբ դուք սկսում եք այդ գրքի լուրջ ուսումնասիրությունը:

խոստումները՝ այն մեր սրտերում փայփայելու միջոցով:

Վարդապետություն և Ուխտերի 84-րդ բաժնում, 54–58 հատվածներում մենք կարդում ենք.

«Եվ ձեր միտքն անցյալում մթագնել է՝ անհավատության պատճառով, և որովհետև դուք թեթևամտորեն եք վերաբերվել այն ամենին, ինչ ստացել եք,–

Ունայնություն և անհավատություն, որոնք դատապարտության տակ են դրել ողջ եկեղեցին:

Եվ այդ դատապարտությունն ընկած է Սիոնի զավակների, նույնիսկ բոլորի վրա:

Եվ նրանք պետք է մնան այդ դատապարտության տակ, մինչև որ ապաշխարեն և հիշեն նոր ուխտը, այսինքն՝ Մորմոնի Գիրքը և նախկին պատվիրանները, որոնք ես տվել եմ նրանց, որ ոչ միայն խոսեն, այլ գործեն՝ համաձայն նրա, ինչ ես գրել եմ,–

Որ նրանք կարողանան իրենց Հոր արքայությանը վայել պտուղներ առաջ բերել. այլապես, մնում է խարազան և դատաստան թափվի Սիոնի զավակների վրա»:

Վերջին գերագույն համաժողովից հետո ես շատ նամակներ եմ ստացել Սրբերից՝ երիտասարդ և տարիքով, ողջ աշխարհում, ովքեր ընդունել էին Մորմոնի Գիրքը կարդալու և ուսումնասիրելու կոչը:

Ես հուզված էի նրանց պատմություններով այն մասին, թե ինչպես էր փոխվել նրանց կյանքը և թե ինչպես էին նրանք ավելի մոտեցել Տիրոջը՝ իրենց պարտավորվածության արդյունքում: Այս փառահեղ վկայությունները հաստատեցին իմ հոգում Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերն այն մասին, որ Մորմոնի Գիրքը իսկապես «մեր կրոնի պորտաքարն է» և որ տղամարդն ու կինը, «ապրելով ըստ դրա ցուցումների, ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների«:

Սա է իմ աղոթքը, որ Մորմոնի Գիրքը դառնա մեր կյանքի պորտաքարը: ■

Ուղղագրությունն ու մեծատառերը ստանդարտացված են:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մորմոնի Գրքի Նախաբան:
2. Տես Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ:
3. Marion G. Romney, “The Book of Mormon,” *Ensign,* May 1980, 67.
4. Ezra Taft Benson, “The Book of Mormon Is the Word of God,” *Ensign,* May 1975, 65.

25 ՏԱՐԻ

Թեև ես եղել եմ Եկեղեցու հավատարիմ անդամ 1965թ-ից, 1986թ. տեղի ունեցած մի իրադարձություն ամրացրեց իմ վկայությունը վերականգնված ավետարանի մասին առավել, քան որևէ այլ բան:

Այդ տարվա հոկտեմբերին ես գնացի իմ հավաքատուն Քոնվոլում, Անգլիա, դիտելու գերագույն համաժողովի հեռարձակումը: Նախագահ Էզրա Թավթ Բենսոնի «Մորմոնի Գիրք՝ մեր կրոնի պորտաքար» նշանավոր ելույթը լսելուց հետո, ես հասկացա, որ կարող էի ավելի մեծ ջանքեր գործադրել՝ Մորմոնի Գիրքը կարդալու ուղղությամբ:

Այդ երեկո ես գնացի տուն, ծնկի իջա և ուխտ կապեցի Տիրոջ հետ, որ երբեք այլևս թեթև չեմ վերաբերվի Մորմոնի Գրքին: Այժմ, 25 տարի անց, ես կարող եմ հաղորդել, որ չեմ անցկացրել անգամ մեկ օր առանց Մորմոնի Գիրքը կարդալու:

Օրհնությունները, որոնք ես ստացա այս որոշումը կայացնելուց հետո, անհամար էին: Մորմոնի Գրքում կա հատուկ հոգի, որը դուք չեք գտնի որևէ այլ տեղ, անգամ՝ մյուս սուրբ գրություններում: Ես զգացել եմ Սուրբ Հոգին իմ կողքին, որն օգնում էր ինձ ունենալ մխիթարության զգացում կյանքի բոլոր դժվարություններին հանդիպելիս, հատկապես, երբ կինս 2007թ. մոտ 50 տարեկան հասակում մահացավ:

Ալիստար Ջոզեֆ Վելշ, Շոտլանդիա

Սուրբ աշխատանք

Դեյվիդ Ա. Ֆեյց

Մի երեկո իմ միսիոներ զուգընկերը և ես թակեցինք մի երիտասարդ տղամարդու դուռը. նա օտարերկրյա ուսանող էր և սովորում էր Լոնդոնի համալսարաններից մեկում: Նա մեզ ներս հրավիրեց, և մենք բացատրեցինք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներ ենք: Նա կարծես ցանկություն ուներ ավելին սովորելու ավետարանի Վերականգնման մասին, այսպիսով, մենք վկայեցինք Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին և պատմեցինք մեր Երկնային Հոր կողմից տրված սուրբ գրքի մասին, որը կոչվում է Մորմոնի Գիրք: Մենք շեշտեցինք, որ այն սուրբ է, որովհետև վկայում է Հիսուս Քրիստոսի մասին:

Մենք բացատրեցինք, որ նա կարող է ինքն իմանալ դրա ճշմարտության մասին, և նրան մի օրինակ տվեցինք: Երբ ես ձեռքս մեկնեցի, որ նրան տայի Մորմոնի Գիրքը, նա վեր կացավ աթոռից և առանց խոսքի դուրս եկավ սենյակից: Ես մի պահ բռնել էի ձեռքում Մորմոնի Գիրքը, ես և զուգընկերս լուռ զարմանքով նայում էինք իրար, չիմանալով, թե ինչ անեինք: Ես գիրքը դրեցի սեղանին:

Մենք տեսնանք, ինչպես մեր երիտասարդ ընկերը խոհանոցում լվանալով իր ձեռքերը սրբեց մաքուր սրբիչով: Նա վերադարձավ սենյակ և սեղանից վերցրեց Մորմոնի Գիրքը, պարզապես ասելով. «Իմ ժողովուրդը միշտ լվանում է ձեռքերը՝ որևէ սուրբ բանի դիպչելուց առաջ»: Արցունքներ հայտնվեցին իմ աչքերում, երբ ես նայում էի, թե ինչպես այդ երիտասարդը առաջին անգամ բացեց Մորմոնի Գիրքը և սկսեց թերթել դրա սուրբ էջերը իր մաքուր ձեռքերով:

Նա ընդունում էր այն ամենը, ինչ մենք ուսուցանում էինք: Այդ դեպքում, ինչո՞ւ նա չվերցրեց Մորմոնի Գիրքը, երբ ես տվեցի այն նրան:

Ալման ուսուցանել է, որ սուրբ գրությունները սուրբ են և պահվել են՝ հոգիներ բերելու ի փրկություն: Նա հայտարարել է իր որդի Հելամանին. «Աստված վստահել է քեզ այս բաները, որոնք սրբազան են, որոնք նա պահել է սրբորեն, և նաև, որոնք նա կպահի ու կպահպանի իր իմաստուն նպատակի համար, որպեսզի նա ցույց տա իր զորությունն ապագա սերունդներին» (Ալմա 37.14):

Ես ուղարկվեցի միսիայի՝ ուսուցանելու Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը, սակայն ես ուսուցանվեցի մաքուր ձեռքերով այդ երիտասարդի կողմից: Շատ մշակույթներում, ներառյալ՝ իմ երկրում, պարտադիր չէ լվանալ ձեռքերը սուրբ գրությունները կարդալուց առաջ, բայց հարգանքի այս պարզ դրսևորումը պատկառելի և հզոր հիշեցում էր՝ Մորմոնի Գրքի սրբազան բնույթի մասին: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՍԱՅՄՈՆ ՋՈՆՍԻՆ ԿՈՐՈՒՄԻՑ

Երեց
Վոլթեր Ֆ. Գոնզալես
Յոթանասունի
Նախագահությունից

ԵԹԵ ԴՈՒՔ ԻՍԿԱ-ՊԵՍ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԻՄԱՆԱԼ,

Ես հավերժական երախտագիտություն եմ զգում Մորմոնի Գրքի համար: Այն ընդմիշտ փոխել է իմ կյանքը, և ես գիտեմ, որ այն կարող է փոխել ձերը:

դուք կիմանաք

Ես 18 տարեկան էի, երբ դարձա Եկեղեցու անդամ: Մորմոնի Գիրքը իմ դարձի ընթացքում մեծ դեր է խաղացել: Այդ ժամանակ ես փնտրում էի նոր գաղափարներ, որոնք կարող էին բացատրել աշխարհն իմ շուրջը: Ես հիշում եմ, որ քոլեջի իմ դասախոսները մատերիալիստական մոտեցումներ էին կիրառում իրենց ուսուցանման մեջ: Ես սկսեցի տարվել Աստծո գոյությունը կասկածի տակ դնող գաղափարներով:

Մի օր ես նկատեցի մի կապույտ գիրք, որը միսիոներների մի զույգ թողել էր մեր տանը վեց տարի առաջ: Դա Մորմոնի Գիրքն էր: Գրքի հետ միասին, նրանք թողել էին մի գրքույկ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին և մի քանի ցուցումներ՝ Աստծուն աղոթելու մասին:

Ես սկսեցի կարդալ Մորմոնի Գիրքը: Ես միայն մի քանի հատված էի կարդացել 1 Նեփիից, երբ ինչ-որ բան զգացի: Ես սկսեցի պայքարել իմ զգացմունքների և բանականության միջև: Վերջապես, ես որոշեցի հարցնել Աստծուն աղոթքով:

Դա առաջին անգամ էր իմ կյանքում, որ ես աղոթեցի, ծնկի եկած: Փորձառությունը, որ ես ունեցա, դարձավ իմ կյանքի առավել սուրբ փորձառություններից մեկը: Ահռելի երջանկության այնպիսի մի զգացում պատեց ինձ, որ ես իմ սրտում իմացա, որ Մորմոնի Գիրքը հասարակ գիրք չէր: Այն աստվածային ծագում ունեցող գիրք էր: Այն պետք է որ լիներ Աստծո խոսքը: Հետագայում ես հասկացա, որ այդ զգացումը Սուրբ Հոգին էր, որն ինձ վկայում էր դրա ճշմարտության մասին:

Թեև ոմանք նման փորձառություն կարող են ունենալ, տարբեր ճանապարհներով կարելի է իմանալ Մորմոնի Գրքի ճշմարտության մասին:

Ինչպե՞ս դուք կիմանաք:

1. Ոմանք կիմանան լսելով: Մի գուցե դուք լինեք նրանց շարքում, ովքեր կիմանան, պարզապես լսելով այն, ինչ գիրքն ուսուցանում է: Մորմոնի Գիրքը պատմում է հազարավոր մարդկանց մասին, ովքեր լսեցին Մոսիայի որդիներին, երբ նրանք ուսուցանում էին Հիսուս Քրիստոսի ավետարանը, և «դարձի եկան դեպի Տերը» (տես Ալմա 23.5–6): Այսօր միսիոներները ուսուցանում են նույն ավետարանը, որը գտնվում է Մորմոնի Գրքում: Ոմանք կիմանան, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, պարզապես լսելով ուրիշներին՝ դրա ուսմունքներով կիսվելիս:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՌՈԲԵՐՏ ՍԱՅՊՈՒՍԻ ԿՈՂՄԻՑ

2. Ոմանք կիմանան կարդալով: Մի գուցե դուք լինեք նրանց շարքում, ովքեր կիմանան, պարզապես կարդալով Մորմոնի Գիրքը՝ ճշմարտությունն իմանալու անկեղծ ցանկությամբ: Այդպես պատահեց իմ կնոջ հետ: Նա 12 տարեկան էր, երբ պարտավորվեց կարդալ այն սկզբից մինչև վերջ: Երբ նա արեց դա, իմացավ, որ այն ճշմարիտ է: Զգացումն այնքան ուժեղ էր, որ կարդալու ընթացքում նա որոշեց հետևել Փրկչին ընդմիշտ: Նա հավատարիմ մնաց նրան, ինչ զգացել էր այդ ժամանակ:

3. Ոմանք կիմանան անելով: Մի գուցե դուք լինեք նրանց շարքում, ովքեր կիմանան, պարզապես անելով այն բաները, ինչ գիրքն ուսուցանում է: Որոշ մարդիկ ձեռք են բերում իրենց վկայությունները անելով (տես Հովհաննես 7.17): Մորմոնի Գրքի մարգարեներից մեկը՝ Նեփին, լավ էր հասկացել այս սկզբունքը: Նա գրեց, որ «որպեսզի ես կարողանայի ավելի լիովին համոզել նրանց՝ հավատալու Տիրոջը՝ իրենց Քավչին, . . . *ես բոլոր սուրբ գրությունները նմանեցնում էի մեզ,* որպեսզի դա լիներ մեր օգտի և ուսման համար» (1 Նեփի 19.23; շեշտադրումն ավելացված է): Նմանացնելով կամ կիրառելով Մորմոնի Գրքի ուսմունքները ձեր անձնական կյանքում, դուք կարող եք ավելի խորը համոզմունք ունենալ դրա աստվածային ծագման մասին:

4. Ոմանք կիմանան, հարցնելով Աստծուն: Մի գուցե դուք լինեք նրանց շարքում, ովքեր կիմանան, կարդալով Մորմոնի Գիրքը և, այնուհետև, աղոթքով հարցնելով Երկնային Հորը՝ թե արդյոք գիրքը ճշմարիտ է: Սա իմ փորձառությունն է: Մեծագույն մի խոստում է տվել անկեղծ ճշմարտություն փնտրողներին Մորմոնի Գրքի մեկ ուրիշ մարգարե՝ Մորոնին. «Ահա, ես կկամենայի հորդորել ձեզ, որ երբ դուք կարդաք այս բաները, . . . դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ» (Մորոնի 10.3–4): Ես վկայում եմ, որ, եթե դուք կարդաք Մորմոնի



ՄՈՐՈՆԻԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Մորմոնի Գրքի վերջում, Մորոնի անունով մարգարեն խոստանում է, որ, եթե մենք կարդանք Մորմոնի Գիրքը, խորհենք դրա ուղերձի մասին մեր սրտերում և աղոթքով հարցնենք Աստծուն, թե արդյոք այն ճշմարիտ է, Աստված կպատասխանի մեզ՝ Սուրբ Հոգու զորությամբ (տես Մորոնի 10.3–5):

Անձնական հայտնությունը անձնական է: Մեզանից յուրաքանչյուրին այն գալիս է տարբեր ճանապարհներով և տարբեր ժամանակ՝ ըստ Տիրոջ կամքի: Հետևյալ սկզբունքները հասկանալը կարող է օգնել մեզ հասկանալ դա:

1. Մտածեք այդ մասին

Մեզ աղոթելու հրավիրելուց առաջ, Մորոնին խնդրում է մեզ խորհել: Խորհել նշանակում է խորը մտածել: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ եմ ես զգում, երբ կարդում եմ Մորմոնի Գիրքը: Ինչո՞ւ եմ ես այդպես զգում: Ի՞նչ եմ ես սովորել: Արդյո՞ք դա լավ է»:

Տերը ուսուցանել է այս սկզբունքը Օլիվեր Քաուդերիին. «Դու միտք չարեցիր, այլ միայն խնդրեցիր ինձ: Բայց, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է քննես այն քո մտքում. *հետո* դու պետք է հարցնես ինձ, թե արդյոք դա ճիշտ է» (ՎևՈՒ 9.7–8; շեշտադրումն ավելացված է):

2. Ջանասիրաբար աղոթեք

Մեր մտքերը կենտրոնացնելը Սուրբ Հոգու շուրջ և ուշադիր լինելը նրա լուռ պատասխանների հանդեպ մտավոր ջանք է պահանջում: Մի գուցե մասամբ այդ պատճառով է, որ Մորմոնի Գրքում Ենովսը խոսում է իր աղոթքի մասին՝ իբրև «գոտեմարտ . . . Աստծո առաջ» (Ենովս 1.2):

Երբ կարդում եք, խորհեք կամ աղոթեք, ժամանակ գտեք և, որքան հնարավոր է, հեռացրեք բոլոր խանգարող հանգամանքները: Գտեք այնպիսի դիրք, որը կօգնի ձեզ կենտրոնանալ: Բարձրաձայն աղոթելը կօգնի ձեզ կենտրոնացնել ձեր մտքերը:

3. Ճիշտ հարցեր տվեք

Տերը Օլիվեր Քաուդերիին ասաց ոչ թե պարզապես հարցնել, այլ հարցնել, թե արդյո՞ք այն հարցը, որի մասին նա մտածում է, ճիշտ է: Հաճախ, հատկապես, երբ մենք անփորձ ենք՝ մեր Երկնային Հոր կողմից պատասխաններ ստանալու հարցում, ավելի հեշտ է հասկանալ պատասխանը, որը տրվում է այո կամ ոչ պահանջող հասարակ հարցին:

«Կատարելագործված աղոթքի բանալին սովորելն է ճիշտ հարցեր տալը», - սովորեցրել է Երեց Գ. Ռիչարդ Սքոթը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից:[1]

4. Ո՞րն է ձեր նպատակը

Մորոնիի խոստումի կարևոր տարրերից մեկն այն է, որ մենք պետք է խնդրենք «անկեղծ միտումով» Երբ 14-ամյա Ջոզեֆ Սմիթը գնաց անտառ աղոթելու, «նա աղոթեց ոչ միայն լսելու, այլ նաև՝ հնազանդվելու միտումով», - ասել է Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը: . . . Իր հավատարմության շնորհիվ, օրեր, ամիսներ և տարիներ անց նրա աղոթքները պատասխանվում էին լույսի և ճշմարտության հեղեղներով»:[2]

5. Բաց մի թողեք այն

Ոչ բոլոր հայտնություններն են վառ տպավորիչ: Որոշ մարդիկ երազներ են տեսնում, ունենում տեսիլքներ կամ այցելություններ: Սակայն մեզանից մեծ մասը զգում են հանգիստ և մեղմ հուշում՝ ջերմ և խաղաղ զգացողություն:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985)՝ Եկեղեցու 12-րդ Նախագահը, ուսուցանել է. «Ակնկալելով վառ հայտնություններ, մարդը կարող է զրկվել հայտնված հաղորդակցման լիարժեք և հաստատուն հոսքից»:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Richard G. Scott, "Using the Supernal Gift of Prayer," *Liahona,* May 2007, 8.
2. Henry B. Eyring, "Prayer," *Liahona,* Jan. 2002, 18.
3. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 241.

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է: Մենք հրավիրում են ձեզ կարդալ այս հրաշալի գրությունը: Այն այսօր գոյություն ունեցող առավել նշանավոր հատորն է: Կարդացեք այն ուշադիր և աղոթքով, և Աստված կտա ձեզ վկայություն դրա ճշմարտության մասին, ինչպես խոստացել է Մորոնին (տես Մորոնի 10.4)»:

President Howard W. Hunter (1907–95), *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 54.



ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Ես նրանցից եմ, ովքեր Տիրոջից ստացել են առավել ամուր հայտնությունը՝ [Վերականգնման, ներառյալ՝ Մորմոնի Գրքի] ճշմարտության մասին: Այդ հայտնությունը ժամեր շարունակ զորությամբ մնացել է ինձ հետ, և ինչպիսին էլ լինեն իմ կյանքի հանգամանքները, մինչ իմ հիշողությունը աշխատում է, այս կատարյալ գիտելիքը ինձ հետ կմնա»:

President Lorenzo Snow (1814–1901), in Conference Report, Oct. 1900, 61.

Գիրքը և աղոթեք դրա մասին, հետևելով Մորոնիի ցուցումներին, դուք կիմանաք, որ այն ճշմարիտ է:

Տերը խոստացել է՝ դուք կիմանաք

Եթե դուք իսկապես ցանկանում եք իմանալ, դուք կիմանաք, որ Մորմոնի Գրքը ճշմարիտ է: Աստված խոստացել է տալ այդ գիտելիքը ճշմարտության ազնիվ որոնողներին, իսկ Նա "a God of truth, and canst not lie" (Եթեր 3.12):

Մորմոնի Գրքի մեկ այլ մարգարե՝ Ալման, ուսուցանում էր իր որդուն, որ Աստված խոստացել է, որ «նա կպահպանի այս բաներն իր մի իմաստուն նպատակի համար, որպեսզի նա կարողանա ցույց տալ իր զորությունն ապագա սերունդներին: Եվ այժմ, ահա, մեկ նպատակ իրագործել է նա, այսինքն՝. . . բազում հազարավորների վերադարձնելով ճշմարտության իմացությանը. և նա ցույց է տվել իր զորությունն այդ բաների միջոցով, և նա դեռևս ցույց կտա իր զորությունը՝ դրանց միջոցով, ապագա սերունդներին. հետևաբար, [այս գիրքը] պիտի պահպանվի» (Ալմա 37.18–19):

Համոզիչ այս նույն զորությունը կարելի է գտնել այսօր ևս՝ սուրբ գրության այդ առանձնահատուկ հատորում, և Տերը ցույց կտա յուրաքանչյուրին, ով անկեղծ ցանկանում է իմանալ: Ես կարող եմ դա վստահությամբ ասել, երբ նայելով հետ՝ այն օրերին, երբ սովորում էի Եկեղեցու մասին: Այսօր, Մորմոնի Գրքի համոզիչ զորության շնորհիվ՝ ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, որ այն ուսուցանում է Հիսուս Քրիստոսի՝ Սուրբ Մեսիայի մասին: Գիրքը շոշափելի ապացույց է այն մասին, որ Նրա ավետարանի Վերականգնումը տեղի է ունեցել, և որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է:

Եթե դուք նրանց շարքում եք, ովքեր անկեղծ փնտրում են ճշմարտությունը, Տերը խոստացել է, որ դուք կիմանաք: Դուք կարող եք իմանալ, լսելով գրքի ուսմունքները, կարդալով գիրքը, անելով այն, ինչ գիրքն ուսուցանում է, աղոթելով դրա ճշմարտության մասին, կամ այս ամենի համակցությամբ: Բայց դուք կիմանաք: ■

ԻՆՉՊԵ՞Ս ԻՄԱՆԱՄ

Թեև ես մկրտվել էի ինը տարեկանում, իմ ընտանիքը ակտիվ չէր Եկեղեցում: Սակայն, երբ ես դարձա 13 տարեկան, միսիոներները ինձ հրավիրեցին գալ եկեղեցի, ինչը ես արեցի: Ես նաև սեմինարիա հաճախեցի: Ուսումնական ծրագրով մենք սովորում էինք Վարդապետություն և Ուխտերը, որն ինձ համար շփոթեցնող էր: Ես հատկապես պայքարում էի Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի գաղափարների հետ: Ես ցանկանում էի գտնել Աստծուն, սակայն չգիտեի, որտեղ և ինչպես փնտրել:

Ժամանակի ընթացքում ես շատ մտածեցի միսիոներների հետ իմ զրույցների մասին: Ես մտածում էի սեմինարիայի մասին: Ես մտածում էի զրույցների մասին՝ քրիստոնյա այլ հավատքների անդամների հետ: Երբեմն, ես աղոթում էի, որպեսզի իմանայի, թե որն է ճիշտը, սակայն դա ավելի շուտ հիշեցնում էր անցողիկ միտք, քան անկեղծ հարց: Ապա, մի երեկո, ես որոշեցի աղոթել «անկեղծ միտումով»:

Ես ասացի Երկնային Հորը, որ ցանկանում եմ իմանալ Նրա մասին և լինել Նրա ճշմարիտ Եկեղեցու մասը: Ես խոստացա. «Եթե Դու ինձ ասես, թե արդյոք Ջոզեֆ Սմիթը իրական մարգարե է, և թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, ես կանեմ այն ամենը, ինչ Դու կցանկանաս ինձանից: Եթե Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ճշմարիտ է, ես կհետևեմ դրան և երբեք չեմ հեռանա»:

Ես չունեցա վառ տպավորիչ հայտնություն, սակայն խաղաղություն զգացի և գնացի քնելու: Մի քանի ժամ անց, ես արթնացա հստակ մի մտքով. «Ջոզեֆ Սմիթը իրական մարգարե է, և Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»: Այդ միտքը ուղեկցվեց անսկարագրելի խաղաղությամբ: Ես նորից քնեցի, որպեսզի հետո նորից արթնանայի՝ ճիշտ նույն մտքով և զգացումով:

Այդ ժամանակից ի վեր, ես երբեք չեմ կասկածել, որ Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե է: Ես գիտեմ, որ սա Փրկչի աշխատանքն է և որ Երկնային Հայրը կպատասխանի մեր անկեղծ խնդրանքներին:

Ռոդոլֆո Առմանդո Պերես Բոնիլլա, Էլ Սալվադոր

ՀԱՅՏ

ՓՈՇՈՒ ՄԻՋԻՑ

Մորմոնի Գիրքը ճշմարտություն է հայտնում աշխարհին՝ մեր օրերում: Թող այն լույս և ճշմարտություն բերի ձեր կյանք (տես Մորոնի 10.27):



ԻՄ ՄԵՋ այրվող կրակը

Այն օրը, երբ նա սովորեց կարդալ, նաև այն օրը դարձավ, երբ Էդուարդոն վկայություն ստացավ Մորմոնի Գրքի և դրա զորության մասին:

Էդուարդո Կոնտրերասի համար, որի նկարը՝ իր կնոջ Մարիայի հետ, տրված է վերևում, Մորմոնի Գիրքը դարձավ դեպի գրագիտություն տանող դուռը: «Ես ամեն անգամ զգում եմ Հոգին, երբ բացում և կարդում եմ այն», - ասում է նա:

Մայքլ Ռ. Մորիս
Եկեղեցու ամսագրեր

«Իմ պապիկը միշտ ասում էր. «Եթե մենք ուզում ենք ինչ-որ բան դառնալ, մենք պետք է սովորենք կարդալ, - ասում է Էդուարդո Կոնտրերասը, - Իմ պապիկն իրավացի էր»:

Ինչևէ, Էդուարդոյի համար կարդալ սովորելու ուղին երկար էր: Լինելով հինգ երեխաներից մեկը, որոնց իր այրի մայրը մեծացրել էր Արգենտինայի Կորդոբա քաղաքում, նա ութ տարեկան հասակում թողել էր դպրոցը և անցել աշխատանքի՝ օգնելու համար պահել իր ընտանիքը:

«Մենք շատ աղքատ էինք», - հիշում է նա: Ծայրը ծայրին հասցնելու համար, Էդուարդոն կոշիկներ էր փայլացնում, աղյուս էր շարում, կարտոֆիլ էր հավաքում, թերթ էր վաճառում և այլ պատահական աշխատանքներ կատարում, մինչև որ՝ երիտասարդ տարիքում, լրիվ դրույքով աշխատանք գտավ քաղաքապետարանում:

Տարիներ անցան, Էդուարդոն ամուսնացավ և կազմեց իր սեփական ընտանիքը: Այն ժամանակ, երբ նրա հինգ երեխաներից յուրաքանչյուրը սկսեց հեռանալ տնից, նա դեռ կարդալ չգիտեր և քիչ էր հավանակությունը, որ երբևէ կսովորեր: Իրավիճակը փոխվեց մի օր, երբ նա վազեց մի քանի տեղացի տղաների ետևից, որոնք ծաղրում էին իր տան առաջ երկու Վերջին Օրերի միսիոներների: Նա միսիոներներին հրավիրեց իր տուն, և շատ չանցած նա և իրա կինը՝ Մարիան, արդեն զրույցներ էին անցնում:

«Ես շատ դժվար էի հասկանում այն, ինչ նրանք ասում էին, որովհետև նրանք լավ չէին խոսում իսպաներեն, - հիշում է Էդուարդոն: - Սակայն նրանք ինձ ցույց տվեցին մի գրքույկ, որտեղ պատկերված էին Փրկիչը և Մարգարե Ջոզեֆ Սմիթը՝ Սուրբ Պուրակում: Ինձ համար նրանց ցույց տված նկարները և նրանց ուսուցանածը սքանչելի էր»:

Շուտով այդ միսիոներներին փոխարինեցին ուրիշները, որոնցից մեկի համար իսպաներենը մայրենի լեզու էր: Էդուարդոն և Մարիան, որոնք դրանից մի քանի տարի առաջ կորցրել էին իրենց նորածին դստերը, հուզվել էին, դիտելով Եկեղեցու ֆիլմը՝ *Ընտանիքները հավերժ են:* Իրենց կրտսեր որդի՝ Օսբալդոյի հետ միասին, նրանք շուտով մկրտվեցին:

1987թ. մկրտվելուց հետո, Էդուարդոն ցանկացավ ամրացնել իր վկայությունը՝ կարդալով Մորմոնի Գիրքը: «Ինչպե՞ս ես կարող եմ կարդալ սովորել», - հարցրեց նա իր կնոջը: Մարիան ասաց նրան ուշադիր նայել տառերին, մտքում կպցնել դրանք իրար, աշխատել խոսքեր դարձնել, ապա փորձել բարձրաձայն կարդալ: Նա ինձ հավաստիացրեց, որ եթե պարապեմ, ի վերջո, կսովորեմ կարդալ:

ՎԵՐԻՑՈՒՄ ԼՈՒՍԱՆԿԱՐ ՍԱՅԹԼՈՒ. ՄՈՐԻՍԻ ԿՈՂՄԻՑ

ՈԳԵՇՆՉՄԱՆ ԵՎ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

«Ի՞նչ է ձեզ համար նշանակում Մորմոնի Գիրքը: Արդյո՞ք այն ձեր կյանքում ոգեշնչման և զորության աղբյուր է: Արդյո՞ք այն կշարունակի լինել դա:

Եթե դուք դեռ չեք խմել մաքուր ճշմարտության այս ցայտաղբյուրից, իմ ողջ հոգով ես կոչ եմ անում ձեզ անել դա այժմ: Թույլ մի տվեք, որ Մորմոնի Գրքի կանոնավոր ուսումնասիրությունը լինի այն բաների շարքում, որոնք դուք միշտ պատրաստվում եք անել, սակայն երբեք չեք հասցնում ավարտին: Սկսեք այսօր»:

Elder Richard G. Scott of the Quorum of the Twelve Apostles, "The Power of the Book of Mormon in My Life," *Ensign,* Oct. 1984, 11.

Էդուարդոն, որն այդ ժամանակ 45 տարեկան էր, գիտեր շատ հնչյուններ, սակայն նա չէր փորձել կարդալ՝ մոտ չորս տասնամյակ առաջ դպրոցը թողնելուց հետո:

Ես կրակ զգացի

Ամառային մի շոգ օր, սրտում աղոթելով, Էդուարդոն նստած էր ստվերի տակ՝ իր տան բակում: «Այդ պահին ես որոշեցի փորձել», - ասաց նա:

Մարիան ասում է, որ երբեք չէր պատկերացնի այն, ինչ հետո տեղի ունեցավ: Նա գործ էր անում խոհանոցում և լսում էր, ինչպես էր Էդուարդոն փորձում արտասանել տառերը և բառերը: «Հանկարծ, ես լսեցի, որ նա արագ խոսում էր», - ասում է նա: «Ես լսեցի և հասկացա, որ նա հմուտ կարդում էր: Կես ժամ էր անցել, իսկ նա արդեն կարդում էր»:

Էդուարդոն այնքան տարված էր իր փորձով, որ չէր գիտակցում, որ կարդում էր: Բայց նա հիշում է, որ կարդալիս. «Ես զգում էի, կարծես կրակ էր վառվում իմ ներսում»: Վախեցած և զարմացած, Էդուարդոն կանչեց իր կնոջը. «Մամի, ի՞նչ է կատարվում ինձ հետ»:

«Դա Տիրոջ Հոգին է,- պատասխանեց Մարիան: - Դու վարժ կարդում ես»:

Հիշելով այս փորձառությունը, Մարիան ասում է. «Դա մի բան էր, որը մենք երբեք չենք կարող մերժել»:

Էդուարդոն ավելացնում է. «Այն օրը, երբ ես սովորեցի կարդալ, նաև այն օրը դարձավ, երբ ես վկայություն ստացա Մորմոնի Գրքի և դրա զորության մասին»:

Այդ ժամանակից ի վեր, Էդուարդոն սկսեց արթնանալ առավոտյան ժամը 4:00-ին՝ աշխատանքի գնալուց առաջ Մորմոնի Գիրքը կարդալու համար: Ապա նա կարդաց Վարդապետություն և Ուխտերը, որից հետո՝ Աստվածաշունչը: Այժմ Կոնտրերաների տունը զարդարում է մի գրադարան, մինչդեռ 1987թվից առաջ միայն մի քանի գիրք կարելի էր գտնել:

Էդուարդոյի և Մարիայի ավետարանի գիտելիքի բարձրացման հետ աճում էին նրանց վկայությունները: Երբ նրանց որդի Օսվալդոն 2001թ. մահացավ ավտովթարից, նրանց վկայությունները՝ հոգևոր հզոր փորձառությունների հետ միասին, որոնք ձեռք բերվեցին աղոթելու արդյունքում և Բուենոս Այրես Արգենտինա Տաճարում, որտեղ նրանք և Օսվալդոն միասին կնքվել էին, օգնեցին նրանց հաղթահարել իրենց կորուստը:

«Որոշ ծնողներ, երևիթե, խելագարվեին, - ասում է Էդուարդոն: - Սակայն մենք հանգստություն զգացինք, կարծես մեզ ասացին. «Ձեր տղայի հետ ամեն-ինչ կարգին է»: Իհարկե, մենք ողբում էինք: Նա լավ որդի էր և մենք կարոտում ենք նրան: Բայց մենք կնքվել ենք տաճարում, և մենք գիտենք, թե որտեղ է նա»:

Գրագիտության լույսը

Իր ծխի անդամներից մեկի օգնությամբ, Էդուարդոն նաև սովորեց գրել: «Նախկինում, - ասում է նա, - ես չէի կարող անգամ գրել իմ անունը»:

Գրագիտության լույսով, Էդուարդոն սկսեց հասկանալ իր պապիկի խոսքերի ճշմարտությունը:

«Մենք այստեղ երկրի վրա ենք, որ կարողանանք մի փոքր առաջ գնալ ամեն օր», - ասում է նա: Կարդալ և գրել սովորելով, ինչպես ավելացնում է նա, նա իր երեխաներին և թոռներին ցույց է տալիս, որ երբեք ուշ չէ սովորել, զարգանալ և դառնալ այն, ինչ Աստված ուզում է, որ մենք դառնանք: «Կարդալ իմանալու շնորհիվ, ես ամեն օր նոր բան եմ սովորում», - ասում է նա:

Այսօր Եղբայր Կոնտրերասը կարող է կարդալ այն, ինչ ցանկանում է, ներառյալ՝ թերթերը, որոնք նա ժամանակին վաճառում էր, լինելով ոչ գրագետ երեխա: Սուրբ գրությունները մնում են նրա սիրված գրքերը, հատկապես՝ Մորմոնի Գիրքը: Նա այն կարդացել է սկզբից մինչև վերջ՝ ութ անգամ:

«Ինձ համար Մորմոնի Գիրքը դուռ էր, ասում է նա երախտապարտությամբ նրա համար, որ գրագիտությունը և ավետարանը փոխեցին իր կյանքը: «Մորմոնի Գիրքը ինձ համար ամեն-ինչ է: Այն ինձ համար ամեն-ինչ *է*: Ես ամեն անգամ զգում եմ Հոգին, երբ բացում և կարդում եմ այն»: ■

ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ԳՏՆԵԼ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Երբ ես 21 տարեկան էի, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներները անգլերեն էին ուսուցանում Ռուսաստանի այն տարածքում, որտեղ ես ապրում եմ: Ես սկսեցի հաճախել դասերին, բայց շուտով սկսեցի ավելի երկար մնալ, մասնակցելով հոգևոր մտքերի փոխանակմանը, որ երեցները անց էին կացնում դասից հետո, և հարցեր էի տալիս:

Ես մեծացել եմ իմ երկրում գերիշխող կրոնի մթնոլորտում, սակայն շատ անպատասխան հարցեր ունեի կրոնի վերաբերյալ: Միսիոներները և նրանց Եկեղեցու անդամները ունեին այն պատասխանները, որոնք նախկինում ոչ ոք չէր կարողացել տալ ինձ:

Մի օր անգլերեն դասից հետո, հատկապես համարձակ ինձ զգալով, ես խնդրեցի միսիոներներին ինձ տալ իրենց գրքի՝ Մորմոնի Գրքի մեկ օրինակ: Սակայն երբ հասա տուն, դրեցի այն գրապահարանի վրա:

Սակայն, այն երկար այնտեղ չմնաց: Ես լսեցի, ինչպես անգլերենի դասերին մասնակցող Եկեղեցու անդամները ասացին, որ սուրբ գրությունները պարունակում են խնդիրների լուծումներ: Այսպիսով, երբ ես անձնական խնդիրներ կամ դժվարություններ ունեցա, ես վերցրեցի Մորմոնի Գիրքը պահարանի վրայից և սկսեցի կարդալ: Անընդմեջ, ես գտնում էի այնպիսի պատասխաններ, որոնք ինձ անհրաժեշտ էին:

Այդ ժամանակ ես սկսեցի զգալ, որ չեմ կարող այլևս ապրել առանց Եկեղեցու: Դա այն վայրն էր, որտեղ ես ցանկանում էի լինել: Դա այն վայրն էր, որին ես զգում էի, որ պատկանում էի:

Մի երեկո, ես մտա խոհանոց, որը մի փոքր առանձնացած է տան մյուս մասից, և հարցրեցի Երկնային Հորը, թե արդյոք Եկեղեցին ճշմարիտ է:

Ինչևէ, ես ուզում էի վստահ լինել՝ Աստծուն հարցնելով: Խնդիրն այն էր, որ ես ապրում էի մեկ սենյականոց փոքր բնակարանում, որտեղ ապրում էր նաև իմ տանտիրուհին՝ մի ծեր կին, և առանձին տեղ չկար, որպեսզի ես աղոթեի: Բայց մի երեկո, ես մտա խոհանոց, որը մի փոքր առանձնացած է տան մյուս մասից, և հարցրեցի Երկնային Հորը, թե արդյոք Եկեղեցին ճշմարիտ է: Ես այնպիսի ուժեղ զգացում ունեցա որպես պատասխան, որ գիտեի, թե ինչ պետք է անեի:

Ոչ շատ ժամանակ անց ես մկրտվեցի, և որպես Եկեղեցու անդամ իմ տարիները ամենաերջանիկն էին իմ կյանքում: Նախկինում ես հարցեր ունեի, այժմ ունեմ պատասխաններ: Նախկինում ես ինձ դատարկ էի զգում, այժմ՝ լիարժեք:

Ես շնորհակալ եմ, որ Երկնային Հայրը չի թողել մեզ առանց պատասխանների: Ես գիտեմ, որ Նա կխոսի մեզ հետ՝ և աղոթքի, և սուրբ գրությունների միջոցով: ■

Օլգա Օվչարենկո, Սվերդլովսկի տարածք, Ռուսաստան

ՆԱՄՈՒԱՅՐՈՒՄՆԵՐԸ՝ ՋՈՐՍ ԹՈՐԿԵԱՄՈՒՐ ԿՈՂՄԻՑ

ԵՍ ԿՐԱԿ ՁԳԱՑԻ ԻՄ ՆԵՐՍՈՒՄ

Ես մեծացել եմ, հաճախելով կիրակնօրյա դպրոց մի եկեղեցում, որը գտնվում էր Միչիգանում, ԱՄՆ, իմ մանկության տարիների մեր տան հարևանությամբ: Ես հիանալի ուսուցչուհի ունեի, որն օգնեց ինձ լցվել Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրով:

Ամեն շաբաթ նա մեզ քարտեր էր բաժանում, որոնց վրա պատկերված էին Փրկչի մահկանացու ծառայության դրվագները, ներառյալ՝ Նրա ուսուցանած սկզբունքները և Նրա կատարած հրաշքները: Ամեն շաբաթ ես փակցնում էի քարտերը հատուկ գրքի մեջ և նորից կարդում էի պատմությունները Աստվածաշնչում: Մեծանալով, ես շարունակում էի ուսումնասիրել Ավետարանները Նոր Կտակարանում:

Տարիներ անց, 1968թ. ամռանը, մեր բարեկամների տուն այցելեցին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներները: Նա հրաժարվեց Եկեղեցու մասին սովորելու երեցների հրավերից, բայց նրանց ուղարկեց մեր տուն:

Մեր առաջին հանդիպմանը միսիոներները ինձ ուսուցանեցին այն մասին, որ «ապստամբություն» էր տեղի ունեցել այն Եկեղեցում, որը հիմնել էր Հիսուս Քրիստոսը (տես Բ Թեսաղոնիկեցիս 2.3): Նրանց ուսուցանածը համընկնում էր իմ անձնական ուսումնասիրության հետ, և երբ նրանք հարցրեցին, թե արդյոք կարող են կրկին ինձ այցելել, ես համաձայնվեցի:

Նրանց հաջորդ այցի ժամանակ, ես պատրաստել էի հարցերի մի ցուցակ: Արդյո՞ք Վերջին Օրերի Սրբերը մկրտում են ընկղմամբ: Արդյո՞ք նրանք հավատում են քահանայության իշխանությանը: Արդյո՞ք նրանք հավատում են հիվանդներին բուժելուն: Նրանց պատասխանները հաստատեցին այն, ինչ ես սովորել էի Նոր Կտակարանում: Այցի վերջում նրանք ինձ մի գիրք տվեցին, որը, նրանց խոսքերով, վկայում էր Հիսուս Քրիստոսի մասին:

Ես դրեցի գիրքը հեռուստացույցի վրա և գնացի քնելու: Սակայն գիշերվա կեսին ես արթնացա մի ուժեղ զգացումից, որը, հետագայում հասկացա, որ Սուրբ Հոգին էր: Ես զգացի, որ պետք է սկսեմ կարդալ, և անկողին վերադառնալուց առաջ մեկուկես ժամ կարդացի: Կարճ ժամանակ անց, ես նորից արթնացա՝ նույն զգացումով, և սկսեցի նորից կարդալ:

Այսպես շարունակվեց հաջորդ երկու գիշերների ընթացքում: Ինձ դուր էր գալիս այն, ինչ ես կարդում էի, և ես ընդունեցի, որ Մորմոնի Գիրքը վկայում էր Հիսուս Քրիստոսի մասին:

Ես որոշեցի աստծուց ուղղություն խնդրել: Առաջին անգամ, փոքր աղջիկ լինելուց հետո, ես ծնկի իջա՝ աղոթելու: Ես խնդրեցի Երկնային Հորը օգնել ինձ իմանալ, թե ինչ անել այն կրակի հետ, որը վառվում էր իմ ներսում: Երբ ավարտեցի աղոթքս, և հուշում զգացի՝ կրկին կարդալ Լամանացիների դարձի գալու մասին պատմությունը 3 Նեփի 9-ում: Ես կարդացի, որ նրանք «մկրտվեցին կրակով և Սուրբ Հոգով, և չիմացան դա» (հատված 20):

. . . արտահայտությունը խոսեց ինձ հետ: Մի միտք ունեցա. «Հիսուս Քրիստոսի Եկեղեցին իսկապես երկրի վրա է»: Ես անհամբեր սպասում էի, թե երբ պետք է խոսեի միսիոներների հետ իմ կարդացածի և իմ իմացածի մասին: Բայց երբ նրանք պատասխանեցին իմ հարցերին մկրտվելու հրավերով, ես ասացի, որ չեմ կարող: Իմ ամուսինը դա չէր հասկանա:

Շարունակելով մտածել այդ հատվածի մասին, ինչևէ, ես հասկացա, որ այն պարունակում է ինձ համար հստակ ուղղություն՝ զոհաբերել «կոտրված սիրտ և փշրված հոգի»: Ես աղոթեցի խնդրելով իմ Երկնային Հորը օգնել ինձ, ինչը և Նա արեց: Նրանից հետո, երբ ամուսինս անցավ միսիոներական զրույցները, նա տվեց իր համաձայնությունը, որ ես մկրտվեի:

Որքան երախտապարտ եմ ես սիրող Երկնային Հորը՝ այդ թանկարժեք և զորավոր փորձառության համար, որ ունեցա որպես երիտասարդ մայր՝ Մորմոնի Գիրքը կարդալիս: Այն առաջնորդեց ինձ դեպի Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը: Արդյունքում, Սուրբ Հոգու ազդեցությունը, որն առաջին անգամ ես զգացի 1968թ. այդ երկու գիշերների ընթացքում, այժմ մշտական պարգև է ինձ համար՝ մի բան, որն ուղեկցում է ինձ ավելի քան 40 տարի՝ որպես Եկեղեցու անդամ: ■

Կլաուդիա Վիլիամս, Ֆլորիդա, ԱՄՆ

Ես դրեցի գիրքը հեռուստացույցի վրա և գնացի քնելու: Սակայն գիշերվա կեսին ես զգացի, որ պետք է սկսեմ կարդալ:

ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ ԽՈՍԵՑ ԻՆՁ ՀԵՏ

Երբ մեր ամենափոքր երեխան՝ Ամանդան, երկու տարեկան էր, նրա մոտ լեյկեմիա հայտնաբերեցին: Դեպքը բարդ էր և նրա քաղցկեղը հնարավոր չէր բուժել քիմիոթերապիայով: Նրան պետք է ոսկրածուծ ներարկեին:

Մինչ ամուսինս և մեր երկու որդիները տանն էին՝ Յուտայում, ես Ամանդայի հետ մեկ այլ նահանգում էի՝ սեպտեմբերից մինչև հունվարի առաջին մասը: Մենք չկարողացանք միասին տոնել Սուրբ Ծնունդը, սակայն բուժման փուլի ավարտից հետո վերադարձանք տուն:

Տուն վերադառնալուց հետո հիվանդանոց ստուգման մեր առաջին այցի ժամանակ, բժիշկները կրկին Ամանդայի արյան մեջ լեյկեմիայի բջիջներ գտան: Ներարկումը չէր գործել: Այդ լուրը լսելուց, ես ընկա՝ կարծես ուղիղ գետնի տակ էի սուզվում: Մեր ընտանիքը շատ դժվարություններով, աշխատանքով, բաժանումով էր անցել: Եվ այնուամենայնիվ, մենք կորցնում էինք մեր դստերը:

Այդ օրը ես վերադարձա իմ երկու որդիների մոտ: Սպասելով աշխատանքից ամուսնուս վերադարձին, մենք վերցրեցինք Մորմոնի Գրքի մեր օրինակները և սկսեցինք կարդալ: Մենք կարդում էինք 2 Նեփի 9: Կարդալիս, այս տողերը խոսեցին ինձ հետ.

«Ես խոսում եմ ձեզ հետ այս բաները, որպեսզի դուք կարողանաք ուրախանալ և բարձրացնել ձեր գլուխները հավիտյան, այն օրհնությունների շնորհիվ, որոնք Տեր Աստված կպարգևի ձեր զավակներին:

Քանզի ես գիտեմ, որ դուք՝ ձեզանից շատերը, շատ եք պրպտել իմանալու գալիք բաների մասին. ուստի, ես գիտեմ, որ դուք իմանում եք, որ մեր մարմինը պետք է հալումաշ լինի ու մեռնի. այնուամենայնիվ, մեր մարմիններում մենք կտեսնենք Աստծուն: . . .

Քանզի ինչպես մահն անցավ բոլոր մարդկանց վրա՝ իրագործելու մեծ Ստեղծողի ողորմած ծրագիրը, պետք է անպայման լինի հարության մի զորություն: . . .

Օ՜հ, որքան մեծ է բարությունը մեր Աստծո, որն այս սարսափելի հրեշի ճանկից, մեր փախուստի համար, ուղի է պատրաստում. այո, այն հրեշի՝ մահի: . . .

Եվ նա գալիս է աշխարհ, որպեսզի փրկի բոլոր մարդկանց, եթե նրանք ականջ դնեն նրա ձայնին. քանզի ահա, նա տանում է բոլոր մարդկանց ցավերը, այո, ամեն մի ապրող արարածի ցավերը՝ և տղամարդկանց, և կանանց, և երեխաների, որոնք պատկանում են Ադամի ընտանիքին:

Եվ նա տանում է այս, որպեսզի հարությունը կարողանա անցնել բոլոր մարդկանց վրա, որպեսզի բոլորը կարողանան կանգնել նրա առջև այն մեծ և դատաստանի օրը» (2 Նեփի 9.3–4, 6, 10, 21–22):

Այս խոսքերը կարդալու ընթացքում, Սուրբ Հոգին լցրեց սենյակը: Ես զգացի, որ Երկնային Հայրը գիտեր այն լուրը, որը ես ստացա այդ օրը: Ես զգացի, որ Հակոբ մարգարեի խոսքերը՝ ինձ համար գրվելուց առաջ գրվել էին ավելի քան 2000 տարի առաջ և անմիջապես Փրկչի կողմից: Նա գիտեր այն ցավը և տխրությունը, որ ես զգացի, երբ լսեցի, որ մեր դուստրը պետք է մահանար: Եվ Նա մեր կողքին էր, որ մխիթարեր մեր ընտանիքին Իր խոստումով, որ պատրաստել է ճանապարհը և որ մի օր՝ Հարության զորությամբ, «մեր մարմիններում մենք պիտի տեսնենք Աստծուն»:

Ամանդան ևս մեկ տարի ապրեց, սակայն ես երբեք չեմ մոռանա այն օրը, երբ Մորմոնի Գիրքը խոսեց ինձ հետ իմ կարիքի պահին և երբ Տերը տվեց ինձ հույս, մխիթարություն և Իր ծրագրի մասին հասկացողություն: ■

Ջինա Բերդ, Յուտա, ԱՄՆ

Կարդալու ընթացքում, Սուրբ Հոգին լցրեց սենյակը: Ես զգացի, որ Երկնային Հայրը գիտեր այն լուրը, որը ես ստացա այդ օրը:

ԵՍ ՓՈՐՁԱՐԿԵՑԻ ՄՈՐՈՆԻԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Ես հարցրեցի Երկնային Հորը. «Արդյո՞ք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, և, եթե այո, ապա ե՞րբ պետք է ես մկրտվեմ»:

Մի քանի տարի առաջ ես ընկերոջս տանն էին, երբ հանդիպեցի երկու լավ հագնված երիտասարդ տղամարդկանց, որոնք ներկայացան որպես Վերջին Օրերի Սրբերի միսիոներներ: Ես մտածեցի, որ տարօրինակ է, որ նրանք այդքան ճանապարհ էին անցել-եկել Իտալիա, որպեսզի դարձի բերեին մարդկանց, որոնք արդեն հավատում էին Փրկչին:

Ավելի ուշ ես խնդրեցի նրանց գալ իմ տուն: «Եթե ցանկանում եք, կարող եք գալ իմ տուն՝ մշակութային փոխանակման համար», - ասացի ես: «Բայց հանկարծ չմտածեք, թե ես պատրաստվում եմ փոխել կրոնը»:

Երբ մենք հանդիպեցինք հաջորդ երեկո, միսիոներները խոսեցին Մորմոնի Գրքի մասին: Ես մտածեցի, որ տարօրինակ էր, որ ես նախկինում երբեք չէի լսել դրա մասին: Ես նրանց նորից հրավիրեցի, բայց երկրորդ այցից հետո կինս՝ Աննա Մարիան, որոշեց, որ նրանք խելագար էին, և դուրս էր գալիս տնից մեր քննարկումների ժամանակ: Միսիոներները ինձ համար նույնպես փոքր-ինչ անսովոր էին, սակայն ինձ հետաքրքրում էր, թե ինչ նրանք պետք է ասեին, և ես շարունակում էի հանդիպել նրանց հետ:

Մի օր, երբ Աննա Մարիան եկավ տուն, նա լսեց, որ մենք խոսում էինք հավերժական ամուսնության մասին: Սա մեծապես հետաքրքրեց նրան, և մենք որոշեցինք միասին նորից սկսել զրույցները: Նա սուրբ գրությունների խորը գիտելիքներ ուներ և միշտ հարցերի մեծ շարան: Երեցները անմիջապես պատասխանեցին նրա որոշ հարցերի, սակայն մյուս հարցերի պատասխանների համար նրանք պետք է գնային տուն և ուսումնասիրեին: Ամեն շաբաթ, առանց բացառության, նրանք վերադառնում էին ճիշտ պատասխաններով, և ամեն շաբաթ Աննա Մարիան նրանց համար մեկ այլ ցուցակ ուներ:

Քննարկումները ավարտելուց փոքր ինչ անց, Աննա Մարիան, ի զարմանս ինձ, խնդրեց իմ թույլտվությունը, որ մկրտվեր: Ես ասացի, որ դեմ չեմ, եթե նա իսկապես դարձի էր եկել: Ես այցելեցի նրա մկրտությանը 1995թ. մարտի 5-ին և հիանալի զգացում ունեցա ծառայության ընթացքում:

Ես շարունակում էի կլանված կարդալ Եկեղեցու մասին, իսկ միսիոներները շարունակում էին խրախուսել ինձ: Ի վերջո, ես որոշեցի փորձարկել Մորոնիի խոստումը (տես Մորոնի 10.4–5): Ես ցանկանում էի իմանալ, թե արդյոք Մորմոնի Գիրքը Աստծուց էր, թե՝ պարզապես գեղեցիկ վեպ էր:

Մի օր, 1995թ. հունիսին, երբ ես մենակ էի տանը, ծնկի իջա մահճակալիս մոտ և հարցրեցի Երկնային Հորը. «Արդյո՞ք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, և, եթե այո, ապա ե՞րբ պետք է ես մկրտվեմ»: Հանկարծ ես զգացի իմ սրտում և իմ մտքում պարզ ձայն, որն ասաց ինձ. «Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»: Այդ ժամանակ ես պարզ հասկացա, թե երբ պետք է մկրտվեմ: Մի շաբաթ անց, ես կրկին աղոթեցի և ստացա նույն պատասխանը: Իմ սիրտը լի էր ուրախությամբ: Այժմ ես գիտեի, որ Աստված խոսել էր ինձ հետ. Մորմոնի Գիրքը ոգեշնչված էր Աստծո կողմից, իսկ Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե էր:

Վերջապես, 1995թ. սեպտեմբերի 17-ին, ես մտա մկրտության ջրերը՝ մեկուկես տարի անց միսիոներների հետ հանդիպելուց հետո: Շուտով մեր դուստրը՝ Աբա Չիարան, սկսեց հետաքրքրվել եկեղեցով և նույնպես մկրտվեց: 1997թ. հունվարին, մեր ընտանիքը կնքվեց Բերն Շվեյցարիա Տաճարում:

Մենք գիտենք, որ սա ճշմարիտ Եկեղեցին է, որը ղեկավարում է Հիսուս Քրիստոսը՝ մարգարեի և քահանայության միջոցով: Մենք շնորհակալ ենք Տիրոջը Նրա սիրո համար, մեզ առաջնորդելու համար դեպի միսիոներները և ավետարանի մասին մեր գիտելիքի համար: ■

Ֆրանսեսկո Ֆերարեսի, Լոմբարդի, Իտալիա

Ամեն լեզվի և ժողովրդի

Լիա Մակքլանահան
Եկեղեցու ամսագրեր

Երբ Մորմոնի Գրքի մարգարե Ալման իր ժողովրդի գրառումները վստահեց իր որդի Հելամանին, նա նրան հրահանգեց հիշել, որ Տերը «իմաստուն նպատակ» ունի՝ սուրբ գրությունները պահպանելու համար (Ալմա 37.12)։ Նա գրառումների վերաբերյալ ասաց. «Դրանք պետք է պահվեն և փոխանցվեն մի սերնդից մյուսին, . . . մինչև դրանք հայտնի դառնան ամեն ազգի, ցեղի, լեզվի, և ժողովրդի» (Alma 37.4)։

1827թ. Ջոզեֆ Սմիթը ստացավ այդ գրառումները և մինչև 1829թ. ավարտեց դրանց թարգմանությունը անգլերեն՝ Աստծո պարգևով և զորությամբ։ 1830թ. հրատարակված գիրքը հզոր միսիոներական գործիք էր՝ հավաստիացնելու համար ընթերցողներին Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտացիությունը։ Ինչևէ, 5000 օրինակ նախնական տպագրական քանակով՝ Մորմոնի Գիրքը «ամեն ազգի, ցեղի, լեզվի, և ժողովրդի» ուղարկելը թվում էր դեռ երկար տարիների աշխատանք։

Ինչևէ, Տերը վերահաստատեց այս մարգարեությունը Ջոզեֆ Սմիթին՝ 1833թ., կանխատեսելով այն օրը, երբ «ամեն մարդ կլսի ավետարանի լրիվությունն իր լեզվով՝ իր մայրենի լեզվով» (ՎԵՈՒ 90.11)։ Մորմոնի Գիրքը, որը «պարունակում է . . . Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (ՎԵՈՒ 20.9), մեծ դեր է խաղում այս մարգարեության իրականացման գործում։

1800-ականների կեսերին միսիոներները տարան ավետարանը Եվրոպա։ 1851թ. Մորմոնի Գիրքը հրատարակվեց դանիերեն, որից հետո 1852թ.՝ ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և ուելսերեն։ Այսօր Մորմոնի Գիրքը ամբողջությամբ մատչելի է 82 լեզուներով և ընտրված գլուխներով՝ 25 լեզուներով։ Մարգարեությունն այն մասին, որ բոլոր մարդիկ կլսեն ավետարանը իրենց լեզվով, ամեն տարի ավելի շատ է իրականանում, քանի որ թարգմանությունը և միսիոներական աշխատանքը առաջ են գնում։

Մորմոնի Գրքի առաջին հրատարակության տպաքանակը եղել է 5000 օրինակ։

Թարգմանության աշխատանքը

Մորմոնի Գիրքը անգլերենից որևէ նոր լեզվով թարգմանելու գործընթացը կարող է տարիներ տևել։ Այդ գործընթացը սկսվում է միայն նրանից հետո, երբ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հաստատում են ծրագիրը, և եթե կան բավական թվով անդամներ, որոնք խոսում են տվյալ լեզվով և կարող են ծառայել որպես թարգմանիչներ։ Թարգմանիչներին և ստուգողներին տրվում են մանրամասն ուղեցույցներ, նրանք հրահանգվում են թարգմանելիս մոտ մնալ Հոգուն։ Թարգմանության ավարտից հետո, տեքստը անցնում է առանձին հոգևոր ստուգում։

Տպագրվելուց հետո, անդամները կարող են պատվիրել նոր հրատարակությունը Բաշխման ծառայություններից։ Շատ անդամներ նախկինում իրենց լեզվով ունեցել են Մորմոնի Գրքի միայն ընտրված գլուխներ, որոշ դեպքերում՝ միայն միսիոներների վկայությունները։

Մորմոնի Գիրքը և միսիոներական աշխատանքը

Երբ աշխարհագրական տարածքը բացվում է միսիոներական աշխատանքի համար, լեզվական խոչընդոտները կարող են լուրջ դժվարություն հանդիսանալ։ Եթե տվյալ տարածքում չկան Եկեղեցու տպագրված նյութեր, միսիոներները պետք է սովորեն լեզուն և բերեն իրենց վկայությունը Հոգու օգնությամբ։ Աշխարհի որոշ մասերում, շատ մարդիկ տիրապետում են երկրորդ լեզու, և միսիոներները կարողանում են նրանց տալ Մորմոնի Գիրքը այդ լեզվով։ Օրինակ, նախքան Մորմոնի Գիրքը կթարգմանվեր մոնղոլերեն, Մոնղոլիայում շատ անդամներ

օգտվում էին ռուսերեն հրատակությունից:

Բայց ավետարանը կարելի է հասկանալ լավագույն ձևով մայրենի լեզվով, որը ծանոթ և պարզ է մարդկանց համար: Էրիկ Գեմմելը, որը 2001-2003թթ. ծառայել է Սլովենիա Լյուբլյանա, անձամբ է ականատես եղել, թե ինչ տարբերություն կա, երբ անդամները և հետաքրքրվողները ունենում են Մորմոնի Գիրքը իրենց մայրենի լեզվով: Նա ծառայել է իր միսիայի առաջին 18 ամիսը, երբ Մորմոնի Գիրքը դեռ մատչելի չէր սլովեներենով:

Աշխատանքը դժվար էր: Եկեղեցու առաջին ճյուղը հիմնվել էր միայն տաս տարի առաջ: Սլովենիան վերջերս էր անկախացել և գտնվում էր նախկին պետական լեզուն՝ սերբերեն-խորվաթերենը հանելու գործընթացում: Միսիոներները ունեին Մորմոնի Գիրքը սերբերեն-խորվաթերեն և անգլերեն, որը երիտասարդների մեծ մասը սովորում էր դպրոցում: Սակայն ավելի հաճախ մարդիկ մերժում էին գիրքը, որովհետև չէին հասկանում այդ լեզուներից ոչ մեկը: Էրիկը հիշում է, թե ինչպես էր իրեն զգում, երբ մարդկանց վկայություն էր բերում Մորմոնի Գրքի մեծության և կարևորության մասին, իսկ ապա ստիպված ասում էր նրանց, որ չուներ այդ գիրքը իրենց լեզվով:

Էրիկի տուն վերադառնալուց վեց ամիս առաջ, ժամանեց Մորմոնի Գրքի սլովեներեն օրինակների առաջին առաքումը: Ճյուղը ժողով անցկացրեց, որի ժամանակ բոլոր անդամները և միսիոներները ստացան իրենց օրինակները: «Օդի մեջ առանձնահատուկ ոգի կար», - հիշում է Էրիկը: Իր օրագրում նա գրեց, թե ինչ զգացումներ ուներ, երբ ձեռքում պահել էր այդ երկար սպասված թանկարժեք գիրքը: «Կարծես, ես իմ ձեռքում պահել էի հենց ոսկե թիթեղները», - գրեց նա: Ժողովից հետո, միսիոներները վերցրեցին մնացած օրինակները՝ միսիոներական աշխատանքում դրանք օգտագործելու համար: Էրիկը և նրա զուգընկերը այնքան ոգևորված էին, որ բնակարան հասնելուն պես, նրանք բացեցին արկղները, գրքերը շարեցին հատակին և



ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Ես չեմ կարող հասկանալ, ինչպես կարող է խելացի մարդը մտածել, որ ինչ-որ մեկը՝ առանց Տիրոջ օգնության, կարող էր գրել Մորմոնի Գիրքը, որն այժմ մեզ հետ է արդեն ավելի քան հարյուր տարի և դիմացել է փորձությունների այդ ողջ ժամանակի ընթացքում, չնայած այն ծաղրանքներին, որոնց արժանացել է այս կամ այն պատճառով: Այսօր այդ գիրքը, որը Ջոզեֆ Սմիթի կողմից թարգմանվել է որպես Տիրոջ ձեռքում գործիք, գերիշխում է: Այն այսօր մեր մեծագույն միսիոներն է՝ այս ավետարանը քարոզելու համար. ոչինչչի կարող է համեմատվել դրա հետ»:

President Heber J. Grant (1856–1945), *Gospel Standards*, comp. G. Homer Durham (1941), 15.

Թարգմանության աշխատանքի ծավալման հետևանքով, անդամները ողջ աշխարհում, ինչպես օրինակ՝ Լիա և Ֆլորա Լոտրիկները Սլոբենիայում, ուրախություն են ապրում, առաջին անգամ բռնելով ձեռքում իրենց մայրենի լեզվով Մորմոնի Գրքի օրինակը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԷՐԻԿ ԳԵՄՄԵԼԻ ԿՈՐՈՒՄԻՑ

ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Գրքի մեջ մի զորություն կա, որը սկսում է թափանցել ձեր կյանք այն պահից, երբ դուք սկսում եք այդ գրքի լուրջ ուսումնասիրությունը: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ գայթակղությանը դիմակայելու համար: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ խաբեությունից խուսափելու համար: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ ուղիղ ու անձուկ արահետի վրա մնալու համար»:

President Ezra Taft Benson (1899–1994), "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 4; նաև այս համարում՝ էջ 52:

լուսանկարեցին՝ այդ իրադարձությունը հիշելու համար: Նրանք չէին համբերում, թե երբ էին կիսվելու գրքերով մարդկանց հետ: Ունենալով սլովեներեն Մորմոնի Գիրքը, միսիոներները ավելի մեծ հաջողություններ էին ունենում՝ մոտենալով մարդկանց, բացի դա, հնարավորություն էին ունենում ամրացնելու քիչ ակտիվ անդամների վկայությունները, որոնք տարիներ շարունակ եկեղեցի չէին եկել:

Իր միսիայի վերջին վեց ամիսների ընթացքում, Էրիկը ականատես եղավ Սլովենիայի անդամների վկայությունների ծաղկմանը; «Երբ նրանք ունեցան Մորմոնի Գիրքը իրենց մայրենի լեզվով, - ասում է նա, - նրանք իսկապես հասկացան այն: Այն խորը ներթափանցեց նրանց սրտերը»: Նախկինում, Եկեղեցու ժողովներին խոսնակները և ուսուցիչները ստիպված էին կարդալ սուրբ գրությունները սերբերեն-խորվաթերեն և որևէ մեկը թարգմանում և բացատրում էր խոսքերը: «Ինձ թվում էր, թե մենք կաղելով առաջ էինք գնում՝ օգտվելով այլ լեզվից պարտքով վերցրած խոսքերից», - հիշում է Էրիկը: Երբ անդամները սկսեցին կարդալ Մորմոնի Գիրքը իրենց լեզվով, ինչպես ասում է Էրիկը, «ավետարանի մասին նրանց հասկացողությունը անմիջապես աճեց»:

Իրենց լեզվով

Մոժկա Ժելեզնիկարը այն անդամներից մեկն է, ովքեր միացել են Եկեղեցուն Սլովենիայում դեռ այն ժամանակ, երբ Մորմոնի Գիրքը դեռ մատչելի չէր սլովեներենով: Ավետարանի մասին նրա վկայությունը ձեռք էր բերվել միսիոներներին լսելու և Մորմոնի Գիրքը խորվաթերենով և անգլերենով ուսումնասիրելու արդյունքում: Երբ սլովենական թարգմանությունն ավարտվեց, Մոժկան կարդաց թարգմանված տեքստը և զգաց խոսքերի զորությունը իր մայրենի լեզվով: «Ես զգացի, ինչպես ճշմարտությունը բացվեց իմ առաջ՝ իր պարզությամբ և խորը մաքրությամբ», - հիշում է նա: «Դա նման էր Իմ Արարչի ձայնին, որը խոսեց ինձ հետ իմ մայրենի լեզվով, որով ինձ հետ խոսել է իմ մայրը»:

Աշխարհով մեկ անդամները նույն զգացումներն են ունենում, երբ ստանում են Մորմոնի Գիրքը իրենց լեզվով: 2003թ., երբ Մորմոնի Գիրքը թարգմանվեց կեկչի լեզվով, որով խոսում է Մայայի ժողովուրդը Գվատեմալայում և Բելիզում, թարգմանիչները ստուգեցին թարգմանությունը տեղացի անդամերի օգնությամբ: Թարգմանիչներից մեկը հիշում է. «Կարդալու համար մենք հավաքել էինք պիոներ անդամների մի խումբ Սենահու հավաքատանը և ամեն պարբերությունը կարդալուց հետո սենյակում հարգալից լռություն էր տիրում: Հասկացողությունը

Թարգմանության աշխատանքի ավարտից հետո, Եկեղեցու անդամներին, ովքեր խոսում են տվյալ լեզվով, խնդրում են կարդալ տեքստը: Ձախից. Վոլտեր Բարիլլա Սոտոն, Մայք Փեքը, Սալենի Ռուբի Քուքուլ Սյերան, Ջոն Բրինգհարսթը և Ջոզեֆինա Քուքուլ Թիուլը կարդում են Մորմոնի Գիրքը կեկչի լեզվով Կոբանում՝ Գվատեմալա:



ՄԱՐԳԱՐԵՆ ՎԿԱՅՈՒՄ Է

«Աստծո պարգևով և զորությամբ [Ջոզեֆ Սմիթը] սկզբնաղբյուրից և ոսկե թիթեղների փորագրություններից թարգմանել է այս գիրքը (Մորմոնի Գիրքը) մի լեզվով, որով մենք այժմ կարդում ենք այն. և այն պարունակում է հավերժական Ավետարանի լրիվությունը: Այն կտանի մարդկանց դեպի ճշմարտության գիտելիքը, որով նրանք կարող են փրկվել և ետ բերվել կրկին՝ Աստծո ներկայություն, և ճաշակել Նրա փառքից և անվերջ կյանքից»:

President Joseph F. Smith (1838–1918), *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 42.

լիարժեք էր և Հոգին՝ զորեղ: Դա սուրբ փորձառություն էր»:

Այդ ժողովին մասնակցած անդամներից մեկը՝ Էլվիրա Տզին, շնորհակալ է Մորմոնի Գրքի կեկչի թարգմանության համար, որովհետև այն բերում է օրհնություններ աճող սերնդին: Նա ասում է, որ թարգմանությունը թույլ կտա երիտասարդ անդամներին «խորապես հասկանալ Տիրոջ աշխատանքը և հարգել այն, ինչ Տերը պահանջում է»:

Մորմոնի Գիրքը իրենց լեզվով ուսումնասիրող անդամների համար այն անհամար օրհնությունների աղբյուր է: Երբ անդամները «աղոթքով ուսումնասիրում և ուսուցանում են սուրբ գրությունները, - ասում է Առաջին Նախագահությունը, - նրանց վկայությունները աճում են, նրանց գիտելիքը խորանում է, ընտանիքի և մյուսների հանդեպ նրանց սերը մեծանում է, ուրիշներին ծառայելու նրանց ունակությունը աճում է, և նրանք ստանում են ավելի մեծ ուժ՝ գայթակղությանը դիմակայելու և ճշմարտությունն ու արդարությունը պաշտպանելու համար»:[1]

Հեռու գնացող օրհնություններ

Առատ օրհնությունները, որ Մորմոնի Գիրքը բերում է նրանց կյանք, ովքեր այն ուսումնասիրում են, մեծ ցանկություն են առաջացնում կիսվելու գրքով ուրիշների հետ, այդպիսով, շարունակելով իրականացնել մարգարեությունը: Ամեն տարի Մորմոնի Գրքի մոտ չորս միլիոն օրինակ տարածվում է աշխարհով մեկ՝ 100 լեզուներով, շնորհիվ նրա, որ մեկ առ մեկ անդամները և միսիոներները կիսվում են Հիսուս Քրիստոսի մասին իրենց վկայություններով: «Իմաստուն նպատակը», որի մասին խոսել է Ալման հին ժամանակներում, ի հայտ է գալիս Մորմոնի Գրքի համաշխարհային տարածման և յուրաքանչյուր կյանքի մեջ, որն այն փոխում է: ■

ՀՂՈՒՄ

1. First Presidency letter, Oct. 15, 2008.

ՄԱՏՉԵԼԻ ՁԵՎԱՉԱՓԵՐԸ

Մորմոնի Գիրքը, տպագրված տեքստից բացի, մատչելի է նաև այլ ձևաչափերով, որոնք հարմարեցված են ուսումնասիրելու և սովորելու մարդկանց նախընտրած եղանակներին:

Համացանց և շարժական կապի հրատարակություններ

Մորմոնի Գիրքը այժմ կարելի է կարդալ համացանցում՝ (scriptures.lds.org) կայքում և շարժական կապի սարքերում՝ (mobile.lds.org) հասցեով: Ներկայումս, համացանցում այն տրված է 21 լեզուներով և սպասվում են թվով ավելի շատ լեզուներ: Առցանց խաչաձև հղումները և որոնման հնարավորությունները թույլ են տալիս ուսումնասիրել սուրբ գրությունները այլ եղանակով, արդյունքում ունենալով նոր ներշնչումներ:

Աուդիո հրատարակություններ

Ներկայումս, գոյություն ունեն Մորմոնի Գրքի աուդիո հրատարակումները անգլերեն, ճապոներեն, կորերեն, պորտուգալերեն և իսպաներեն: Դուք կարող եք անվճար ներբեռնել ձայնագրությունները scriptures.lds.org կայքից կամ գնել ձայնասկավառակներ Բաշխման ծառայություններից՝ (store.lds.org) հասցեով: Առանձին գլուխները մատչելի են նաև ձայնասկավառակային տարբերակով հետևյալ լեզուներով. կակչիքել, մամ, նավաջո, քիշ և տզոտզիլ: Այլ լեզուներով աուդիո հրատարակման աշխատանքները շարունակվում են:

Այլ հրատարակություններ



Գունազարդ նկարներով և պարզեցված տեքստով *Մորմոնի Գրքի Պատմությունները* տեսողական ուսումնասիրության նյութ է հանդիսանում նրանց համար, ովքեր սովորում են կարդալ: Այն տպագրված է 70 լեզուներով: *Մորմոնի Գրքի Պատմությունները* մատչելի է նաև առցանց՝ scripturestories.lds.org: Բաշխման Ծառայությունների միջոցով մատչելի են նաև՝ DVD սկավառակների հավաքածու ամերիկյան նշանների լեզվով, խոշոր տպված տարբերակ (անգլերեն, պորտուգալերեն և իսպաներեն), և English Braille հրատարակությունը:

ՎԵՐԾԱԿՈՒՄ ՁԱԽԻՑ. ԸՆԿԱՍԱԹ ՖՈՏՈԳՐԱՖԻ: ՆԵՐՔԵՎՈՒՄ: ԼՈՍԱՆԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ
ՏԱՐԱԾՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Ընկերներից, ընտանիքից, իսկապես հետաքրքրվածներից կամ հակառակորդներից՝ մենք բոլորս հարցեր ենք ստանում Մորմոնի Գրքի մասին: Սիա մի քանի հնարավոր պատասխաններ:

Ի՞նչ է Մորմոնի Գիրքը և ինչպե՞ս է այն համեմատվում Աստվածաշնչի հետ:

Մորմոնի Գիրքը սուրբ գրությունների գիրք է, ինչպես Աստվածաշունչը: Այն մեկ այլ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին:[1] Աստվածաշունչը, հիմնականում, պատմում է հին Իսրայելի կյանքի և ուսմունքների մասին: Մորմոնի Գիրքը պարունակում է մի քանի խմբերի գրվածքները, որոնք եկել են Ամերիկա մայր ցամաք, ներառյալ՝ մի ընտանիքի, որը հեռացել է Երուսաղեմից մ.թ.ա. 600 թվին: Այդ մարդիկ նույնպես Իսրայելի տան ժառանգներ էին: Այսպիսով, Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը գրվել են նույն ժառանգությունն ունեցող մարդկանց կողմից, սակայն աշխարհի տարբեր մասերում:

Աստվածաշնչի պես, Մորմոնի Գիրքը միայն պատմական գրառում չէ: Այն պարունակում է «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (ՎԱՌԻ 20.9): Ուսմունքներ, վարդապետություններ և մարգարեություններ, որոնք վկայում են Հայր Աստծո և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի մասին:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է, որ Մորմոնի Գիրքը մեզ պատմում է, որ Հարությունից հետո Փրկիչը հայտնվեց այս մայր ցամաքում [Ամերիկաներում], որ Նա այնտեղ սերմանեց Ավետարանը՝ իր ողջ լրիվությամբ, հարստությամբ, զորությամբ և օրհնությամբ, որ նրանք ունեին Առաքյալներ, Մարգարեներ, Հովիվներ, Ուսուցիչներ և Ավետարանիչներ, նույն կարգը, նույն քահանայությունը, նույն ծեսերը, պարգևները, զորությունները և օրհնությունները, որոնք ուներ արևելյան մայր ցամաքը, . . . որ նրանց մեջ եղած մարգարեներից վերջինը պատվիրան ստացավ գրելու իրենց մարգարեությունների, պատմության և այլ իրադարձությունների համառոտ ակնարկը, և պահել այն հողի մեջ, և որ այն պետք է առաջ բերվեր և միանար Աստվածաշնչին՝ վերջին օրերին Աստծո նպատակները իրականացնելու համար»:[2]

Եկեղեցու անդամները ուսումնասիրում են և Աստվածաշունչը, և Մորմոնի Գիրքը: Փաստացի, մեր կիրակնօրյա դպրոցի ծրագրի չորս տարիներից երկուսը նվիրված են Աստվածաշնչի ուսումնասիրությանը:

Ո՞վ է տեսել ոսկե թիթեղները:

(Այս թեմայով լրացուցիչ տեղեկության համար, տես այս համարի էջեր 16, 24 և 52:)

Ո՞վ է գրել Մորմոնի Գիրքը:

Հին օրերի մարգարեները՝ Նեփին, Հակոբը, Մորմոնը և Մորմոնի որդի՝ Մորոնին, հանդիսանում են գրքի հիմնական հեղինակները: Մորմոնը հավաքել և կրճատել է գրառումները, որոնք պարունակում են մարգարեների պատմությունը, մարգարեությունները և ուսմունքները: Նա նաև ներառել է իր սեփական փորձառությունները: Մորմոնը փորագրել է այդ գրառումները իրար միացած ոսկեգույն մետաղե թիթեղների վրա, որոնց հաճախ անվանում են ոսկե թիթեղներ:

Մորմոնի մահից հետո, Մորոնին ավարտեց գրառումը և թաղեց այն մի բլրի վրա՝ մեր օրերի համար: 1823թ. Մորոնին հրեշտակի տեսքով հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և ցույց տվեց նրան, թե որտեղ է թաղված գրառումը: Չորս տարի անց, Ջոզեֆին թույլ տրվեց վերցնել գրվածքները: Հին լեզվից, որով այն գրված էր, նա՝ Աստծո պարգևով և զորությամբ թարգմանեց գրառումը անգլերեն:[3] Ապա նա հրատարակեց և բաժանեց Մորմոնի Գիրքը: (Այս թեմայով լրացուցիչ տեղեկության համար, տես այս համարի էջեր 22 և 72:)

Ի՞նչ պատահեց գրառումների բնօրինակի՝ ոսկե թիթեղների հետ:

Ջոզեֆ Սմիթը ստացավ թիթեղները 1827թ. սեպտեմբերին, դրանք նրա մոտ էին մինչև 1829թ. գարունը: Երբ նա գրեց իր պատմությունը 1838թ., նա բացատրեց, թե ինչ պատահեց թիթեղների հետ. «Երբ, ըստ պայմանավորվածության, Մորոնի սուրհանդակը եկավ դրանց ետևից, ես տվեցի դրանք նրան, և դրանք նրա մոտ են մինչ այս օրը՝ հազար ութ հարյուր երեսունութ թվի մայիսի երկրորդ օրը» (տես Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.60):

Ո՞վ է տեսել ոսկե թիթեղները:

Բացի Ջոզեֆ Սմիթից, մի քանի այլ տղամարդիկ և կանայք տեսան թիթեղները և վկայեցին դրանց գոյության մասին: Մասնավորապես, տասնմեկ տղամարդ, որոնք հայտնի են որպես Երեք Վկաներ և Ութ Վկաներ, գրի են առել թիթեղները տեսնելու մասին իրենց վկայությունները, մինչդեռ՝ Ութ Վկաները

պահել են թիթեղները իրենց ձեռքերում: Նրանց վկայությունները ներառված են Մորմոնի Գրքի սկզբում:

Այս տղամարդիկ հանդիսանում են Մորմոնի Գրքի զորեղ վկաներ, և մի գուցե նրանց վկայությունն այդքան կարևոր է, քանի որ որոշ ժամանակով նրանցից մի քանիսը «թշնամացել էին Ջոզեֆի դեմ», հաստատում է Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից: Ինչևէ, նրանք «վկայեցին մինչև մահ, որ տեսել են հրեշտակին, որը տվել է թիթեղները: Ըստ նրանց խոսքերի, դրանք ցույց են տրվել իրենց Աստծո, ոչ թե՝ մարդու զորությամբ, և, հետևաբար, նրանք վստահությամբ գիտեին, որ այդ աշխատանքը ճշմարիտ էր»:[4]

Կա՞ որևէ նյութական ապացույց Մորմոնի Գրքի ճշմարտության վերաբերյալ:

Թեև մեր հավատքը չի հիմնվում ֆիզիկական ապացույցի վրա, գոյություն ունեն լեզվաբանական, պատմական և հնագիտական ապացույցներ: Օրինակ, մետաղական թիթեղների վրա գրելու գաղափարը ժամանակին ծաղրի է ենթարկվել, սակայն վերջին տարիներին՝ հայտնաբերվել են մետաղական թիթեղների վրա գրված սուրբ գրությունների բազմաթիվ օրինակներ, որոնցից որոշները պահված են եղել քարե արկղների մեջ:

Լեզվաբանները նշում են, որ Մորմոնի Գրքի խոսքերը և արտահայտությունները, որոնք տարօրինակ են հնչում անգլերեն, ինչևէ, կատարելապես իմաստալից են եբրայերենով և նման լեզուներով, որոնց, հավանաբար, տիրապետում էին Մորմոնի Գրքի ժողովուրդները, մինչդեռ երիտասարդ Ջոզեֆ Սմիթը չէր իմանում այդ լեզուները:

Սակայն այս տեսակի ապացույցները չեն, որ համոզում են մեզ Մորմոնի Գրքի ճշմարտության մեջ: Դա հավատքի և անձնական հայտնության խնդիր է:

Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

Դա իմանալու միակ վստահելի եղանակը Սուրբ Հոգու զորությամբ է: Մորմոնի Գրքի վերջին գլուխը հրավիրում է ցանկացած անձի, ով կարդում է այն, խորհում դրա մասին և անկեղծ ցանկություն ունենում իմանալու, թե արդյոք այն ճշմարիտ է, հարցնել Երկնային Հորը՝ Հիսուս Քրիստոսի անունով: Նրանք, ովքեր ընդունում են այս մոտեցումը, կիմանան Սուրբ Հոգու զորությամբ, որ գիրքը ճշմարիտ է (տես Մորոնի 10.3–5): Եկեղեցու միլիոնավոր անդամներ աղոթել են և Սուրբ Հոգու վկայությամբ իմացել են, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: (Այս թեմայով լրացուցիչ տեղեկության համար, տես այս համարի էջեր 4, 60 և 80:)

ԱՎԵԼԻՆ ՇԱՏ ՍՈՎՈՐԵԼ ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Գոյություն ունի լայնածավալ տեղեկություն առցանց՝ տարբեր լեզուներով, որը կարող է օգնել ավելին սովորել Մորմոնի Գրքի մասին և կիսվել այդ տեղեկությամբ ընտանիքի և ընկերների հետ:

- Առցանց Մորմոնի Գիրքը կարդալու համար, այցելեք scriptures.lds.org/bm:
- Մորմոնի Գրքի մասին ավելին սովորելու, հարցեր տալու և միսիոներների համար զրուցելու համար, այցելեք mormon.org/book-of-mormon:
- Անվճար օրինակ պատվիրելու համար, այցելեք mormon.org/free-book-of-mormon:
- Լրացուցիչ տեղեկության, հոդվածների և բացատրությունների համար, տես lds.org/study/topics/book-of-mormon?lang=eng:

Ինձ շփոթեցնում է Հայտնություն ԻԲ.18–19-ը, որն ասում է, որ Աստծո խոսքին մենք չպետք է ոչ մի բան ավելացնենք:

Հիմնական համոզմունքներից մեկն այն է, որ Աստված միշտ հայտնել է Իր կամքը երկրի վրա Իր զավակներին, և միշտ կանի դա: Մենք հավատում ենք, որ Աստվածաշունչը Աստծո խոսքն է, սակայն չենք հավատում, որ այն պարունակում է բոլոր հայտնությունները, որ Աստված տվել է կամ կտա Իր մարգարեներին: Անգամ այսօր, Նա շարունակում է հայտնել Իր կամքը՝ ապրող մարգարեների և առաքյալների միջոցով, որոնք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հիմքն են կազմում (տես Եփեսացիս Բ.20):

Երբ Հովհաննես Առաքյալը գրեց Հայտնության գիրքը, այն Աստվածաշնչի վերջին գիրքը չէր: Հին և Նոր Կտակարանները մինչև մ.թ. երրորդ դարը չէին կազմում սուրբ գրությունների մեկ գիրք, որն այժմ կոչվում է Աստվածաշունչ:

Նույն ձևով, Երկրորդ Օրինաց Դ.2 մեզ ասում է չավելացնել Մովսեսի

խոսքերին: Իհարկե, այս հատվածը՝ Հին Կտակարանի առաջին մասերում, չի արժեքազրկում ամբողջ Աստվածաշունչը: Ոչ Մովսեսը, ոչ էլ Հովհաննեսը, չէին կարող խոսել մի հատորի փոփոխության մասին, որը դեռ գոյություն չուներ. Նրանք նախազգուշացնում էին ավետարանի ճշմարիտ ուսմունքները փոփոխելու մասին:

Մորմոնի Գիրքը, որը պարունակում է ավետարանի լրիվությունը, չի փոխում Աստծո խոսքը, այլ հաստատում է այն: (Այս թեմայով լրացուցիչ տեղեկության համար, տես այս համարի էջեր 24 և 38:)

Ես լսել եմ, որ Մորմոնի Գրքի առաջին հրատարակությունից հետո այն փոփոխվել է: Ի՞նչ է փոփոխվել և ինչո՞ւ:

Այս հարցի պատասխանը կախված է Մորմոնի Գրքի թարգմանության և տպագրության գործընթացի մասին մի քիչ գիտելիք ունենալուց:

1. Երբ Ջոզեֆ Սմիթը Աստծո զորությամբ թարգմանում էր ոսկե թիթեղներից, նա թելադրում էր խոսքերը դպիրին: Դպիրները, խոսքերը գրի առնելիս, երբեմն տառասխալներ և քերականական սխալներ են անում: Օրինակ, 1 Նեփի 7.20-ում «were sorrowful» (վշտացած էին) գրի են առվել որպես «ware sarraful»: Դպիրները անգրագետ չէին, սակայն այն ժամանակ ուղղագրությունը դեռ ստանդարտացված չէր:

2, Թարգմանության բնօրինակ ձեռագիրը, այնուհետև, արտագրվում էր՝ տպագրության համար նոր ձեռագիր պատրաստելու համար: Այդ փուլում, ուղղվում էին որոշ տառասխալներ և քերականական սխալներ, և ավելացվում էր կետադրությունը: Սակայն նաև առաջանում էին նոր սխալներ, քանի որ խոսքերը սխալ էին արտագրվում:

3. Տպագրիչը աշխատում էր ճշգրիտ դասավորել տպատառերը: Սակայն, երբեմն, նա նույնպես սխալներ էր ավելացնում; Օրինակ, Ալմա 57.25-ում, նա «joy» բառը սխալ է կարդում և տպագրում որպես «foes»:

4. Մարգարե Ջոզեֆ Սմիթը ուշադիր կարդաց Մորմոնի Գրքի առաջին երեք հրատարակումները և շարունակում էր օգնել բարելավել և շտկումներ մտցնել: Սակայն, որոշ սխալներ հայտնաբերվեցին միայն վերջին հրատարակություններում: 1981թ. տպագրիչի սխալը Ալմա 16.5-ում վերջապես ուղղվեց, փոխելով «whether» բառը «whither»-ով—, այսպիսով համապատասխանեցնելով բնօրինակին, ինչպես Մարգարեն թարգմանել էր ոսկե թիթեղներից:

5, Մյուս փոփոխությունները ներառել են գլուխների և հատվածների միջև տարածությունները և էջի ստորին ծանուցումները՝ խաչաձև վկայակոչումների հետ միասին:

Ինչպե՞ս ես կարող եմ իմանալ թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

Կիսվեք օրինակով

Անկախ նրանից, թե ինչ հարցեր են տալիս մարդիկ Մորմոնի Գրքի մասին, գիրքն ինքն իր լավագույն պաշտպանն է: Դուք կարող եք վկայել գրքի մասին, կիսվել դրա օրինակով և հրավիրել մյուսներին աղոթել դրա համար: Եթե անձը անկեղծ սիրտ ունի և իսկապես ցանկանում է իմանալ, թե արդյոք գիրքը ճշմարիտ է, Տերը «կհայտնի ճշմարտությունը» նրան «Սուրբ Հոգու զորությամբ» (Մորոնի 10.4): ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. ֆես, օրինակ, Boyd K. Packer, “The Book of Mormon: Another Testament of Jesus Christ,” *Liahona,* Jan. 2002, 71:
2. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 64.
3. *Teachings: Joseph Smith,* 71.
4. Jeffrey R. Holland, “Safety for the Soul,” *Liahona,* Nov. 2009, 90.

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ՈՒԽՏ ԵՎ ՎԿԱ

Երեց
Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների
Քվորումից

Սուրբ համոզմունքները, որոնք ես ձեռք եմ բերել Փրկչի և Նրա վերականգնված Եկեղեցու մասին, առաջին անգամ զգացել եմ, երբ կարդացել եմ Մորմոնի Գիրքը: Այդ սուրբ գրությունը կարդալու ընթացքում էր, որ ես կրկին ու կրկին զգացի Սուրբ Հոգու անմերժելի շշնջոցը, որը հայտարարում էր իմ հոգուն դրա ճշմարտության մասին:

Գիրքը կարդալը իմ լույսի սկիզբն էր: Այն իմ առաջին հոգևոր վստահության աղբյուրն էր առ այն, որ Աստված ապրում է, որ Նա իմ Երկնային Հայրն է և որ երջանկության ծրագիրը հավերժության մեջ նախագծվել է ինձ համար: Այն օգնեց ինձ սիրել Սուրբ Աստվածաշունչը և Եկեղեցու մյուս կանոնիկ աշխատությունները: Այն սովորեցրեց ինձ սիրել Տեր Հիսուս Քրիստոսին, տեսնել Նրա գթասիրտ կարեկցանքը և ըմբռնել Նրա քավող զոհաբերության գեղեցկությունը և փառավորությունը:

Քանի որ ես ինքս եմ իմացել, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ վկայություն է՝ ևս մեկ վկայություն և նոր ուխտ, որ Հիսուսը Քրիստոսն է, ես նաև սովորեցի, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր և մարգարեն է: Ինչպես ասել է իմ նախա-նախա-նախապապը Վերականգնման վաղ օրերին. «Ամբարիշտ մարդը չի կարող գրել այսպիսի գիրք, իսկ լավ մարդը չէր գրի այն, եթե այն ճշմարիտ չլիներ, և եթե նրան չպատվիրեր դա անել Աստված»:[1]

Իմ առաջին համոզմունքին գումարվեցին բոլոր մյուս պահերը և սրբագործող հայտնությունները, որոնք այսօր իմ օրերին մեծ իմաստ են հաղորդում, նպատակ պարգևում կյանքում և կազմում իմ վկայության կայուն հիմքը:

Ես վկայություն եմ բերում, որ Մորմոնի Գիրքը նոր ուխտ է, նոր վկայություն՝ Նոր Աշխարհից ամբողջ աշխարհին:

Ես չեմ նավարկում Հարեղի եղբոր հետ: Ես չեմ լսել Բենիամին Թագավորի քարոզը, որը նա հրեշտակի նման է մատուցել: Ես Նեփիացիների մեջ չէի, երբ նրանք դիպչեցին հարություն առած Տիրոջը, ոչ էլ լաց էի լինում Մորմոնի և Մորոնիի հետ՝ քաղաքակրթության կործանման համար: Սակայն իմ վկայությունը այս հիշատակարանի և այն խաղաղության համար, որ այն պարգևում է մարդկային սրտին, որը տրվել է ինձ Սուրբ Հոգու հուշումներով, ինչպես ձեզ է տրվել, նույնքան կապող և անսասան է, ինչպես իրենցն էր: Ես վկայում եմ այս գրքի մասին այնպիսի վստահությամբ, կարծես, Երեք Վկաների հետ միասին տեսել եմ Մորոնի հրեշտակին, կամ՝ Ութ Վկաների հետ իմ ձեռքում բռնել եմ ոսկե թիթեղները:

Ես նաև վկայում եմ, որ մեզանից ոչ մեկ չի կարող գալ լիարժեք հավատքի այս վերջին օրերի աշխատանքի վերաբերյալ և գտնի խաղաղության և մխիթարության ամբողջական բաժինը, եթե չընդունի Մորմոնի Գրքի և Տեր Հիսուս Քրիստոսի աստվածային բնույթը, ում մասին այն վկայում է: Ինչպես ասել է Մորմոնը Մորոնիին՝ ամենադժվար պահերից մեկի ժամանակ, այդպես էլ ես եմ ասում ձեզ մեր դժվար ժամանակներին. «Հավատարիմ եղիր Քրիստոսին: . . . Եվ թող շնորհը Հայր Աստծո, որի գահը բարձր երկինքներում է, և Տեր Հիսուս Քրիստոսի, որը նստում է նրա զորության աջ կողմում, . . . լինի և մնա քեզ հետ հավիտյան» (Մորոնի 9.25–26):

Մորմոնի Գիրքը սուրբ արտահայտում է մարդկության հետ Քրիստոսի մեծ և վերջին ուխտի: Այն նոր ուխտ է, նոր վկայություն՝ Նոր Աշխարհից ամբողջ աշխարհին: Լույսը, որով ես քայլել եմ, Նրա լույսն է: Նրա ողորմությունը և մեծությունը ղեկավարում է ինձ և ձեզ, մինչ մենք վկայում են Նրա մասին աշխարհին: ■

ՀՂՈՒՄ

1. George Cannon, quoted in “The Twelve Apostles,” in Andrew Jenson, ed., *The Historical Record,* 6:175.

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ, ԳՐԵԳ Կ. ՕԼՍԵՆ

Եվ նա բժշկեց նրանցից ամեն մեկին, Գարի Քափ

«Ունե՞ք ձեր մեջ այնպիսիք, որ հիվանդ են։ Բերեք նրանց այստեղ։ . . .

Քանզի ես տեսնում եմ, որ ձեր հավատքը բավարար է, որ ես բժշկեմ ձեզ։

Եվ եղավ այնպես, որ երբ նա այսպես խոսեց, ողջ բազմությունը, միահամբված զնաց առաջ իրենց հիվանդներով և իրենց չարչարվածներով, իրենց կաղերով և իրենց կույրերով և իրենց խուլերով, և բոլոր նրանց հետ, որոնք չարչարված էին ինչ-որ ձևով. և նա բժշկեց նրանցից ամեն մեկին, երբ նրանք առաջ բերվեցին նրա մոտ» (3 Նեփի 17.7–9)։



«Եվ այժմ… բոլոր աշխարհի ծայրեր, լսեք այս խոսքերը և հավատացեք Քրիստոսին. և եթե դուք չեք հավատում այս խոսքերին, հավատացեք Քրիստոսին: Եվ եթե դուք հավատաք Քրիստոսին, դուք կհավատաք այս խոսքերին, քանզի դրանք Քրիստոսի խոսքերն են, և … դրանք սովորեցնում են բոլոր մարդկանց, որ նրանք պետք է բարիք անեն:

Եվ եթե դրանք Քրիստոսի խոսքերը չեն, ինքներդ դատեք, քանզի վերջին օրը Քրիստոսը ցույց կտա ձեզ, զորությամբ և մեծ փառքով, որ դրանք իր խոսքերն են» (2Նեփի 33.10-11):

ARMENIAN
4 020096 902013